Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9
√84
470
471
472

1999

Գ
472

ՎՐԹԱՆԷՍ ՓԱՓԱԶԵԱՆ

ՍԱՆԹՕ

« Զուրին ձոկ — հիվը կ' ուչարկ ... »
« Սրին ապաւինիր — նա կը պահպանէ. »

(Հայ բոցայական առած)

ՍԱՆԹՕ
ՄԻ ՊԱՏԿԵՐ
ԽԱԹ - ՍԱԲԱ

ՄԱՏԵՆԱՇԱՐ ԱԶԴԱԿ ԹԻՒ 6

Հրատարակութիւն
ԱՐՇԻՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅԻ

1910
Կ. ՊՈԼԻՍ

Տպարան ՍԱՆՃԱԳԱՆԱՆ. — Պապը Ալի ճաշտէսի 38, Կ. Պոլիս

2ф-94

ՊԵՏ. ԿԱՌ. ԳՐԱԴԱՐԱՆ
Г. С. ЕРЕВАНСКАЯ
ՀԱՍՌ-ԱՐՄ ССР
Ա. ՍԱՍ. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏ.

472-79

ՍԱՆԹՈ

« Զուրին ձոկ — հիվը կ' ուչարկ ... »
« Սրին ապաւինիր — նա կը պահպանէ »
(Հայ բոշայական առած)

I

Ի՜նչ փոշի !...

Շարժուն, հետզհետէ թանձրացող մշուշի պէս բարձրանում է անա զեանի զանազան կողմերից, պտոյտներ գործելով ու թաւալելով սիւնակներ կազմում, միմեանց վրայ նետվում և ապա ցրուելով տարածվում է ճանապարհի վրայ ու ամէն ինչ ծածկում իւր մէջ։ Իսկ ոտքը, մոծակներն ու մժղուկները, ճանճերն ու բզէզները — որոնք միմեանց խառնուած կլիսվում են ծառերի տակ և հէնց որ փոշին լուծվում է, խուժում են դէպի ճանապարհորդները !...

Այդ ժամանակ էր անա, որ հայ բոշաների մի խումբ արագութեամբ քայլում էր դէպի Պոյատաա աւանը, մտած փոշու և մժղուկների մէջ։

Խումբը բաղկացած էր նախ երեք էշերից, որոնք Գլխիկոր, երկայնամիտ ականջները միայն շարժելով մոծակների դէմ, կրում էին իրենց վրայ հասակաւոր կանայք, զաւակներին մի մի կիսամերկ երեխայ։ Իսկ կողքերից, պայուսակի աչքերի մէջ՝ երկաւական մանուկ-

ներ, որոնք իրանց մաղում ու փոչում գլուխները չարժում էին՝ քաշ ընկած մազերի տակից։

Էշերի ետևից խմբովին գնում էին ուրիշ երկու մանկահասակ կանայք և չորս տղամարդ։ Բոլորն էլ բեռնաւորուած տոպրակներով, մաղերով և գինուած մեծ ցուպերով. բոլորն էլ փոչոտ, յոգնած և արեւակէզ։

Լուռ էին. երբեմն միայն մէկը մի խօսք էր նետում միւսին կամ մի ուրիշը քաջալերում էր էշերին՝ առանց զարնելու, փաղաքշական ձայնով. երբեմն էլ մանուկներից մէկն ու մէկը գլուխը յանկարծ դուրս էր ցցում պայուսակից և գոչում.

—Պանի՛ !... (Ջուր)։

—Համբերի՛ր, խփում էր նրա գլխին, էշի վրայ նստած տատը կամ մայրը. Ջուր չկայ դեռ։

Շրջակայքում ծառերը կորել էին փոչու տակ. Ջրի ո՛չ մի նշոյլ չէր երևում։ Եւ փոչին պահ մի սկսում էր թանձրանալ այնքան, որ շարժուել անհնար էր լինում։

—Կանգ առնենք, Սրգո՛, ձայնեց էշերից մէկի վրայ նստած պառաւը. էլ գնալ չէ կարելի։

—Ջուր չկայ, դե՛ղ (մայր), խօսեց ետևից գնացող տղամարդերից երկարահասակը. ո՞րտեղ կանգ առնենք։

—Այ, այն հեռաւոր ծառերի տակ,—մէջ մտաւ մի երկրորդ կին։

—Քշէք, քշէ՛ք, ասաց մի տղամարդ. քիչ յետոյ ձորն ենք հասնելու. այնտեղ ծառ էլ կայ, ջուր էլ։

Եւ իրաւ, երբ փոչին իջաւ, հեռւում երևաց լեռնոտ ձորաբերանը։ Փոչին այժմ ետ էր գնում. անցել էին նրա սահմանը. քամին ուղղութիւնը փոխեց, կանայք թօթափուեցին ու մի թեթև զով քամի պարզեց բոլորի փոքրացած աչքերը։

Այն ժամանակ վերջին խօսող տղամարդը ցուպը դրեց վզի վրայ, ձեռքերով բռնեց նրան ու սկսեց երգել։ Նրան միացաւ մի ուրիշը, ապա մի կին և քիչ-քիչ ամբողջ խումբը։ Կանանցից մէկը սուր ձայնով մի քանի մինոր խազեր հանեց կոկորդից և կին ու տղամարդ միաձայն՝ հնչեցրին մի նորանշան, տխուր և կծու եղանակ, որ սկսում էր կիսաձայնից, վերջանում կիսաձայնով և որ՝ նման դէպի օդը նետուած դոպանակի՝ վժժում էր նախ սուր, յետոյ հաստ, ապա մեղմանում էր, մարում և կարծես դոփիւնով ընկնում—վերջանում։

—Լէվա՛լ, Լէվա՛լ (Աստուա՛ծ, Աստուա՛ծ)...

Կանչում էր սկսող կինը. յետոյ մի ակնթարթ խորին լռութիւնից յետոյ, կին, տղայ, տղամարդ —չաբունակում էին.

Այս սարերը, այս ձորերը մերն են,
Բռնողները ուրիշներն են,

Լէվա՛լ, Լէվա՛լ,

Այս դաշտերը, այս հողերը մերն են,
Հնձողները ուրիշներն են...
Անուշ քամին, լեռան ծաղիկ մերն են,
Շնչողները ուրիշներն են,

Լէվա՛լ, Լէվա՛լ...

Իսկ երբ փոչին բոլորովին իջել էր, ձորաբերանը լաւ երևում էր և յոյսով լցուած խումբը չտատանւում էր քայլերը՝ զով տեղերում հանդչելու համար—էշի վրայ կուչ եկած պառաւներից մէկը գլուխը բարձրացրեց և դողդոջուն ու դայրալից ձայնով երգը վերջացրեց.

Փլի՛ք սարեր, լեցուի՛ք ձորեր,
Ողողուի՛ք դուք, դաշտե՛ր, հողեր,

Լոմ աղջիկներ, դուք մի՛ ծնեք,
Ու չվայելեն ուրիշներ,

Լեվա՛լ, Լեվա՛լ...

Ու այդ խորունկ գանգատը հնչեց դաշտի մէջ, գնաց դէպի ձորը և անհետացաւ նրա խորքերում։

Խոր լռութիւն յաջորդեց երգին. արևը քիչ ծռվում էր. թափառական ճանապարհորդները փոչեթաթախ, լռելեայն ու յոգնած՝ մտան ձորակի մէջ, անցան ուռենների և այլ ծառերի տակից և կանգ առին մի լայն առուակի մօտ։

II

— Ա՛յստեղ լաւ է, ընտրեց խմբի գլխաւորը մի մեծ ուռենու տորոտ. ջուր կայ, կանաչ խոտ էլ կայ... իջէ՛ք։

Կանայք ցած իջան. լակոտները սահեցին վար, մանուկներին հանեցին պայուսակներից, էշերին մերկացրին, ջրով զովացրին և բաց թողին արածելու. իրենք էլ մի քանի րոպէ մաքրուելուց յետոյ, փռուեցին խոտերի վրայ հանգչելու։

Կանանցից ամենաջահելը, մի վայրենի և աչքոյժ գեղեցկութեամբ հարս, սկսեց խոհ ժողովել. տղամարդերից մէկը հեռացաւ չոր ճիւղեր գտնելու, իսկ խմբի գլխաւորը, մի քանի րոպէ հանգչելուց յետոյ, մահակը ուսին՝ մի պտոյտ գործեց իրանց իջած տեղը ուսումնասիրելու համար։

Մեծ ճանապարհը ծառից հարիւր քայլ հեռաւորութեամբ անցնում էր քերելով ժայռերի տորոտը. փոչի չկար ձորակում. երբեմն միայն բերանների և բարձունքներից ներս էին մտնում փոչու տկարացած սիւնակներ և տարածվում սարերի կատարների վրայ. բայց շոգը այնքան էր, որ թռչուններն իսկ դադարել՝ հանգչում էին տերևների տակ. ո՛չ մի ճանապարհորդ չէր երևում։

— Ձորը երկար պիտի լինի, ասաց Սրգօն հեռուից — դու կը գիտենաս, ուստա Յարութիւն, երկա՞ր է։

— Բաւական երկար է, կէս ժամուայ ճանապարհ։

— Իսկ այդ շաւի՞ղը, հարցրեց նորից գլխաւորը — սա՞ որտեղ է տանում։

— Դէպի գիւղերը. լաւ գիւղեր կան այդ կողմերում։

— Ձգնա՞նք այդ կողմերը։

— Ձգիտեմ։

— Ես նայեմ մէկ. գուցէ նշաններ լինին, ասաց գլխաւորը և գնաց դէպի մի մեծ շաւիղ, որ ճանապարհից զատուելով՝ անցնում էր առուակից ու դէպի աջ՝ ձորն ի վեր գնում։

Բոչանները—թէ՛ կին, թէ՛ տղայ— կէսը երեսի վրայ փռուած, միւսները պպզած, կանգնած՝ նայում էին գլխաւորի հետևից։

Սերգօն մի ոտքնով անցաւ առուն և սկսեց խիստ ուշադրութեամբ զննել շաւիղի սկզբում եղած ծառերի բները, պտտելով նրանց շուրջը։

Ոչ ոք չէր խօսում. ամէնքը սպասում էին։ Երկու րոպէի հետաքրքրութիւնից յետոյ, Սերգօն կանգ առաւ մի կէսի առաջ, լաւ քննեց և մատը դրաւ մի քանի այլանդակ նշանների վրայ, որոնք գծուած էին սուր գործիքներով։ Այդպիսի և այլ գծեր շատ կային, բայց

բոլորը աւրուած. միայն երկուսն էին ողջ և այսպիսի ձևեր ունէին.—



—Փակուած է ճանապարհը... գոչեց գլխաւորը գլուխը դարձնելով—այս կողմով գնալը անօգուտ է և դուցէ վտանգաւոր *):

Յետոյ արագութեամբ ետ դարձաւ խմբի մէջ:

—Գիտէ՞ք ինչ, շարունակեց նա — շատ նոր անցել են երկու խմբեր՝ գալով գիւղերից, որտեղ կամ վատ են ընդունել նրանց և կամ նեղացրել են: Երկու նշանները շատ թարմ են դեռ. մէկը յայտնում է որ փակ է այդ կողմերը, ուրեմն և աւելորդ է գնալ. իսկ միւսը...

—Ախո՛ս, միջահասակ մի պառաւ — մեր մաղերը մնացին:

—Ինչ արած, խօսեց միւսը— գոհ լինենք ինչ որ ծախեցինք. մնացածները քաղաք կը տանենք:

Բայց գլխաւորը չէր խօսում և դրեթէ չէր լսում

*) Այդպիսի նշաններ ունին թէ՛ հայ բոշաները եւ թէ՛ եւրոպական գնչուները: Մի խումբ, անցած տեղում, նպատակով թէ ինչպիսի ընդունելութիւն է գտնում, դիպի նրան տանող ճանապարհի սկզբում մի քարի կամ մի ծառի վրայ թողնում է նշաններ՝ յետագայ խմբին ազդարարելու համար:

նրանց, այլ մտախոհ նայում էր ձորի երկու ծայրերին:

—Ինչ կայ, Սրգօ, նկատեց կանանցից մէկը— ինչ է եղել:

—Ոչինչ... ասաց Սրգօն— մի երկրորդ նշան էլ կար, որ չհասկացայ:

—Ինչ նշան, մէջ մտաւ Յարութիւնը— ես բոլոր նշանների միտքը գիտեմ:

—Դժուա՛ր, ժպտաց Սրգօն— սա երկդիմի բան է. չգիտեմ նշա՞ն է նոր գծուած, թէ՞ եղածը ջնջուած է:

Պառաւներից մէկը ոտքի ելաւ:

—Գնանք ցոյց տուր ինձ, ասաց նա— ես բոլորը ճանաչում եմ:

—Ահա՛, ասաց Սրգօն և կկզեց գետնի վրայ— ես գծեմ, դուք տեսէք:

Բոլորը գլուխները միմեանց մօտեցրին և կուցան: Սրգօն ետ տուաւ խոտերը, հողը հաւասարացրեց և վրան գծեց երկրորդ նշանը — մի հատ ուղղահայեաց գիծ, որ վրայից ունէր նրան կարող բարակ, ծուռ և անհանգիստ գծեր:

Ոչ ոք պահ մի չխօսեց: Սրգօն այդ գծելուց յետոյ նայեց Յարութիւնին և պառաւին:

—Ջնջուած նշան է, ասաց Յարութիւնը— ուղղահայեաց գիծը ուրիշ խումբ է գծել, որ ուզել է ասել՝ թէ ճանապարհը բաց է. իսկ երկրորդ խումբը ջնջել է նրան, հասկացնելու համար որ այդ նշանը սխալ է:

—Իսկ դո՞ւ ինչ կ'ասես, դէ՛դ, դարձաւ գլխաւորը պառաւին:

Սա մի քիչ մտածեց, յետոյ գլուխը բարձրացրեց ու ելաւ ոտքի:

—Ամենից առաջ, ասաց նա — ինձ պէտք է նշանը իւր տեղումը տեսնել:

—Իւր տեղո՞ւմ, ասաց Սրգօն— ինչ պէտք, իմ գծածը ճիշտ նման է։

—Լաւ, բայց դու ասա, թէ ո՞ր գիծն է թարմը· ուղղահայեա՞ցը թէ կորողները։

—Ինչպէ՞ս, թա՞րմը։

—Այո՛. չէ՞ որ կեղեւի վրայ է գծուած. ո՞ր գծերն են աւելի սեւացել, ո՞րը սպիտակ մնացել։

—Իրաւ է...մռմռաց գլխաւորը—այս բոպէիս ասեմ··· Եւ վազն ի վազ գնաց դէպի նշանը, կռացաւ նայեց, յետոյ դարձաւ ու ասաց.

—Ուղղահայեաց գիծը նո՛յնքան թարմ է, որքան և նրան կորող գծերը. բոլորն էլ մէկ ձեռքով և մի ժամանակ են գծուած։

—Կասկածում էի, ասաց պառաւը Յարութիւնին դառնալով— տեսա՞ր... այդ գիծը ջնջուած չէ. դա մի նշան է և մի վատ նշան... դա զուլումի նշան է. ռոմերին *) սկսել են զուլում անել... Լէվալը մեզ օգնական։

Այդ միջոցին ձորի ծայրում, դէպի Սինօպ իջնող ուղղութեամբ երեւացին մի քանի ձիաւորներ։ Վեց զինուորականներ էին, երկուսը մեծ պաշտօնեաներ, որոնք ֆէսերի վրայ ունէին սպիտակ ծածկոցներ՝ արեւից պաշտպանուելու համար։ Նրանց ետեւից գալիս էին չորս ձիաւոր զափթիէներ, ոտից ցցուած զինուած. ծխում էին և խօսակցում բաւական ետ մնացած. իսկ պաշտօնեաները լուռ էին և կիսափակ աչքերով շուրջն էին դիտում։

Բոշաները մի քիչ նրանց նայեցին. պառաւներից մէկը կամենալով օգտուել հանգամանքից, ըստ սովորականին վազեց դէպի մեծ ճանապարհը և սպասեց եկողներին, որ մի բան խնդրէ։

*) Հայ բոշաները իրանք իրանց անուանում են Լոմ։

—Զինդէնէներ են, Արիֆ էֆէնդի, ասում էր հասակաւոր պաշտօնեան երիտասարդին— նայեցէ՛ք!

—Այո՛, բէ՛յ, Ստամբօլում շատ եմ տեսել։

—Ձեր տեսածներից չեն սրանք, ժպտաց բէյը— սրանք հայ բոշաներ են, քրիստոնեաներ։

—Քրիստոնեա՞յ... ծիծաղեց Արիֆը— մի թէ կարծում էիք որ գնչուները կրօն ունեն... ո՛ւֆ, ինչ տգեղն է այս պառաւը։

Մօտեցել էին պառաւին, որ ձեռքը պարզել՝ աղերսաւոր ձայնով գոչում էր.

—Մի բան տուէք, էֆէնդիներ, Աստուած ձեզ օրհնէ. մի բան տուէք խեղճերիս։

—Այո՛, տգեղ է, պնդեց բէյը—բայց մէջները շատ գեղեցիկներ էլ կան. մանաւանդ կրակոտ, աչխոյժ... կրակ են անիծածները, իսկակա՛ն կրակ...

—Դու գուշակել գիտե՞ս, պառա՛ւ, հարցրեց Արիֆը և ձիու ոտնձը քաշելով կռացաւ դէպի կինը։

—Գիտեմ, էֆէնդի, լաւը գիտեմ։

—Ստում է, Արիֆ էֆէնդի, ասաց բէյը— սրանք լաւ չգիտեն, սրանք չինզէնէներ չեն։

—Բա՛հ... արեց պօրսեցի ատրճանաւորը— բոլորն էլ չինզէնէներ են... իսկ այն ինչ կանայք են ցածում, պառաւ. հարմե՞ղ են թէ աղջիկներդ։

—Քոյրերս են... էֆէնդի, քոյրերս... մի բան տուէք խեղճերիս։

—Լաւ, տամ, բայց գուշակիր ինձ համար։

Յետոյ երբ մի անգամ էլ նայում էր ծառի տակ կիսուած բոշաներին, նկատեց երիտասարդ գնչուհուն, որ կանգնած դիտում էր իրան։ Հեռուից այնքա՛ն գրաւիչ թուեց բոշա կինը, որ երիտասարդի մէջ մի բուռն ցանկութիւն ծնաւ մօտից տեսնելու նրան։

—Գիտե՞ս ինչ, ասաց նա պառաւին— այստեղ չոգ

է և արև... գնանք այնտեղ ձեզ մօտ և երբ գուշակես ինձ համար, քեզ մի մէճիդիէ կը տամ։

—Մեզ մօ՞տ... չփոթուեց պառաւը—մեզ մօ՞տ... այնտեղ տեղ չկայ, այնտեղ էլ շոգ է... մենք գուշակել չգիտենք։

Ու պառաւին տիրեց սաստիկ անհանգստութիւն։ Նա դարձաւ, մատքովը անիծեց մուրալ ցանկացու վարկեանը. մի չարագուշակ նախազգացում ճնշեց սիրտը։

—Բէյ էֆէնդի, ասում էր այդ ժամանակ պօլսեցին իւր ընկերոջ— մի քիչ չհանգստանա՞նք այդ ծառերի տակ։

Զափթիէները մօտեցել էին։

—Իջէք այդ ծառի տակ, հրամայեց նրանց բէյը և ցած թռաւ ձիուց։

Մինչ այդ, պառաւը նկատելով որ Թիւրքերին իջնել արգիլելու հնարք չկար, վազեց ետ դարձաւ ու հեւալով գոչեց իւրայիններին.

—Շո՛ւտ, հաւաքուեցէք գնանք... անա զուլումները...

Բոշաները ընազդմամբ վեր թռան, վազեցին դէպի էշերը, մօտ բերին, ուղեցին բառնալ, բայց ուշ էր. պաշտօնեաները ձիերը տուած զափթիէներին, երկար սրերը աջ ձեռքով բռնած, առաջ էին գալիս։

—Հը՛, ծիծաղեց պօլսեցի ասպիճանաւորը— այդ ի՞նչ է, վախեցա՞ք. ինչո՞ւ, մենք քի՞ւրդ ենք. խօ ձեզ չենք ուտելու։ Նստէ՛ք, նստէ՛ք, հանգիստ եղէք, մենք էլ ձեզ մօտ քիչ կը նստենք, քիչ կը խօսենք՝ կ'երթանք...

Եւ այդ ասելով նա՝ ժպիտ երեսին մի առ մի մօտ էր գնում բոլորին ու գնում։ Երբ հասաւ մատաղատամ կնոջ, երկար կանգ առաւ նրա առաջ։ Գնչուհու ցանկալի, կրակոտ գեղեցկութիւնը լիովին գրաւեց նրան։

Նայեց միւսներին էլ, բայց եկաւ նորից կանգ առաւ գնչուհու մօտ։

—Սա որի՞ աղջիկն է, ասաց։

—Իմ կինն է, առաջ եկաւ ուստա Ցարութիւնը։

—Քո կի՞նը... գոչեց արհամարհութեամբ ասպիճանաւորը. յետոյ սիրալիր ժպիտը երեսին՝ դարձաւ գնչուհուն և հարցրեց.

—Դու էլ գուշակել գիտե՞ս, սիրուն գնչուհի։

—Ո՛չ, ասաց գնչուհին խստութեամբ և գէմքը դարձրեց։

—Ինչո՞ւ ես բարկանում, որ գուշակես ինձ համար, քեզ մի ոսկի կը տամ... ապա, արի՛ այստեղ, մեզ մօտ։

Եւ քաշեց բէյի ընտրած տեղը, որ քիչ հեռու էր բոշաներից։

Գնչուհին չշարժուեց. նայեց ամուսնուն, միւսներին ու գլխաւորին, որոնք բոլորն էլ գունաթափ՝ գուշակում էին թէ ինչ էր լինելու։

—Հը՞, չլսեցի՞ր էֆէնդու հրամանը, ձայնեց բէյը, հանգանալով ընկերի մտադրութիւնը— չուտ մօտ արի, ցնդէնէ, արի մեզ համար գուշակի՛ր։

—Ես գուշակել չգիտեմ։

—Գիտես կամ ոչ, գոռաց բէյը բարկութեամբ— ես Վեզիր-քեօփրուի գայմագամն եմ և չեմ սիրում, որ իմ հրամաններս չկատարուին. իսկ սա՝ սուլթանի ազգականներից է... դէ՛հ, արի մօտ տեսնենք։

Զափթիէները, որոնք ձիերը կապել էին մի ծառի, ժպիտը դէմքերին՝ հեռուից դիտում էին իրենց գլխաւորների արածները և հասկացել նրանց մտադրութիւնը։

Երիտասարդ գնչուհին վախեցած՝ նորից նայեց իւր ամուսնին, որ կծկուել էր մի կողմ և գլուխը խոնարհեցրել. նայեց գլխաւորին, որ այլայլուած ու չուարած՝

դողում էր։ Յետոյ երբ տեսաւ որ ոչ մի պաշտպանութիւն չէր վնեալու նրանցից, դարձաւ Թիւրքերին և ասաց։

—Գամ ի՞նչ անեմ։

Բայց կայմակամը կռացել էր դէպի Արիֆը և ուրախ՝ որ կարող էր սուլթանի ազգականի հետ մտերմական մի խնդիր ունենալ, ասաց.

—Հը՞, աչքդ բռնե՞ց դրան։

—Այո՛, 5 ոսկի կը տայի, եթէ...

—Օ՛... շատ է. դուք այդ 5 ոսկին տուէք ինձ, ես կը տարբեմ... այժմ ոչ, յետոյ կը տաք. ես կը յիշեցնեմ ձեզ.

Յետոյ դարձաւ դէպի գնչուհին և ձայնեց.

—Հը՞, այդ ի՞նչ է, դեռ չե՞ս եկել... եկ գուշակիր տեսնեմ։

—Գնա՛ գուշակիր, հրեց մի պառաւ—գնա՛, գուցէ դրանով ազատուես։

Երիտասարդ կինը քիչ էլ վարանեց, մի արհամարհոտ հայեացք ձգեց ամուսնու, գլխաւորի վրայ՝ ապա վճռական կերպով դէպի ասոյենանաւորները առաջացաւ և ասաց։

—Որի՞ համար գուշակեմ։

—Առաջ ինձ համար, ասաց կայմակամը։

—Ձեռքդ տո՛ւր։

Բէյը պարզեց նրան իւր ձեռքը։ Գնչուհին մատների ծայրով բռնեց, դարձրեց, ուշադրութեամբ ափի գծերը զննեց, յետոյ արհամարհութեամբ բարձրացրեց հայեացքը և ասաց.

—Դու կը մեռնես հանդիսա՝ անկողնի մէջ, բայց ո՛չ թէ զինուորի մահով։

—Հա՛, հա՛, հա՛, ծիծաղեց բէյը—ինքնակալ եմ. զինուորի մահուան շատ էլ նախանձող չեմ... յետո՞յ։

—Յետոյ ոչինչ նոր բան... աւելի կը բարձրանաս,

մինչև կը բարձրանաս ինքդիր նրա, որ շատ արիւն կը թափես և շատ դիակներ կը շինես։

Ու սոսկումով բաց թողեց ձեռքը։

—Արիւն, գունատուեց բէյը—ի՞նչ արիւն. պատերազմի՞ պիտի գնամ։

—Ո՛չ, թոթուեց գլուխը գնչուհին—ո՛չ... չգիտեմ. անչուշտ անմեղ արիւն կը թափես...

—Այժմ ինձ համար գուշակիր, սիրո՛ւն կին, ժըպտեց Արիֆը և պարզեց ձեռքը։

—Եթէ ես սիրուն եմ, պատասխանեց գնչուհին, այդ քո գործը չէ... դու կին չունի՞ս։

—Ունեմ։

—Եթէ կինդ էլ տղամարդի տեսնէր և նրան տէր այդպիսի խօսքեր, ի՞նչ կ'անէիր նրան։

—Այ, ա՛յ, մէջ մտաւ կայմակամը ծիծաղելով—վարպետ գնչուհի, ուզում ես էֆէնդուն կարմրցնել խօսքերովդ. բայց մոռանում ես, որ մենք—մահմեդականներս, մտքիում ենք անհաւատարիմ կնոջ և արդարացնում բազմաթիւ կին առնող տղամարդին։

Գնչուհին ոչինչ չասաց. բռնեց Արիֆի պարզած ձեռքը, խորին ուշադրութեամբ կռացաւ նրա վրայ ու երկար լուռ՝ զննեց ափի գծերը։

Ոչ ոք չէր խօսում. զափթիէները հեռու կանգնած, հեռաքրքրութեամբ վզերը պարզել, աչխատում էին լսել. իսկ ըսչանները գիտում էին տեսարանը անհանգստութեամբ։

Վերջապէս գնչուհին բարձրացրեց գլուխը և ասաց.

—Մենք գուշակել շատ չենք սիրում. բայց իմ հայրս յայտնի գուշակող է և ինձ տուել է իր արհեստից... Ահա ասում եմ քեզ, որ շատ չի անցնիլ և դու կը սպանուես մի կնոջ ձեռքով. զգո՛յշ կաց...

Արիֆը ժպտաց. զափթիէները միմեանց նայեցին։

—Որքան որ մեծ օջախից լինիս, չարունակից գնչուհին—այնուամենայնիւ չես ազատուելու այդ կնոջ ձեռքից. զգո՛յշ կաց...

Յետոյ ուժգնութեամբ թողեց ձեռքն ու հեռացաւ դէպի բոչանները:

Երկու թիւրք ասոլճանաւորները պահ մի լուռ մնացին:

—Գնանք այստեղից, էֆէնդի, խօսեց կայմակամը—այդ կինը մեր գիտցածներիցը չէ և բացի դրանից, տխուր բաներ է ասում:

—Մի՞թէ հաւատացիք ասածներին, բէյ, ծիծաղեց ասամբոլցին—չտեսա՞ք, որ դուշակեց միտքս և իւր արած դուշակութիւններով ուզեց ինձ վախեցնել... տեսնե՛նք. չա՛ռ կը ցանկայի սպանուել դրա ձեռքով... ինչ որ էլ լինի, քան ոսկի էլ ծախսեմ, այդ կինը պէտք է ձեռք ձգեմ:

—Բայց դուք չգիտէք, էֆէնդի, ասաց բէյը քիչ վախեցած—այդ կանայք կատաղի են լինում և մեծ բարոյականութեան տէր. զգոյշ կացէք. եթէ նոյն իսկ յանձնուի, իւր գրկի մէջ կը խեղդի ձեզ...

—Հա՛, հա՛... ծիծաղեց էֆէնդին—դրա միջոցն էլ կայ, ա՛յ, կը տեսնէք:

Ասաց և ձեռքով մօտ կանչեց զափթիէներին:

Բոչաներն այդ միջոցին, նկատելով ասոլճանաւորների չարժումները, խորհրդի ժողովուեցան:

—Ես չեմ անպատուի օջախ, գոչեց գնչուհին. եկողին կը սպանեմ փայտով:

—Իսկ յետո՞յ, ասաց ամուսինը—չէ՞ որ նրանք սրեր ունին, հրացան ունին:

—Թող սպանեն ինձ, կը տեսնեմ... վախկոտը դու ես, որ չես համարձակվում կնոջդ պաշտպանելու համար մի քայլ անել:

—Դու խենթ ես, Մա՛րգո, մէջ մտաւ գլխաւորը

—Նրանք եթէ տեսան մեր ընդդիմութիւնը, հրացանի տակ կ'առնեն ու բոլորիս էլ մէկ-մէկ կը սպանեն...

Արևը սկսում էր խոնարհուել. մի գեղեցիկ զովութիւն էր տարածուած ձորակի մէջ, երբ չորս զափթիէները սրերը հանեցին ու մօտեցան բոչաներին: Նրանցից մէկը հեռուից հրամայեց բոլորին ցրուել բացի գնչուհուց: Սա էլ ուզեց խուսափել, բայց պաշարեցին և մօտեցան:

Եւ ահա այնուհետև էր, որ Սինօպից քիչ ցած, մեծ ճանապարհի կողքին, տեղի ունեցաւ մի քաջութեան տեսարան: Չորս զափթիէները յարձակուեցին կնոջ վրայ: Գնչուհին յափշտակեց մահակը և նրանով մօտ 10—15 բոպէ քաջութեամբ այնպէս պաշտպանուեց, որ մի զափթիէի թեւը փչրեց: Բայց երկար չտևեց այդ. Պօլսեցին էլ մէջտեղ ընկաւ և քիչ յետոյ եռեից հանելով կաշկանդեցին գնչուհու ձեռքերն ու այդպէս քարշ տուին մի հեռաւոր ծառի առորտա:

Հեռուից, ծառերի տակ կանգնած բոչաները նայում էին կատաղի աչքերով. մանուկները ճչում էին, իսկ գեղեցիկ գնչուհին այնպէս էր գոռում, որ ձորն էր թնդում:

Քիչ յետոյ նորից լուռեց Պօլսեցու և կնոջ մէջ կուռի աղաղակ, ապա մի ճիչ և այլ ևս ամէն ինչ հանդարտեց: Խոր լռութիւնը խզվում էր միայն վիրաւոր զափթիէի հեծեծանքով և հեռուից եկող բոչա մանուկների լացով:

Այդպէս մի կէս ժամ սոսկալի հանդարտութիւնից յետոյ, երևեց ասամբոլցի պաշտօնեան անկարգ և գունատած, ձի նստեց և գինուորականները արշաւանօք մեկնելով անհետացան ձորաբերանից դուրս...

Այն ժամանակ բոչաները նորից հաւաքուեցին, վազեցին դէպի գնչուհու Մարգոն. գտան նրան ուշաթափ և կիսամեռ վիճակի մէջ: Բարձրացրին, լուացին,

ՀՍՍՌ ԳԱ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ZUUՊ-ԱՌՄ.ССР
Ա. ՄԱՍՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ
472-29

ուշքի բերին, դրին էշերից մէկի վրայ ու տխուր, լալով, նկուն, քայլեցին դէպի հարաւ, պառաւ դեղի զայրալից ու ճչացող ողբի տակ, որ հնչում էր.

Փէ՛f սարեր, լեցուէ՛f ձորեր.
Լոմ աղջիկներ, դուք մի՛ ծնեք.
Որ չվայելեն ուրիշներ.
Ախ, Լեվա՛լ, Լեվա՛լ...

III

Վէզիր-քեօփրու աւանից մինչև Գասթէմունի քաղաքը գտնուող գիւղերի և գլխաւորապէս Պոյատաս գիւղաքաղաքումն է, որ տասնեակ հազարներով հայ բոչաներ կեղրոն են ընտրել. ամառը թափառում են երկրի ամէն կողմերը, մտնում ամէն քաղաք, ամէն գիւղ, ծախում իրենց ձմեռուայ պատրաստած կամ տանը նստող ամուսինների չինած մաղերը, մաղեղէն այլ գործուածքներն ու քթոցներ, սաղաներ, խոզանակներ և այլն. յետոյ, մինչև ձմեռուայ սկսելը նորից հաւաքւում, լցվում են խրճիթները, բերելով ցորեն, ալիւր, դրամ և ամէն տեսակ պաշարեղէն, բերելով նոր անդամներ—ծծկեր մանուկներ, որոնց նրանք այնքան հեշտութեամբ ծնում են ճանապարհին, իսկոյն մէջքերին կապում և թափառականութիւնը շարունակում։

Գլխաւորապէս կանայք են լինում առաւել անողները. նրանք սկզբից բաժանում են իրանց մէջ գիւղերն ու քաղաքները, մանակը ձեռքերին, մաղերն ու մանուկները էշերի վրայ՝ կանգ են առնում ամէն դռան առաջ, ծախում են, ուզում, մուրում, գուչակում, անհերաութեամբը զզուեցնում, բարոյական մաքրութեամբ հիացում ազդում և տղամարդից աւելի սրտոտութեամբ ցրվում, հալածում են նրանց, որանք կը համարձակուէին վատ մտադրութեամբ մօտենալ իրենց։

Եւ երբ ձմեռ դարձաւ, Պոյատաս են մտնում ամէն կողմից գլխիկոր, բարձուած էշեր, արևակէզ գնչուհիներ, փոշոտ տղամարդիկ ու սկսում է ձմեռնային աշխոյժ, կրակոտ մի կեանք. պատրաստում են առևտրի պաշար՝ գարնան համար. մաքուքների չրխկոցներ է, որ լսվում են խրճիթների միջից. յետոյ զուարճանում են, նուագում, հարսանիք անում, շատ օղի խմում և գիւղաքաղաքին մեծ կենդանութիւն տալիս։

Բայց այդ ձմեռ, երբ բոչաների առաջին խումբը ժամանակից առաջ ներս մտնելով, Մարգօին աւան բերին, վերադարձողները ոչ միայն առատ պաշար չէին բերում, այլ և պակաս էին վերադառնում։ Լսվում էր ամէն տնից լաց ու կոծ, երևում էին տխուր դէմքեր, մարդիկ յուզմամբ կիսվում էին այս-այն տան մէջ, այս-այն փողոցի անկիւնում և լսում մէկի պատմութիւնը, որ դողդոջուն ձայնով բոչայերէն՝ պատմում էր իրենց մի ընկերի սպանուելը. միւսին, որ նկարագրում էր իրենց խմբի կրած հալածանքը. և ջիղերը այնքան լարուել էին, որ ամէն անգամ մեծ իրարանցում էր տիրում բոչաների մէջ, եթէ նրանց թաղերում գինուորներ էին երևում կամ ոևէ թիւրք պաշտօնեայ։

Ծանր տարիներ էին սկսել բոլոր քրիստոնեաների համար. մի տեսակ հալածանք էր սկսել գիւղերում թափառող բոչաների խմբերի դէմ էլ. քրդերի և չէրքեզների տապտամներ անպատիժ կերպով սպանում էին, կողոպտում ու հալածում բոչաներին։ Մի քանի պաշտօնեաներ—ինչպէս պատմում էին—տիպել էին բոչաների մի խմբի՝ երկու ամբողջ օր քարշ տալ իրանց ետևից բերուող կողոպտած իրեղէնները, յետոյ ծեծել էին նրանց, կողոպտել և ծիծաղելով ճանապարհ դրել։ Մի

ուրիշ տեղ էլ չէրքեզները յարձակուել էին մի խմբի վրայ, եղածը կողոպտել, էշերին սպանել—և դա ամէն մի բոչայի արտասուքն էր հոսեցնում—յետոյ կանանցն էլ ծեծել էին ասելով որ ինչո՞ւ են ազգ... ու անցել։

Սակայն ամենից սոսկալին առ այժմ ուստա Յարութիւնի կնոջ՝ Մարգօի դէպքն էր՝ որ դեռ չարունակում էր յուզել մտքերը։ Աթոռակալի ջանքերը կայմակամի մօտ՝ ծիծաղ էին շարժել. մի՞թէ կարելի էր գանգատ տալ մի կայմակամի և մանաւանդ Սուլթանի ազգականի վրայ։

Ամէն բոչա սակայն՝ ատամ էր կրճտեցնում Թիւրքերի դէմ և ամէն անգամ երբ ուստա Յարութիւնի դրան առջևով էին անցնում, պարտք էին համարում մի հայհոյանք արձակել «պսու»ների (Թիւրքերի) հասցէին։

Ուստա Յարութիւնը իւր կնոջ հետ պատահած դժբաղդութիւնից յետոյ, Պօյասատ էր հաստատուել։ Թշուա՜ռ Մարգօ։ Նրան կիսամեռ բերել ձգել էին աւանը։ Ամբողջ աչունը հիւանդ, քիչ էր մնացել մեռնէր. միշտ աղաղակում էր, հայհոյում, անիծում, մեռնել էր ուզում. բայց երբ քիչ հանգարտում էր, կսչում էր ամուսնու օձիքից և աղաչում որ Ստամբօլ գնային, ուր նա մտադիր էր գտնել իրեն անպատուողին և վրէժ առնել։ Այժմ Մարգօն միայն վրէժ էր մտածում, միայն նրա համար ապրում։

—Խեղ՜ո..., ասում էր նրան ամուսինը և միշտ ուսերը թօթուելով դուրս գնում։

Մարդ չէր էլ խմանում թէ ուստա Յարութիւնը այժմ ինչո՞վ էր զբաղվում. չէ՞ որ այլ ևս ո՛չ մաղ էր գործում և ոչ էլ կաշի մաքրում, այլ անդադար շուկայումը ման էր գալիս, պաշտօնեաների շուրջը պտտում, կայմակամի տան պատերի տակ քարշ գալիս, յետոյ յանկարծ մի քանի օր էլ չէր երևում։

Երբ Պօյասատ էր հաստատուել, աթոռակալը նրան

տեղ էր տուել. բայց ի զարմանս բոլորի, մի քանի ամիս յետոյ, Յարութիւնը փոշ էր երևան բերել և մի տուն գնել։ Սկզբում բոչաները նրա հետ լաւ էին, նրա թշուառ կնոջը խղճում էին. բայց յետոյ, Յարութիւնի ընթացքը սկսեց բոլորին կասկած ազդել և ամէն անգամ երբ նա Թիւրքերի հետ էր, խէթ-խէթ էին նայում։ Մի անգամ էլ, մի քանի հոգի լրտեսելով, լսեցին թէ նա ինչպէս իւր ազգի վրայ ծիծաղող Թրքերի համամիտ էր լինում, լոմերի սովորութիւնները ծիծաղելի կերպով պատմելով նրանց զուարճացնում էր, և հանդուրժում, որ մահմեդականները լրբենի կերպով խօսեն լոմ կանանց մասին։

Այդ լուրը խակայն տարածուեց բոչաների մէջ և Յարութիւնը բոլորովին ատելի դարձաւ. բայց որովհետև խղճում էին հիւանդ ու թշուառ կնոջը, ուստի դեռ Յարութիւնին ոչինչ չէին ասում։

Աթոռակալ Մուսէսը, որ չատոնց ընտրուած էր իբր ներկայացուցիչ և պետ Պօյասատի բոչաների, աչքի առաջ ունենալով Մարգօի վիճակը, խստիւ պատուիրեց բոլորին որ Յարութիւնին չհաղաձեն։ Ինքն էլ իւր կողմից խիստ սիրալիր էր վարվում դժբաղդ կնոջ հետ։

Ձմեռուայ սկզբներում Մարգօն քիչ կազդուրուեց, ոտքի եաւ և փողոց էր դուրս գալիս։ Որքա՜ն փոխուել էր, թարշամել, նիհարցել։ Յուսահատութիւնն ու ներքին կատաղութիւնը մաշում էին նրան։

Դուրս էր գալիս փողոց, նստում արեգդէմ՝ չէմքի վրայ, իւր երեխաները կողքին և լուռ ու մտախոհ՝ նայում էր հեռուները։ Անցնող բոչաները տեսնում էին նրան այդպէս, յուզվում, բուռերը սեղմում և գլուխները շարժում։ Բռնաբարութեան կենդանի զոհ էր Մարգօն լոմ հասարակութեան մէջ, որ կարծես վրէժ էր կանչում, վրէժ անպատուած օջախի։

Բայց զուլումը այդ միջոցին այնքան մեծանում էր հետզհետէ, զոհերը այնքան շատանում էին, որ Մարգօն մոռացվում էր։ Այժմ գիակներ էին բերվում, բռնաբարուած աղջիկներ հրապարակ ձգվում. շրջակայքից անաւոր լուրեր էին հասնում և գիւղերից լոմերը խուժում էին աւանը՝ ապաստան գտնելու համար չէրքեզների յարձակումների դէմ։

Այդպիսի մի օր էր, որ աթոռակալ Մովսէսը փողոցից անցնելիս, տեսաւ Մարգօին ու կանգ առաւ նրա մօտ, նստեց նրա կողքին։

—Աստուած առողջութիւն տայ, Մարգո, ասաց նա—հերիք չեղա՞ւ տխրելը, մխիթարուի՛ր. այժմ զուլումը մեծ է. դու ինչ անես, մեղաւոր խօ չես եղել՝ որ այդքան տանջվում ես ու քեզ մաշում։

—Չէ՛, Մովսէս աղա, պատասխանեց Մարգօն—ես չեմ մխիթարուիլ, մինչև վրէժս չառնեմ։

Ու գնչուհու աչքերը փայլեցին բարկութիւնից և այտերը կարմրեցին։

—Միամիտ աղջիկ, ժպտաց տխրութեամբ աթոռակալը —միշտ նոյնն ես ասում. բայց ո՞ւմից վրէժ կ՝առնես. չէ՞ որ նրանք քեզանից զօրեղ են, խիստ զօրեղ. նայի՛ր մէկ ,ամէն օր մի նոր զուլումի լուր է հասնում. կայմակամը էլ ներս չի թողնում ինձ. Հայերին հարիւրներով են մորթոտում... էլ լոմերի համար անհնար է ման դալ. ճանապարհների վրայ մարդկանց հաւերի պէս մորթում են... Քանի՞ քանի հայ ու լոմ կին բռնաբարեցին, խայտառակեցին. հարցնող-վնտռողն ո՞վ է, որի՞ց ես վրէժդ առնելու։

—Ես ինձ անպատուողից վրէժ կ՝առնեմ, ասաց Մարգօն։

—Է՛հ, է՛հ, գլուխը թափահարեց աթոռակալը—խելօք չես խօսում, Մարգո. քեզ անպատուողը այժմ

ով գիտէ Ստամբօլում ինչ քէֆեր է անում պալատի մէջ, մեծ-մեծ փաշաների հետ...

Մարգօն ոչինչ չպատասխանեց, խոնարհեց գլուխը և մնաց այնպէս։

Աթոռակալը ոտքի եաւ։

—Ինչ որ է, ասաց նա—մխիթարուիր, Մարգո, ափսոս ես. դու էլ ափսոս ես, երեխաներդ էլ մեղք են։

Եւ երբ կամենում էր հեռանալ, Մարգօն յանկարծ գլուխը բարձրացրեց և ասաց.

—Գեսին մանի Արթէնը... այնքան ասում եմ որ Ստամբօլ գնանք, ինձ չէ լսում։

—Ի՞նչ, զարմացած կանգ առաւ աթոռակալը, Ստամբո՞լ գնաք. ինչո՞ւ, ինչի՞։

—Որ վրէժ առնեմ... ասաց յամառութեամբ և վճռականօրէն Մարգօն։

Աթոռակալը ոչինչ չկարողացաւ ասել. երբէ՛ք չէր կարծում թէ գնչուհին այդչափ հեռու կը տանէր վրէժխնդրութեան ծարաւը։

—Գեսինն անցնի Արթէնը, շարունակեց Մարգօն—փոխանակ ինքն էլ վրէժխնդրութիւն ցանկալու, ծիծաղում է ինձ վրայ. ասում է թէ «ինչ եղաւ-եղաւ, մոռացիր...» կարելի՞ է մոռանալ. հոգուս հետ էլ չի դուրս գալ այդ անպատուութիւնը. օջախս մուռուվեց, գեսինն անցնի Արթէնը, լոմ խօ չի, պսու է, պսու...

—Հա՛, ինչ ծածկեմ քեզնից, Մարգո, ասաց աթոռակալը տխրութեամբ—մարդդ վերջերս ինչ որ շատ է ծուլել. լոմութիւնը մոռացել է, պսուի նման է եղել. լոմ լինելուց անգամ կարծես ամաչում է. պսու մեծերի մօտ է քարշ գալիս ու մարդ զզւում է երբ տեսնում է այդ. չի էլ հասկացվում թէ ինչպէ՞ս է կայմակամի մօտ մտել. դու չգիտե՞ս, Մարգո...

Մարգօն առաջին վայրկեանին չփոթուեց, յետոյ դէմքը մի կողմ դարձրեց ու ասաց.

—Զգիտեմ. Արթէնը ճարպիկ մարդ է։

—Ասա քծնող է, ասա լիզող, սիրելի դառնալու համար ամէն բան յանձն առնող, գոչեց աթոռակալը խստութեամբ—Արթէնն ո՞վ է, որ ճարպիկութիւն ունենայ և կամ կայմակամը լսին ե՞րբ կը սիրէ, եթէ նրանից չահ չունենայ. մանաւանդ այդ չուն քեաթիբը... Այդտեղից մի ինչ որ վատ հոտ է գալիս, Մարգօ... մարդդ լսերի համար կասկածելի է եղել, ասեմ քեզ համարձակ. լսերը բարկացած են. խուլ գանգատ կայ նրա ընթացքի դէմ...

—Յարութիւնը գիտէ այդ։

—Գիտէ՞, և ի՞նչ է ասում։

—Արհամարհում է, ծիծաղում է...

Աթոռակալը դէմքը կնճռեց մտախոհ։

—Ա՛, ասաց նա, մի լսի շատ մեծ քաջութիւն ու թիկունք պիտի ունենայ, որ անպատիժ կերպով կարողանայ ազգակիցներին արհամարհել... Այստեղ մի բան կայ. Երևի կայմակամը նրան թիկունք է տուել, երևի Յարութիւնդ լսերին մատնում է...

—Վարպետ!... գոչեց Մարգօն զուսաստ և զայրացած։

—Մի՛ նեղանալ, Մարգօ,—Ասուած գիտէ որ Արթէնը քո մի եղունգդ չարժէ. բայց ինքդ տեսնում ես թէ ինչ դիրք է բռնել նա դէպի իւր ազգակիցները...

—Նա իմ ամուսինն է, ասաց Մարգօն։

—Գիտեմ, գիտեմ... Է՛հ, եթէ այդպէս չլինէր... Ինչ որ է, մնաս բարև, մի քիչ խրատիր Յարութիւնին. թող պատուների ձեռքին զորձիք չդառնայ, թէ չէ իրա համար վատ կը լինի...

Ասաց աթոռակալը և ծանր քայլերով հեռացաւ։

Մարգօն պահ մի նայեց նրա ետևից, յետոյ երկար տխուր ու խորհուն գլուխը խոնարհած մնաց և երբ ծովի կողմից եկող ցուրտը սասկանում էր, կաւ ու տուն մտաւ։

Փոքրիկ օջախը վառվում էր և նրա առաջ մանուկները թաւալելով գետնի վրայ՝ խաղում էին ու զուարթագին ճիչեր արձակում։ Մարգօն նստաւ իւր Գործիքի վրայ և սկսեց գործել։ Այդ միջոցին էլ Արթէնը ներս մտաւ։

Կարճահասակ, արևակէզ—գրեթէ սև դէմքով ու խորշոմոտ ճակատով անձ էր ուստա Յարութիւնը։ Փայլուն, շարժուն ու անհանգիստ աչքերը անընդհատ թափառում էին, վայրկենապէս արտայայտութիւնը փոխում և ամէն բան կասկածանօք դնում։

Հագել էր լայն շալվար, կարճ բաճկոն. մէջքին շալ և գլխին՝ եռամանեռով ֆէս։ Վրան առել էր մի պարսկական հնամաշ արա, որի մէջ նա խնամքով փաթաթվում էր, ներս դուրս էր գնում։

Երբ ներս մտաւ, գնող հայեացքով դիտեց կնոջը։ Մարգօն և ոչ խակ դարձաւ։

—Անօթի իմ, ասաց Արթէնը գնալով դէպի իւր մաղերի անկիւնը—բան չկա՞յ ուտելու։

—Հաց պանիր կայ, ասաց Մարգօն։

—Կերակուր չե՞ս եփել։

—Չկայ.

—Է՛հ, մրթմրթաց Արթէնը—դու միշտ քո յիմար մտքերի հետն ես. կերակուր եփել ինչ հարկաւոր է։

Եւ նստաւ մաղերի կողքին, մոռանալով որ անօթի էր։ Յետոյ նորից կաւ, նորից մի քանի քայլ առաւ սենեակում ու յանկարծ կանգ առնելով կնոջ կողքին՝ հարցրեց։

—Էլի ինչ ասելու էր եկել աթոռակալը... որ

բոլոր լամերը գանգատում են ինձնից, որ ինձ պո՞ւ են համարում։

—Հա՛խդ է, ասաց Մարգոն—քեզ ո՞վ է ասում պառուների ոտքը լվես ու լամերի համար վատութիւն անես։

—Տեսնենք, ինչ վատութիւն եմ արել «բոչա»-ներին. ո՞ր ին բանա դրի, որ ին կողոպտել տուի... թքել եմ ես քո աթոռակալին էլ ու լամերիդ էլ վրան... թող մի քիչ էլ սպասի այդ ծեր շունը և կը տեսնի թէ ո՞վ է Արթէնը. անցեալ օր էլ մի թիւրքի ասել է, որ ես կեղտոտ մարդ եմ, որ իրը թէ իմ մէջ ազնուութիւն չկայ...

—Որ դու մարդ չես, այդ ես էլ եմ ասում, ասաց Մարգոն վճռականօրէն—դու ինչ մարդ ես... կենդ խլեցին աչքիդ առջևը, անպատուեցին և դու ո՛չ միայն ոչինչ չարիր, այլ յորդորում ես որ մոռացուի... ինչ մարդ ես դու...

—Էլի այդ խօսքերը, ա՛յ կնիկ... քանի՞ անգամ ասեմ քեզ որ նրանք զինուած էին, շատոր էին...

—Թող մեռնէինք, դու էլ, Սրգոն էլ...

—Է՛հ, հին դարմանը էլի քամուն տուինք. ինչ որ էր՝ եղաւ լինցաւ. էլ ինչ անենք հիմա, եկենք վզները կտրենք... քիչ մնից—բանից չկա՞յ ուտելու։

—Պահարանումը կայ... Եկնէք ինչ անէք։ Ա՛յ թէ ինչ. կ'եկնենք ամէն ինչ կը ժողովենք և Ստամբոլ կ'երթանք...

—Լա՛ւ, լա՛ւ, հեղնեց Արթէնը—հարիւր անգամ լսեցինք այդ. այժմ էլ ուրիշ տեղ գնանք։

—Որ մարդ չե՞ս... գոչեց արհամարհութեամբ Մարգոն. ուրեմն էլ մի՛ մեզադրիլ աթոռակալին կամ լամերին, որ ասում են քեզ, պուս են կոչում... Մինչև անգամ, անցեալ օրը երբ գնում էիր, լսեցի թէ ինչպէս մէկը գոռաց հետիցդ—«սօլաւ պուս»!... (շուն...)։

Յարութիւնը ձեռքից բաց թողեց հացն ու միսը, ուժգնութեամբ դարձաւ և մօտենալով կնոջ, բարկութեամբ ասաց.

—Ես էլ լսեցի, բայց չիմացայ ո՞վ էր. դու տեսա՞ր. ասա՛, ո՞վ էր։

—Հը՛, ժպտաց Մարգոն նայելով ամուսնուն հեգնութեամբ. ասեմ որ խեղճին պառուներու ձեռքը տաս... չեմ ասիլ։

—Չե՞ս ասիլ... ասաց Արթէնը և վազեց դէպ մահակը. չե՞ս ասիլ...

—Ապա մէկ դպիր փայտին! սպառնաց Մարգոն. դպիր մէկ և տես գլուխդ ինչպէս կը ջարդեմ այս սանդերքով... մի՛ վախենալ, ո՛չ մի լամ ինձ չի հայհոյիլ դրա համար, ամենքն էլ աֆֆերիմ կ'ասեն...

—Բոլորդ էլ սօլաւներ էք, բացագանչեց Արթէնը իրան կորցրած—բոլորդ էլ, դու էլ, աթոռակալն էլ ու բոլոր այդ շները... ես ձեզ բոլորիդ էլ ցոյց կը տամ թէ Արթէնը ո՞վ է։

—Արթէնը պուս է, պուս, ասաց Մարգոն—բլրած (ուրացող) է—ահա թէ ով է Արթէնը։

Յանկարծ, մանուկներից մէկը որ երկ-կանգնել և դիտում էր այդ տեսարանը, ասաց.

—Դե՛դ, բաբը սօլաւ պո՞ւ է (մայրիկ, հայրիկը չո՞ւն է...)։

—Ձա՛յնդ, լակոտ, գոռաց նրա վրայ հայրը։

—Ի հարկէ պուս է, գոչեց Մարգոն—որ պուս չլինի, իւր կինը նրանց թողներուց յետոյ, այժմ էլ նրանց ո՞ւր կը լի, իւր ազգականներին նրա՞նց կը մատնի...

Արթէնը կատաղութիւնից կապտել էր։ Մի ստիպնով գնաց դէպի անկիւնը և մահակը ձեռք առաւ. բայց երբ տեսաւ Մարգոի բարձրացած ծանր սանդերքը, մի ստոր, լիսի հայհոյանք արձակեց և գնաց դէպի դուռը։

—Լա՛ւ, կնի՛կ, ասաց նա այնտեղից—քեզ ցոյց կը տամ յետոյ, քեզ էլ ու բոլոր այդ էշ արածողներին էլ...

—Գնա՛, գնա, ձայնեց նրա ետևից Մարգօն—էշը քեզնից չա՛տ լաւ է. գնա, չիմանա՛ս նրա զուզուցը...

Եւ երբ Արթէնը դուրս էր գնացել, ցած դրեց ամանները, յուզուած կկդեց պատի տակ, գիրքն առաւ մանուկներին ու սկսեց դառնութեամբ հեկեկալ՝ լցուած վշտով, բարկութեամբ և ամօթով:

Այդպէս ամուսին ունենալ!

IV

—Ծառայիդ հրաման տուէք, բէյ էֆէնդի, և ես բացատրեմ թէ ինչու բոչաները սև են լինում և միշտ թափառում են:

—Ուրիշ պատճա՞ռ կայ միթէ, ծիծաղեց մի պաշտօնեայ—լնա՛ թւում է որ սև են, որովհետև շատ են թափառում:

—Ո՛չ, էֆէնդի, ուրիշ պատճառ էլ կայ, նրանք բնականից սևերես են. հրաման տուէք, պատմեմ:

—Պատմի՛ր, Արթէ՛ն, պատմի՛ր քիչ ծիծաղենք...

Այս խօսակցութիւնը տեղի էր ունենում կայմակամի շքեղ սեղանատան մէջ, ճաշի սեղանի վրայ, որի շուրջը բազմել էին 6—7 թիւրք պաշտօնեաներ: Կայմակամը—մի հաստատուն, կարմիր թշերով, զուարճասէր և հանդգնութիւն սիրող անձ, բազմել էր վերին դլուխը: Նրա կողքին՝ քեռաթիրն էր, Պօյարատի չա՛տ ազդեցիկ կառավարչական քարտուղարը. յետոյ— մի քանի հիւրեր Գասթէմունիից եկած: Դուռն մօտ, մի

զարիթիէի և ծառայի շարքում, ձեռքերը սրտի վրայ դրած՝ երևում էր կարճահասակ բոչա Արթէնը, որ խիստ խնամքով դիրք բռնած, աչքերը ապաստղական և ուշադրական արտայայտութեամբ լարած՝ նայում էր կայմակամին և հէնց որ նրա ակնարկը ստանում էր, խոնարհ կծկվում էր և քծնող դէմք կազմում դէմքի վրայ:

Խօսակցութիւնը սկսել էր Ստամբօլից, հասել էր Սինօպ, Գասթէմունի: Մի պաշտօնեայ դանդատել էր իրենց պաշտօնից, ժողովրդից. մի ուրիշը դիտել էր տուել որ շատ դժուար է դորթ ունենալ բոչաների պէս թափառական, անտերես ու դող ժողովրդի հետ և երբորդն էլ սկսել էր պատմել բոչաների մասին լսած տարօրինակութիւնները և ծիծաղեցնել: Կայմակամն էլ գիտէր այդ մասին և մի քանի ծիծաղելի անեկդոտներ էլ ինքն էր պատմել:

Կուշտ ծիծաղել էին այն սովորութեան վրայ, որ բոչան իւր աւանակին տուելի է սիրում, քան զաւակին: Սուրէյա էֆէնդին, ճախ կողմի հիւրը, պատմել էր որ տեսել է ինչպէս մի բոչա սիրուն կին, լուանալիս է եղել էշի մուրթը և համբուրել...

—Զէնէրլիթլէ՛ր... գոչել էր կայմակամը:

—Նրանք էլ գեաւուր են, ասել էր քեռաթիրը—իսկ գեաւուրները ո՛չ մի «հարամ» չդիտեն:

Դրանից յետոյ էր, որ մի պաշտօնեայ հարց էր դրել թէ ինչու այդ ժողովուրդը ա՛յդքան սիրում է թափառել և միշտ արևակէզ է ու սև:

—Սև լինելը հասկանալի է, ասել էր Սուրէյա էֆէնդին. թափառելուցն է. արևն ու քամին են արել:

Եւ այդ ժամանակ Արթէնը, որ ուրախ էր փընտռում իւր վրայ ուշադրութիւն հրաւիրելու, համարձակուել էր մի քայլ առաջ գալ և խնդրել որ իրեն թոյլ տան բացատրելու այդ կէտը:

—Ո՞վ է դա, հարցրեց Սիւրէյան ակնոցները ցցելով քթի վրայ։

—Մեր Արթէնն է, ժպտաց կայմակամը. թէև բոչա է, բայց լաւ մարդ է։

—Հը՛մ, ասեց մի հիւր. ի՞նչ է նշանակում «թէև բոչա է, բայց լաւ մարդ է». եթէ բոչա է, ուրեմն բոչա է։

—Ներողութիւն, առարկեց քեռթիրը. բոչաները նախ և առաջ՝ գեղեցիկ են, յետոյ դող, աներես և ատոտիկ հարամ։

—Իսկ սա՞։

—Արթէնը... ինչ որ ուզես՝ կ'անի. խոնարհ է ոչխարի պէս. մօտ օրերս մահմեդական էլ կը դարձնենք դրան. աներես չէ և կարծես դող էլ չէ... ճիշտ չե՞մ ասում, Արթէն։

—Բոլորովին ճիշտ, էֆէնդի, խոնարհուեց Արթէնը։

—Դէհ, լաւ, ասաց կայմակամը. պատմիր այժմ պատմութիւնդ. ծիծաղելի՞ է։

—Բաւական ծիծաղելի, բէյ էֆէնդի։

—Լա՛ւ... սուրճ բերէք. մէկ կողմից խմենք, միւս կողմից կը լսենք. այնպէս չէ՞, Սիւրէյա էֆէնդի։

—Այո, բէ՛յ, հետաքրքիր է պատմութիւնը։

—Սկսի՛ր, Արթէն, հրամայեց կայմակամը—և լաւ պատմիր հա՛...

Արթէնը խոնարհուեց, ձեռքերը կրծքի վրայ դրաւ և սկսեց.

—Սրանից շատ տարիներ առաջ...

—Հեքեաթ ես պատմում, գոչեց քեռթիրը։

—Ո՛չ, էֆէնդի, պատմում եմ թէ ինչու բոչաների երեսները սեւացան, իրենք թափառական եղան և թէ ինչու նրանք այնքան սիրում են էշին։

—Ի՞նչ ես ասում. էշի մասի՞ն էլ պատմութիւն կայ։

—Այո, էֆէնդիմ։

—Լա՛ւ, լաւ, չարունակիր տեսնենք. ճանեց կայմակամը, տեղաւորուելով թիկնաթոռի մէջ։

—Սրանից շատ տարիներ առաջ,—սկսեց Արթէնը—բոչաները քրիստոնեայ նստակեաց ժողովրդի մի մասն էին։ Այդ ժամանակ կար մի սուրբ եպիսկոպոս, որի հոչակի վրայ նախանձեցին նրա 12 թշնամիները, Սաֆէոս քահանան և Կիլիկինոս սարկաւագը...

—Ի՞նչ, ի՞նչ, միջադատեց կայմակամը. ինչպէս ասացի՞ր... Կիլիս...

—Կիլիկինոս.

—Հա՛, հա՛, հա՛... քրքջացին բոլորը։

—Այս գեաւուրները ի՞նչ խայտառակ անուններ էլ ունին, գոչեց քեռթիրը Կիլիս... Պինոս... թի՛ւ, ջենէրէ՛թ...

—Շարունակիր, դոռաց կայմակամը ծիծաղի միջից. յետո՞յ։

—Յետոյ, շարունակեց Արթէնը, այդ թշնամիները, քահանան և իւր սարկաւագը...

—Կիլիս—Կիլի՞ս...

—Այո, Կիլիկինոսը... Խորհուրդ տրին եպիսկոպոսին խայտառակել։ Մի վատ կնոջ կաշառեցին, ասին նրա մահճակալի տակ թաղցրին, իսկ միւս առաւօտ չուտով բաղմութեամբ մտան եպիսկոպոսի սենեակը և դուրս հանեցին կինը...

—Վա՜հ... ա՛յ թէ գեաւուրներ. ծիծաղեց կայմակամը։ Յետոյ, որպէս թէ կամենալով բացատրութիւն տալ միւսներին, ասաց. գիտէ՞ք, էֆէնդիներ, գեաւուրների խալիֆները (վարդապետ և եպիսկոպոս) օրէնքով կին ունենալ չեն կարող, բայց առանց օրէնքի մեղ նման են, քանիսը որ կամենան...

—Դիտեմ, ասաց Սիւրէյա էֆէնդին — Փաթրիկ էֆէնդին (պատրիարքը) էլ կին չունի։

—Շարունակի՛ր, հրամայեց կայմակամը Արթէնին, — յետոյ։

—Յետոյ, բէյ էֆէնդի՛, երբ եպիսկոպոսը ապչել էր այդ բանից, Աստուծոյ շնորհիւ հասկացաւ որ դաւադրութիւնը կազմել էին քահանան և միւսները, ուստի խստոյն անիծեց նրանց ու ասաց. «Գնացէ՛ք, հանդիսաւոր հնոտէք և երեսնե՛ր սեանայ»։ *) Կնոջ բերանը ծուռեց, որդնոտեց. 12 մարդկանց երեսների կէսը սեացաւ. նրանք քաղաքից դուրս փախան և անտառի մէջ ապրեցին կողով եայն չինելով։ Իրանք ամօթից մարդկանց մէջ չէին կարողանում մտնել, իրանց կնիկներին էլ ուզարկում առեւտուր անելու։ Այդ օրուանից է որ նրանց ցեղը, որ բոչաներն են, թափառում են, սև են. աղամարդիկ տանն են նստում, մաղ գործում, կողով հիւսում, իսկ կնիկները անից տուն ընկած՝ առեւտուր անում։

—Հա՛, հա՛, ասեց կայմակամը ոչ շատ սրտով. ճիշտ պատմութիւն է երևում։ Իսկ ինչո՞ւ էշին ամէն կենդանուց աւելի են սիրում և գգվում։

—Որովհետև, բէյ էֆէնդի, երբ անիծուածները անտառ էին մտնում, բոլոր անասուններն իսկ խուսափում էին նրանցից. միայն էշն էր, որ իւր յիմարութեան շնորհիւ՝ անէծքից բան չէր հասկանում և գնաց նրանց հետ։ Այդ օրուանից էշը նրանց ամենասիրելի կենդանին դարձաւ։

*) Այս զրոյցը պատմուած կայ «Յայտնարարի» մէջ (գրքի, տրէ ամսի, ԺԵ) աւելի ընդարձակ եւ միչ զանազանութեամբ ու այսպիսի եզրակացութեամբ. «Նշանեն որ եղեւ ի դեռնն ջարախօսացն, յազգի նոցա ո՛չ ջնջեցաւ, այլ է մինչեւ ցայսօր»։ Բոշաներն էլ իրանց ծագման մասին այդ զրոյցն են պատմում։ «Յայտնարարի»ի մէջ խահանայի անունը՝ Սարիենոս է եւ սարկաւագինը՝ Կրեսկինդոս։

—Շատ իրաւ է, խօսեց Սիւրէյա էֆէնդին. ես ինքս տեսել եմ թէ որքա՜ն սիրում են նրանք էշին, որքա՜ն խնամում են նրան. ուրիշ անասուն չեն պահում, բացի էշից։

—Եթէ հրաման կը տաք, շարունակեց Արթէնը. այդ մասին էլ մի ծիծաղելի պատմութիւն անեմ։

—Ասա՛, նայե՛նք, գոչեց կայմակամը։

—Մի օր, սկսեց Արթէնը, լեղեն, այսինք որձ էշը, հիւանդանում է։ Մենք բոչաներս շատ հաւատացող, բարեպաշտ մարդիկ ենք։ Մտածում են ի՞նչպէս լաւացնել և վճռում են քահանայ կանչել, որ աւետարան կարդայ գլխին

—Հա՛, հա՛, հա՛... ծիծաղեցին ամէնքը, էշի վրայ «ինջիլ» կարդա՛...

—Այո, շարունակեց Արթէնը. վճռեցին, բայց ի՞նչ անէին որ քահանան չիմանար թէ էշի վրայ է կարդում. մտածեցին մի մեծ չորով այնպէս ծածկել անասունին, որ քահանան նրան հիւանդ մարդ կարծէր։ Այդպէս էլ եղաւ. քահանան գալիս է, հանդիսաւորապէս աւետարանը բաց անում և սկսում... Մի քիչ տեղ բանը լաւ է գնում. մէկ էլ յանկարծ, չգիտեմ ինչի՞ց,—երևի տէրտէրի ձայնը դիւր է գալիս անասունին—էշը գլուխը թափ է տալիս, երկար ականջները դուրս է հանում և զռ՜ռ՜...

Կայմակամն ու հիւրերը սկսեցին սաստիկ խնդալ։ Արթէնը ուրախ էր որ կարողացաւ հաճելի դառնալ։

—Աֆֆերի՛մ Արթէն, գոչեց կայմակամը, աֆֆերիմ պատմութեանդ համար... երևակայում եմ թէ «քէշիշ»ը ինչ դէմք պիտի ստանար, երբ տեսաւ էշի երկար ականջներն ու լսեց սիրուն ձայնը... հա՛, հա՛, հա՛...

—Իսկ ասա՛ տեսնենք, հարցրեց մի քիչ յետոյ Սիւրէյա էֆէնդին. ճի՞շտ է որ երբ աղջկան ամուս-

նացնում են, հարսանիքից յետոյ փեսան մնում է թոնիրը, հարսը պատում է թոնրի շուրջը, խոստանում որ կը մուրայ, կը բերէ և ամուսնուն կը կերակրէ. այն ժամանակ միայն, ասում են, ամուսինը դուրս է գալիս թոնիրից *):

—Վա՛հ, գոչեց կայմակամը. փեսան թոնի՞ր է մտնում. այդ ինչ մասխարութիւն է:

—Ոչ, բէյ էֆէնդի, ասաց Արթէնը. դա սուտ է. ճիշտը այն է, որ եղած պակիից յետոյ, զոյգին մօտեցնում են տան օջախին և երդուել տալիս որ իրանց կեանքն անգամ չխնայեն՝ նրա պատիւը անաղարտ պահելու համար:

—Ա՛յ, դա լաւ բան է, ասաց քեաթիբը. ես չէի կարծում որ այդ գեաւուրները այդքան լաւ բան ունենան...

—Դէ՛հ, աֆֆերիմ Արթէն, գոչեց կայմակամը. այժմ բաւական է ծիծաղենք. հերիք է պատմածներդ:

—Տեսնո՞ւմ էք, բէյ, իսկոյն մէջ մտաւ քեաթիբը դիտաւորութեամբ. Արթէնը շատ սրամիտն է և լաւ էլ ծառայ է. դուք ինքներդ գիտէք որ նա իւր անձը չի խնայիլ տէրութեան և ձեզ համար:

—Գիտեմ, գիտեմ, ժպտաց կայմակամը. Արթէնը լաւ հպատակ է և մեր շահերին լաւ ծառայող...

—Ծառայ ենք, բէյ էֆէնդի, խոնարհուեց Արթէնը. ես միշտ պատրաստ եմ ձեր հրամաններին:

—Ինձ թվում է, բէյ, շարունակեց քեաթիբը, որ

*) Այս թեւ խօսվում է Հայերի մէջ, բայց երկար ստուգելով գտայ որ ո՛չ մի ճշտութիւն չունի. ճշտութիւնը այն է, որ հարսանիքից յետոյ հարս ու փեսային մօտեցնում են օջախին եւ երդուեցնում հաւատարիմ մնալ նրան եւ մաքուր պահել նրա պատիւը: Այս սովորութիւնը շատ տեղ Հայերի մէջ եւս կայ, ինչպես նաեւ Թիւրքերի:

պրանից լաւ միւդիր չէ կարող լինել ըոշանների համար. սովորութիւնները գիտէ, մեզ հաւատարիմ է...

—Ինչ, ասաց կայմակամը. ըոշանները նոր միւդի՞ր են ուզում. եղածից երևի զզուել են:

—Այսինքն... ասաց քեաթիբը, այդ քեաֆտառը մի շատ էլ լաւ մարդ չէ. հպարտ է, յամառ և իւրայինների շահերին աւելի պաշտպան: Բացի դրանից, Արթէնն էլ ասում է որ ըոշանները դժգոհ են նրանից. այնպէս չէ՞, Արթէն.

—Այո՛, էֆէնդի, ըոշանները դժգոհ են նրանից. Մովսէս միւդիրը խպիպ մարդ է, տէրութեան շահերը չի մտածում...

—Լաւ, լաւ, յօրանջեց կայմակամը. դրա մասին վաղը. իսկ այժմ հարկաւոր է հիւրերիս զուարճացնել... է՛, Օսմա՛ն, դարձաւ նա ծառային—չաղրիները եկե՞լ են:

—Այո՛, բէյ, դրսումը սպասում են:

—Կանչի՛ր, կանչի՛ր, սա օղիից էլ բեր:

Եւ երբ ծառան դուրս էր վազում, կայմակամը մի բան փսփսաց քեաթիբի ականջին, ապա կռացաւ դէպի Սիւրէյա էֆէնդին: Սա ժպտաց ու հաւանութեան նշան արաւ, իսկ քեաթիբը ոտքի ելաւ և մօտ գնաց Արթէնին:

—Տե՛ս, Արթէն, ձայնեց կայմակամը, ջահերները լինին և մանաւանդ սիրունները...

Արթէնը քիչ դուռնատուեց, բայց զսպեց իրեն և խոնարհուեց: Քեաթիբը բռնեց նրա թևից և երկուսը միասին դուրս գնացին:

—Հիւանի էֆէնդի, կանչեց նրա ետևից կայմակամը—անպատճառ ըոշաներ լինին, նրանք աւելի կրակոտ են... զարիֆիներ շատ վերցրէք, որ անցեալ անգամուայ պէս չթողնէք ձայն հանեն:

—Էվէ՛թ, էֆէնդիմ, ասաց դրսից քեաթիբը. Արթէնը տեղը որ ցոյց տուաւ, մնացածը հեշտ է...

Յետոյ լուաց թէ ինչպէս Թիւրքը քաջալերում էր բոչային՝ ասելով.

—Գնանք, օղլում, միւդիր եմ դարձնելու քեզ...

V

Եւ Յարութիւնը «միւդիր»=աթոռակալ դարձաւ։ Բոչան փաչա եղաւ։

Դժուար չէր այդ կայմակամի համար։ Այնպիսի՛ օրեր էին, որ ոչ մի բոչա ընդդիմադրելով բան չչահեց։ Ո՞վ էր նրանց գանդատը լսող։ Եկողի վիզը տաքցնում էին և չէին թողնում որ մի բառ իսկ արտասանի։

Մի գեղեցիկ օր աթոռակալ Մովսէսին կանչեցին Սարայ, կայմակամի դէմն անդամ չհանեցին. քեաթիբ էֆէնդին ընդունեց նրան, խստութեամբ չափեց ոտքից մինչև գլուխը և ասաց.

—Աղդդ գանգատվում է քեզանից, ծերո՛ւնի. մեզ ուղարկել են 500 ստորագրութեամբ մի հանրագիր, որի մէջ ասուած է, որ դու անիրաւ ես, կաշառակեր ես...

—Ե՞ս, էֆէ՛նդի.

—Ձա՛յնդ, չինդէնէ, մի՛ համարձակուել խօսքս ընդհատելու. որ դու խիստ ես և... կարծեմ դող...

—Տէ՛ր Աստուած! բացականչեց ծերունին այլայլած։

—Գնա այժմ, շարունակեց քեաթիբը. այլ ևս միւդիր չես. կայմակամ էֆէնդին քեզ հանում է այդ պաշտօնից և հնարհակալ եղիր, որ խնայելով հասակիդ, քեզ դատի չէ ենթարկում... գնա և Սուլթանի կեանքի համար աղօթող եղիր...

Ծերունին գունատ, գրեթէ կիսամեռ՝ դուրս եկաւ։ Նրան չվիրաւորեց այնքան իւր պաշտօնից զրկուիլը,

որքան այն, որ եղել էին իւր ազդակիցների մէջ 500 վատեր, որոնք այդքա՛ն անխիղճ ամբաստանութիւններ էին բարդել նրա վրայ։

Երբ տուն հասաւ՝ հիւանդ էր. անկողին մտաւ։ Որդիները չրջապատեցին ծերունուն և պէտք էր տեսնել նրանց բարկութիւնը, երբ իմացան որ ո՛չ միայն իրենց հօրը անպատիւ կերպով պաշտօնից զրկել էին, այլ և 500 բոչաներ ամբաստանել էին նրան անիրաւութեամբ՝ կաշառակերութեան և դողութեան մէջ։

Երեք որդի ունէր ծերունի աթոռակալը։ Երեքն էլ խոկոյն դուրս թռան, թաղէ թաղ, անէ տուն ընկան և ինչ որ էլ լինէր, ուզեցին իմանալ թէ ո՛վքեր էին այդ անամօթ ամբաստանագիրը ստորագրողները։

Իզուր փնտռեցին. մի հատ էլ չգտան։ Եւ ի՞նչպէս գտնէին. չէ՞ որ ո՛չ մի բոչա գրել-կարդալ չի գիտեր։ Ամէնքը, բացի գրանից, երդվում էին որ իրենց կողմից այդպիսի ստորագրութիւն դնելու ո՛չ մի համաձայնութիւն չեն տուել, առաջարկութիւն իսկ չեն ստացել։ Եւ երբ լսում էին եղածը, սաստիկ զայրանում էին և յուզվում։

Երեկոյեան դէմ Պօյասատի բոլոր բոչաների մեծամեծները հաւաքուեցին աթոռակալի տանը դուռն առաջ և խնդրեցին տեսնել ծերունուն։

Անցնող բոչան, տեսնելով իշխանաներին, կանգ էր առնում և այդպիսով մի մեծ բազմութիւն գոյացաւ աթոռակալի տան առաջ։ Արթէնին էլ երբ պատմեցին եղածը, զարմանք կեղծեց, ցաւ յայտնեց և գնաց բազմութեան հետ ծերունու տան առաջ։

Աթոռակալը կոթնած իւր մեծ որդուն, դուրս եկաւ և նստեց. ժողովուրդը չրջան կազմեց և լուռ՝ սպասում էր լսել նրա բացատրութիւնը։

—Սա մեզ, վարպե՛տ, խօսեց «ահիլ»-ներից (ծեր) մէկը. այս ինչե՛ր լսեցինք քո մասին. ճի՞շդ են բոլորը։

—Ճիշդ է, որդիք, խօսեց ծերունին. ահա քսան տարի է չորս անգամ միւդիր եմ եղել ձեզ, բայց երբէ՛ք այսքան վիրաւորանք չեմ կրել։ Ինձ հեռացնում են իմ պաշտօնից. կայմակամի հրամանն է դա...

—Բայց ո՛չ մեր ցանկութիւնը, միջամտեցին մի քանիսը։

—Մե՛նք միայն իրաւունք ունինք հեռացնել մեր աթոռակալը կամ պահել, գոչեցին եռեւում կանգնածներից շատերը։

—Կայմակամը անիրաւութեամբ է վարվում, ասաց մէկը։

—Մենք կը գանգատենք փաշային...

—Ինձ թողէք խօսեմ դեռ, որդիք. ասաց ծերունին, թողէք բոլորը ասեմ։

Բոլորը լռեցին։

—Օրէնք... իրաւունք!... ասաց ծերունին, այդպիսի բառեր արտասանեցիք։ Դրանք այժմ ո՞վ գիտէ ո՞ր փոշեկից անկիւնում ննջում են. հեռո՛ւ, շա՛տ հեռու, գուցէ հէնց միմիայն այնտեղ, վերևում կան, ուր նստած կայ ինքը Օրէնքն ու իրաւունքը... բայց այստե՞ղ։ Օրէ՞նք է, որ մեզ կոտորում են, հարստահարում, թալանում, մեր աղջիկները խլում։ Օրէ՞նք է, որ առանց աթոռակալի՝ տուրքերը կրկնապատկում են, մեկ տուն մտնում, քարշ տալիս ինչ որ ունինք. ամէն անցնող պաշտօնեայ համարձակ ոտ է ներս կոխում օջախների մէջ, պղծում նրանց, թքում մեզ վրայ, ծաղրում մեր սրբութիւնները, խլում մեր ունեցածը... Իրաւո՞ւնք էր օրինակ, որ անցեալ օրը, գիշերով խլեցին տարան կայմակամի և իւր հիւրերի համար երկու աղջիկ և մի հարս, տանջեցին գազանաբար և միւս առաւօտ բերին ձգեցին այս դռան առաջ!... Օրէ՞նք է այս բոլորը... Է՛հ, չիսօսենք օրէնքի մասին... Փասան այն է,

որ ինձ իմ պաշտօնից հէնց դրա համար հանեցին. ես արդեօք էի նրանց ազատ գործունէութեան, ես բողոքում էի, գանգատւում էի, ընդդիմադրում. մի խօսքով նրանց անհանգիստ էի անում... Բայց ինչ որ է, ես այլ ևս միւդիր չեմ. երկար վարեցի այս պաշտօնը, թող քիչ էլ ուրիշները վարեն. ընտրեցէք մէկին, որ նորից մտածի ձեր մասին, ձեր ցաւերին ցաւակից լինի, ձեզ թիկունք լինի ու ձեզ համար պէտք եղած ժամանակ զոհուի... Ասում եմ, ինձ այնքան ցաւ չի տալիս իմ պաշտօնաթողութիւնը, որքան ա՛յն, որ ձեզանից 500 հոգու մի ստորագրութիւն է գնացել, որով ես ամբաստանուած եմ իբրև անիրաւ, կաշառակեր, գող... Է՛հ, անիրանե՛ր, ծերունի գլխս անգամ չմնայեցիք...

«Որի՞ն անիրաւութիւն արի, որի՞ց կաշառք կերայ, որի՞ց բան գողացայ. թող եղնէ ասի այստեղ, և եթէ մի բանով զրկել եմ նրան, թող ամբողջ ունեցածս առնէ, թող գայ թքէ երեսս, մրէ, մազերս ցեխոտէ...»

—Վարպե՛տ, ասաց ծերունիներից մէկը յուզուած, մի՛ հաւատալ այդ ստորագրութեան, մենք ստուգել տուինք, սուտ է. ո՞ր բոյսն գրել գիտէ. դա քեսթիբի հնարած պատրուակն է, որ քեզ հանի պաշտօնից և ո՞վ գիտէ իւր ո՞ր ուզածին քո տեղը նշանակի։

—Բայց չէ՞ որ էլի մեզ են դիմելու նոր միւդիր ընտրել տալու համար, խօսեց մէկը. էլի մենք պիտի ընտրենք. ընտրենք նորից Մովսէս աղային... ո՞վ է դէմ ասածիս...

—Համաձայն ենք... գոչեցին ամէն կողմից։

—Շնորհակալ եմ, որդիք, ասաց ծերունին. բայց ես չեմ ընդունում, հերիք է, ծերացել եմ. այլ ևս լուութեամբ չեմ կարող դիմանալ, եղած անիրաւութիւնները տեսնել և չկարողանալով ոչինչ անել ձեզ համար, ընտրեցէք մի երիտասարդի...

—Ոչ ոքի չենք ուզում... ձայնեցին ամէն կողմից։

Եւ բոչանները սկսեցին ամէն կողմից այնպէս բարձրաձայն վիճել, որ բազմութիւնը հետզհետէ ստուարանում էր։ Աթոռակալը տեսաւ, որ կարող էր ժողովը վատ հետևանք ունենալ, եւաւ կանգնեց, խնդրեց լռելու ասաց.

—Ցրուեցէք, որդիք, տներդ գնացէք մինչև տեսնենք ինչ կը լինի. այստեղ ժողովուիլը լաւ չէ, կարող է մի փորձանք յառաջացնել։

Եւ երբ տուն էր ուզում մտնել, մի բան յիշեց, կանգ առաւ, դարձաւ և հարցրեց.

—Ո՞ւր է ուստա Արթէնը, այստե՞ղ էր։

—Այստեղ էր, ասաց մէկը. բայց մի քիչ առաջ անհետացաւ։

—Է՛. պրծաւ... ժպտաց դառնութեամբ ծերունին. քիչ յետոյ կայմակամը, քեաթիբը ամէն ինչ կ'իմանան. այն պտուն հիմա այնտեղ է և պատմում է...

Եւ իրաւ, Արթէնը, որ սկզբից եկել և ուշադրութեամբ լսում էր ամէն ինչ, երբ տեսաւ ժողովրդի տրամադրութիւնը վերընտրելու Մովսէսին՝ վաղն ի վաղ գնաց քեաթիբի մօտ և պատմեց բոլորը։

Քեաթիբը այլայլուեց բարկութիւնից, բռունցքով գլխի ֆէսը խփեց ու ճակատի վրայ բերեց, յետոյ վեր թռաւ տեղից ու ոռնաց.

—Ինչ, այդ չինգէնէները համարձակվում են ժողովնե՞ր կազմել, ապստամբե՞լ... ես Հիւսնի չլինիմ, եթէ վաղն եւեթ այդ քեաֆտառին բանտը չնստեցնեմ։

Արթէնը եօթներորդ երկնքումն էր. ուրախ՝ վերադարձաւ տուն։

Բոչանների թաղերում դեռ յուզումը շարունակվում էր։ Խումբ առ խումբ երիտասարդները հաւաքուել էին փողոցների մէջտեղ. կանայք դռների առաջ վիճում էին օրուայ դէպքերի վրայ. և երբ Արթէնը անցնում

էր, բոլորը մէկէն լռում էին, կտտաղի ակնարկներ նետում դէպի նա և ետևից մռմռում.

—Սօլա՛ւ պտու!...

Ամէնքը կարծես զգում էին որ Արթէնի գործն է եղածը և կամ նրա մատը խառն է դրանում։

Մի փողոցից էլ երբ անցնում էր, լսեց որ մի կին ասում էր իւր ամուսնուն.

—Այդ չանը տեսնո՞ւմ ես, բոլորը դրա գործն է, ինչ տղամարդ էք, որ չէք կարողանում սակայնել դրան...

Արթէնը դողաց և սաստիկ վախեցած՝ շտապեց փախչել։ Ճանաչում էր իւր ազգի վրէժխնդրական ոգին, որ թէև ուշ է զարթնում, բայց երբ զարթնում է, սոսկալի է լինում. զրգռում է կնոջը նոյն իսկ՝ դաւաճան ամուսնու, որդուն՝ մատնիչ հօր դէմ...

Փախաւ տուն մտաւ։ Մարգօն դրան առաջն էր և մի քանի դրացի կանանց հետ խօսում էին։ Երբ Արթէնը ներս մտաւ, կանայք երան, մխիթարեց երեսին նայեցին ու կամեցան հեռանալ։

—Ո՞ւր էք գնում, աղջի՛, ասաց Մարգօն. խօսում ենք, մարդս ինչ է խանդարում։

—Չէ՛, Մարգօ, դժուարացաւ մէկը. գնանք, ուշ է։

—Ո՞ւշ. ինչ էք ասում, դեռ արևը նոր է մայր մտնում. կացէք քիչ էլ խօսենք։

Յետոյ յանկարծ նկատեց կանանց կասկածաւոր հայեացքները, որ ուղղվում էին դէպի տան դուռը։ Գուշակեց։

—Ինչ, զուչեց նա դողդոջուն. վախենում էք որ...

—Դիտե՞ս ինչ, Մարգօ, ասաց ցած ձայնով մի կին. կասկածում ենք որ մարդդ բոլոր մեր մէջ եղածները ու խօսածները խաց է տալիս պատներին... Ասում

են որ անցեալ օրուայ Մարտօի հարսի տեղն էլ նա է ցոյց տուել զափթիէներին...

Հաղիւ թէ այդ ասել էր, որ Մարգօն ցատկեց դէպի նա, բուռերը սեղմեց և գոչեց.

—Ինչ ասացի՞ր, սեւաւո՛ր, համարձակվո՞ւմ ես մարդուս հայհոյել...

—Եամա՛ն, աղաչեց միւս կինը. ձայն մի հանիլ, ի սէր Աստուծոյ, մարդդ որ լսի, մեր տունը կը քանդուի. ասում են այժմ կանանց բանտ էլ են չինել...

—Բայց դուք յիմար էք, աղջի, ծիծաղեց ակամայ ծիծաղով Մարգօն. իմ մարդս այդքան չէ ընկել. ո՛չ... ա՛յ, ապասեցէք, ես այս բոպէիս կը կանչեմ իրան այս տեղ և կը տեսնէք որ ձեր զանգատները լիովին սուտ են։

Կանայք շարժուեցին հեռանալու։

—Զգնա՛ք, ապառնաց Մարգօն խիստ բարկութեամբ. ինչ, ամբաստանել գիտէ՞ք. ապասեցէք, որ բոլորիդ երեսին թքեմ... ինչ, իմ մարդս Թիւրքերի՞ տանի մեր կանանց, մասնի՛չ լինի!...

Եւ ասասիկ յուզուած՝ դարձաւ դէպի դուռն ու անբնական խռպոտ ձայնով կանչեց ամուսնուն։

Մի վայրկեան խոր, սոսկալի լռութիւն տիրեց, յետոյ դռան միջից երևաց Արթէնի մեռելային դէմքը։

—Ի՞նչ է եղել, կնի՛կ, ասաց նա նեղացած. ինչո՞ւ ինձ հանգիստ չես թողնում։

Դրացի կանայք սարսափահար լինելիքից՝ ետ էին քաշուել։ Մարգօն մի ոտիւնով թռաւ դէպի ամուսինը, ուժգնութեամբ բռնեց նրա թևից և բուռն շարժմամբ թրև տալով նրան դէպի դուրս, ասաց.

—Խօսիր, մա՛րդ, արդարացիր. գիտե՞ս ինչեր են ասում սրանք, բոլոր լոմերը, ամբողջ աշխարհը... Ասում են, որ դու պսուների լրտես ես, որ դու այդ բոլորից յետոյ, անցեալ երեկոյ էլ Մարտօի հարսին քարշ

ես տուել պսուների համար... Խօսի՛ր, արդարացիր, թքի՛ր դրանց երեսին...

Արթէնը չփոթուեց, կարկամեց և պահ մի ոչինչ չկարողացաւ ասել։

—Ես... ես... թոթովեց նա։ Ցեռոյ յանկարծ, գահավիժմամբ ու ծայրայեղ բարկութեամբ, գրեթէ կատաղաբար ասաց.

—Սուտ են այդ բոլորը և դուք բոլորդ չարի էք (վատ կանայք), որ ստում էք։

—Չարի դու ես, սօղա՛ւ, գոռաց նրա վրայ մի կին և առաջ եկաւ. դեռ հայհոյո՞ւմ ես, բլրած (ուրացող), չէ՞ որ Մարտօի հարսը տեսել է քեզ՝ իրան քարշ տուող զափթիէների հետ և դեռ երեսիդ էլ թքել է... Ա՛յ, գնացէք իրան հարցրէք...

Մարգօն երերաց, արիւնալից աչքերով և վազրի արագութեամբ ցատկեց դէպի ամուսինը, բռնեց նրա երկու ուսագլխից, նայեց աչքերի մէջ մի վայրկեան, յետոյ մի բոպէ շւարած՝ շուրջը նայեց.

—Լէվա՛լ, Լէվա՛լ... մռմռաց կատաղութեամբ։ Եւ երբ կանայք սարսափած հեռանում էին, նա էլ գրեթէ վազելով հեռացաւ և կորեց փողոցը։

Բոլոր անցորդները ապշած կանգ առին, նկատելով այդ ոտարոտիկ, ցեխերի միջից արշաւող, արիւնալից աչքերով և հերարձակ կնոջ, որ վազում էր առանց ոչ ոքի նայելու. վազում էր և գոչում.

—Սօղա՛ւ, սօղա՛ւ... պսու սօղաւ!...

Այդպէս վազնիվազ, հեռալով, Մարգօն անցաւ մի քանի փողոց և ներս մտաւ Մարտօի հիւանդ ընկած հարսի տանը։ Միայն երկու վարկեան մնաց այնտեղ, 5—6 բառ հարցրեց, յետոյ, նոյն արագութեամբ ետ դարձաւ, անցաւ փողոցներից և հասաւ տուն։

Երբ ներս էր մտնում, կատաղութեամբ խլեց նա-

խաղաւթում դրուած կացինը և ոսոնեց դէպի սենեակը։

Բայց սենեակի յատակի վրայ միայն երկու մանուկներն էին, որոնք խաղում էին և ծիծաղում։ Արթէնը չկար։

Մի բոպէ մնաց անշարժ՝ շուարած։ Յետոյ ամբողջ թափը կորուեց, կացինը ձեռքից ընկաւ և նա, թեւերը կախ, գլխիկոր, կարծես ջարդուած՝ նստեց գետնի վրայ ու գլուխը ձեռքերի մէջ առաւ։

Բայց երկար չտևեց այդ։ Բոչա կինը շատ լաւ չգիտէ. մի բոպէ է տևում նրա թուլութիւնը. նա վրճաւական է, յանդուգն և դիմացկուն։

Մարգօն վեր թռաւ. խկցն ծրարեց մի կապոց, յետոյ երկու զարմացած մանուկների ձեռքերը բռնեց և, չնայելով մթան, փողոց դուրս եկաւ։

Դրացիներից շատերը հեռու կանգնած՝ հետաքրքրութեամբ ու կարեկցութեամբ նայում էին և երբ տեսան Մարգօի երգը, յաւելից ձայներ հանեցին։

—Ա՛հ, գնում է, հեռանում է...

—Շա՛տ լաւ է անում... անիծեալ օջախ է այդ տունը... չան օջախ եղաւ...

—Կեցցէ Մարգօն!...

—Ո՞ւր է գնում արդեօք։

Ինքն էլ չգիտէր Մարգօն թէ ո՛ւր էր գնում։ Վճռել էր հեռանալ այդ տնից, իւր մասնիչ, սառցացած ամուսնուց. գնալ թափառել այրի կնոջ պէս, աշխարհին հռչակել որ իւր լախտը (ամուսին) մեռել էր պուտի պէս, որ ամուսին չէ ունեցել և որ չէ՛ ուզում ո՛չ ոքի երեսը տեսնել. այո՛, ոչ ոքի...

Պահ մի կանգ առաւ փողոցի մէջտեղ, այսպէս կողմ նայեց, ուշադրութիւն չդարձրեց փոքրիկի լացին, բարկութեամբ ցնցեց նրան, ապա ուղղուեց դէպի աջ։

Այդ միջոցին փողոցի մի կողմից երևաց բոչաների հայ քահանան *), որ գնում էր մի մեռնողի հաղորդելու։ Տեսնելով փողոցի միջից քայլող Մարգօին և նրան դիտողներին, հարցրեց թէ ինչ էր եղել։

—Արթէնի կինն է, տէր հայր, ասացին նրան. մարդը պուտ է դարձել և ինքը հեռանում է։

Քահանան գլուխը երերցրեց և կամենում էր հեռանալ, բայց մի բոչա կին խնդրեց նրան որ մօտ գնար և համոզէր թշուառ կնոջ, գիշերով դուրս չգալ աւանից։

Քահանան քիչ վարանեց, բայց յետոյ գնաց։

—Մա՛րգօ, ձայնեց նա։

Գնչուհին դարձաւ։

—Մարգօ, ո՞ւր ես գնում այսպէս գիշերով, մեղք ես, դարձիր տուն։

—Տո՞ւն... ասաց Մարգօն—էլ տուն չունիմ. օջախս պղծուեց, մոխիրս ապականուեց... էլ տուն չունիմ...

—Իսկ մա՞րդդ։

—Մարդ չունիմ... մարդս սօղաւ էր, չպրտեցի... մարդ չունիմ, անտէր եմ, անտէր...

Բոչաները մօտեցել էին։

—Մի գնալ գիշերով, Մա՛րգօ, մէջ ընկաւ մի կին. երեխայքը մեղք են և յետոյ դիտե՛ս, դաշտում շատ էլ ապահով չէ...

Մարգօն ոչինչ չասաց, գլխովը միայն բացասական նշան արաւ և առանց հետ նայելու՝ հեռացաւ։ Ցուցիչ

*) Բոշաների միջից երբիմ քահանայ կամ եկեղեցոյ պաշտօնեայ չեն ընտրվում. ըստ «Յայտարարութ»ի անիծվի, նրանք հանարվում են «անիծեալ ցեղ»։ Նրանց քահանան Հայ է եւ բոլոր ծեսերը կատարվում են Հայոց եկեղեցում, իսկ թափառելու միջոցին առանց ծեսի է լինում ամեն ինչ։

էր տեսարանը. բոլորը կանգնել նայում էին նրա ետևից. մի քանիսները զայրացած՝ անէծք ու հայհոյանք էին թափում Արթէնի հասցէին։

Եւ Մարգօն հեռացաւ այդպէս՝ քարշ տալով իւր հետ երկու կիսամերկ որբերին։

Ելաւ նա աւանից, առանց ետ նայելու կորեց դաշտը և կէս գիշերից շատ անց, գրեթէ յոգնած ու ջարդուած, ցեխաթաթախ, մտաւ Զիլէ գիւղը և ընկաւ հօր դռան առաջ։

Ծերունի հայրն էր դուռ բացողը։ Ճրագը ձեռքին մօտեցաւ նրանց։

—Բարի երեկոյ, բա՛բ... (հայր).

—Մա՞րգօ... գոչեց ծերունին։

—Այդ ես եմ, բա՛բ... բայց չեմ եկել մնալու, այլ քեզ պահ տալու իմ երկու որդիներին... Մարդս պատերազմ գնաց, իւր ազգակիցներին մատնեց, նրանց աղջիկներին ու հարսներին քարշ տուեց պուսների համար, չան պէս քծնում է նրանց ոտների տակ... թողի նրան, բա՛բ. լաւ չարի՞...

—Լաւ արիր, աղջիկս, ե՛կ օրհնեմ քեզ։

—Սպասիր, հա՛յր, ես տունդ—այս օրհնած օջախը չեմ մտնիլ, ես անպատուած կին եմ. օջախդ արատաւորեցին և մինչև չսրբեմ նրա բիծը, չեմ ներս մտնելու այնտեղ... ես գնում եմ. կամ կը մեռնեմ և կամ օջախդ կը մաքրեմ... լաւ չե՞մ անում, բա՛բ...

—Լաւ ես անում, աղջիկս. գնա՛, Աստուած քեզ հետ։

Ցետոյ ծերունին դողդոջուն բազուկներով գրկեց աղջկան, համբուրեց, արտասուալից աչքերով բռնեց երկու որբերի ձեռքը և ներս մտաւ։

Մարգօն մի բոպէ նայեց նրանց ետևից, աչքերը լի արտասուքով. մի քայլ արաւ վազելու դէպի զաւակները, պարզեց ձեռքերը, բայց յանկարծ կանգ առաւ, կնճռեց ճակատը, բուռներով սրբեց աչքերը, թօթափեց իրան և ամուր ու անյողդոդ քայլերով հեռացաւ, մրաներով գիշերային մթութեան մէջ...

VI

Դրանից յետոյ Արթէնին միւդիր չինեցին և սկսեցին բոչաների համար սոսկալի օրեր։ Մի թեթև ընդդիմադրութիւն՝ Արթէնի կողմից ներկայացվում էր որպէս ըմբոստութիւն իշխանութեան դէմ և ընդդիմադրող բոչան կամ կորվում էր կամ փտում բանտերի մէջ։

Արթէն շատ սիրելի էր դարձել նախ կայմակամին, յետոյ բոլոր պաշտօնեաներին։ Աստում էին մինչև խակ, որ մահմեդականացել էր, միշտ մզկիթ էր գնում։ Այն ճիշտ էր, որ կնոջ անհետանալուց յետոյ, մի թիւրք կին էր բերել և պահում էր. մոլան յաճախ էր մտնում նրա տունը. թիւրք պաշտօնեաներ և մանաւանդ քեաթիբը ուղղակի իրանց տունն էին շինել Արթէնի խրճիթը. ամէն ուրբաթ օր գալիս էին և աղմկալից քէֆեր սարքում. քէֆեր, որոնք միշտ վերջանում էին խայտառակութիւններով...

Բոչաները դիմացան միայն մի քանի ամիս. բայց երբ եկաւ գարունը և բոչայական կրակոտ, չարժուն ու անհամբեր կանայք պատրաստուեցին դուրս գնելու, ո՛չ մի կին չկամեցաւ տեղիցը շարժուել, քանի Արթէնը միւդիր կը մնար Պօյապատում։ Ասենք Արթէնը ուրախացաւ. բայց իւր եկամուտը մտածելով, մտաբերեց որ անշարժութիւնը նեղստացնել սկսեց բոլորին։

Կանայք այդ անսովոր դրութիւնից նեղուելով, սկսեցին գրգռուել և գրգռել ամուսիններին՝ եղած դրութեան դէմ։ Էլի կոյտ-կոյտ, ժողովներ, այս անգամ գիշերով և գաղտնի։

Կանայք էին գրեթէ այդ ժողովներ կազմակերպողները, գրգռողները։ Հաւաքվում էին մէկի մօտ, կանչում՝ էին ամուսիններին, նախատում նրանց և ստիպում որ խորհեն այդ դրութիւնից ազատուելու համար։

Երկար խորհելու պէտք չեղաւ։ Խնդիրը պարզ էր։ Վճռուեց միաձայն, որ բոլորի պատճառը ուտտա Արթէնն էր, ուստի և նրան հարկաւոր էր տապալել։

Եւ միւս օր առաւօտն էր ահա, որ Պոյտպատի բոշաները, առաջնորդն ունենալով իրանց կանանց, դուրս խուժեցին թաղերից և հաւաքուեցան կայմակամի դռան առաջ։

Մեծ յուզում տիրեց աւանում. մօտ 2—3000 հոգի վիճելով, խօսելով հասան կայմակամի պատշգամի տակ և պահանջում էին խօսել բէյի հետ։ Զինուորների մի փոքրիկ խումբ, քեաթիբի պահանջով մօտ եկաւ ամբոխը ցրուելու, բայց ոչինչ չկարողացաւ անել։

Քեաթիբը բարկութիւնից կորցրել էր իրեն, դեռ կայմակամին չէին իմաց տուել. քնել էր նա։

—Մեզ կոոր կոոր կ'անեն, քեաթիբ էֆէնդի, արդարանում էր զինուորների գլխաւորը. բացի դրանից ինչպէս յարձակուեմ ես կանանց վրայ, ինչ կ'ասեն ինձ։

—Վախկոտ էք, իւզբաշի, վախկոտ էք, ոռնում էր քեաթիբը։

—Իսկ դուք բոշա կանանց կատաղութեանը հանդիպել էք, արդարանում էր աստիճանաւորը—ոչ. ուրեմն չեմ ցանկանում որ հանդիպէք... վագրեր են, գիտէ՞ք, մի մի վագրեր... և յետոյ, չէ՞ որ կանայք

են. ե՞րբ է տեսնուած որ կանանց վրայ զէնքով յարձակուեն...

—Բայց կայմակամի հրամանն է այդ...

—Թող կայմակամը ինքը հրամայէ... Մարդիկ հանդարտութեամբ եկել՝ ուզում են բէյի հետ խօսել. ինչո՞ւ չէք թողում. դէմ չեն դնում, զէնք չունին. նրանց պահանջը միայն այն է, որ իրանց կեղտոտ միւդիրին պաշտօնից հանէք...

—Դուք ինչո՞ւ էք խառնվում այդպիսի գործերի մէջ...

—Աստուած ոչ անի. ես ե՞րբ եմ խառնվում... միայն այսքան կ'ասեմ ձեզ, որ ես զինուորներիս չեմ հրամայիլ յարձակում գործելու. համեցէք ինքներդ հրամայեցէք և հետևանքի համար էլ պատասխանատու եղէք։

Կայմակամն այդ միջոցին զարթնեց աղմուկից և սաստիկ վախեցաւ, երբ իմացաւ որ 2—3000 բոշաներ, այն էլ կէսը կանայք, հաւաքուել են դռան առաջ և ուզում են իրեն տեսնել։

—Ինչ են ուզում ինձնից, ո՞ւր է քեաթիբը. չ՛ուտ քեաթիբին կանչեցէք։

—Ուղարկուեց կանչելու, բէյ. ասաց ծառան. բոշաներն էլ եկել են խնդրելու որ իրենց միւդիրին, այդ Արթէնին հանէք պաշտօնից...

—Այդ է բոլորը... դուրս ձգէք ուրեմն այդ շանը, բանտարկէք, կախէք դրան...

Բայց քեաթիբը վրայ հասաւ և կայմակամի հրամանների դէմն առաւ։

—Բէ՛յ էֆէնդի, մօտեցաւ նա. եթէ այդ գեաւուրների ասածը անէք այսօր, վաղն էլ ուրիշ բան կ'ուզեն։ Ինձ իմաց տուին որ եկել են հաչիւ պահանջելու թէ ո՞վ է իրանց աղջիկներն ու հարսները յափշտակել տուողը. իմացել են որ դուք էք և...

Կայմակամը գունատուեց և վախից կարկամեց։

—Զինուա՞ծ են, քեռի՛ր, հարցրեց նա քիչ յետոյ. զինուա՞ծ են, չա՞տ են։

—Ո՛չ, բէյ, վախենալու ոչինչ չկայ, բայց հարկաւոր է մի կերպով այժմ ցրուել նրանց, իսկ յետոյ դժուար չէ գրգռողներին մէկ-մէկ բռնել և այդ բոլորը խեղդել, ոչնչացնել։

Այդ միջոցին լսուեց խառնիճաղանճ աղաղակ։ Գնչուհիներն էին, որ դրսում գոռում, կայմակամին էին պահանջում տեսնել։

—Ձեզ տեսնել են ուզում, բէյ, ներս վազեց մի պաշտօնեայ. շտապեցէ՛ք, առաջանում են և սպառնական դիրք ստանում։

Եւ իրաւ, դրսում անհամբերութիւնից բոշաները սկսեցին նախ քրթմնջել, յետոյ բարձրաձայն բողոքել և հուսկ ուրեմն սպառնալ։ Ետևից հրում էին և առաջանալու հրաւիրում։ Երևան եկան մահակներ, բռունցքներ...

Կայմակամը լուսամուտի վարագոյրի ետևից դուրս նայեց և երբ այդ բոլորը տեսաւ, ծնկները կթմտեցին։

—Ի՞նչ անել, քեռի՛ր, հարցրեց նա վախից թոթովելով։

—Պէտք է երևալ նրանց, բէյ, խորհուրդ տուաւ քեռի՛րը. երևալ և հանդարտեցնել, խոստանալ նրանց ուզածը կատարել, ցրուելու յորդորել...

—Իսկ եթէ հարուածեն, եթէ յարձակուե՞ն։

—Չեն անիլ, բէ՛յ, չեն համարձակուիլ... չո՛ւտ դուրս գնացէ՛ք։

Աղաղակը նորից կրկնուեց և այս անգամ այնպէս ուժգին ու սպառնալից, որ դղրդեցրեց ամբողջ շէնքը։

Կայմակամը մեռելի պէս գունատուած՝ պատշգամն ելաւ։ Բոշաները երբ տեսան նրան, մի ոռնոց

բարձրացրին։ Ամէն ոք խօսում էր, խառն, անհասկանալի, ձեռքերը երկինք էին բարձրանում, տեսնվում էին մազալից գլուխներ, արևակէզ դէմքեր, բաց բերաններ...

—Խօսէ՛ք, բէյ, խօսէ՛ք շուտ, քաջալերեց քեռի՛ր գոռան միջից։

Եւ կայմակամը մի քանի անգամ բերան բաց արաւ, յետոյ վախից դողացող ձայնով ասաց.

—Հանդարտեցէ՛ք, որդի՛ք... ի՞նչ է՛ք ուզում, ի՞նչու է՛ք աղմուկ հանում... Ահա ես եմ, ձեր կայմակամը. չէ՞ որ միշտ բարի եմ եղել դէպի ձեզ, սիրելիներս... չէ՞ որ ես ձեզ համարել եմ հանդարտ, լաւ ժողովուրդ. ես ինքս անձամբ էլ ձեզ երբէ՛ք. չեմ նեղացրել. եթէ ձեզ զուլում է եղել, մեղաւորն էլ ես չեմ, հաւատացէ՛ք, իմ պաշտօնեաներն են...

—Չենք ուզում միւդիրին... ոռնաց ամբոխը. ի բաց քեռի՛ր!...

—Անիրաւութի՛ւն են անում...

Ձայներն ու խօսքերը նորից այնքա՛ն խառնուեցին միմեանց, որ կայմակամը ոչինչ չհասկացաւ։

—Լա՛ւ, լաւ, ասաց նա, նորից ձեռքը բարձրացնելով, ես գիտեմ ձեր ուզածը... բոլո՛ր, բոլորը կը կատարեմ. իսկ առ այժմ, քոյրե՛ր, ցրուեցէ՛ք և խրատեցէ՛ք ձեր ամուսիններին՝ խելօք մնալ... ես միշտ բարի եմ եղել դէպի ձեզ. էլի կը լինիմ. ինչ որ կամենում է՛ք, կը կատարուի, իմ կայմակամական խօսքս թող վկայ լինի...

—Կեցցէ՛ մեր կայմակամը, գոռացին շատերը ամբոխից։

Կայմակամը սիրտ առաւ, ճակատի քրտինքը սրբեց և դառնալով դէպի դուռը՝ նայեց պահուած քեռի՛ր։

—Կարծեմ լաւ խօսեցի, չէ՞, քեռի՛ր։

—Այո... բայց դեռ չեն գնում... յորդորեցէք, բէյ, յորդորեցէք որ ցրուին։

—Հը՞, այո՛, դեռ չեն գնում. նորից վախեցած՝ ամբոխին նայեց կայմակամը. և ինչ որ փախում են... քեաթի՛բ, յանկարծ մի գնդակ չուղարկե՞ն ինձ...

Ու ետ քաշուեց դէպի դուռը։

—Ո՞ւր էք գնում, գոչեց քեաթիբը. ի սէր Աստուծոյ, տեղներիցդ մի՛ շարժուէք. խօսեցէք, ժամանակ չահէք մինչև հանդարտեն... յորդորեցէք...

Բայց ըոշանները սկսում էին հանդարտել. կայմակամի խոստումը մեղմացրեց նրանց և այժմ խորհուրդ էին անում ցրուելու։

—Հա՛, խօսեց յանկարծ կայմակամը նորից առաջ գալով. քուրիկներս, ասէք տեսնենք, ի՞նչ է ձեր ուզածը...

—Այդ չէ, այդ մի հարցնէք, թելադրեց դռան միջից քեաթիբը խուսոտ ձայնով։

... Այսինքն, շփոթուեց կայմակամը. այսօր լաւ կ'անէք եթէ ցրուէք, յետոյ մի քանի մարդ կ'ուղարկէք ինձ մօտ և ձեր ուզածը կը յայտնէք... այդպէս լաւ է... այո՛, դէ՛հ, երթաք բարև, քոյրերս, ցրուեցէք և թողէք որ գնամ առաւօտեան աղօթքս անեմ...

Այն ժամանակ կանանցից զատուեց մի երկարահասակ, ջահել և սիրուն դէմքով կին ու առաջ եկաւ։ Նրան հետևեցին երկու ուրիշ մատաղահաս կանայք էլ և այդպէս՝ երեքը միասին, ետևից ունենալով մի տղամարդ՝ կանգ առին ճիշդ պատշգամի տակ։

—Բէյ էֆենդի՛, խօսեց երկարահասակ գնչուհին. մեր ուզածը շատ բան չէ։ Մեր կամքի հակառակ պաշտօնանկ արիք մեր միւդիրին և փոխարէնը դրիք մի անպիտանի, մի չան, որի անիրաւութիւնները այնքան շատ են, որ սիւն դառան՝ երկնքին հասան... Մեզ տանջում է, մեր տունը քանդում, մեր կանանց, աղջիկներին անպատուում... էլ կեանք չունինք մենք... բողոքում ենք և խնդրում, որ դուրս ձգէք այդ միւդիրին և իրաւունք տաք, որ ուրիշին ընտրենք և ո՛րին որ մենք ընտրենք, հաստատէք խսկոյն...

Կայմակամը ապշեց. չէր սպասում այդքան էժանով պրծնել։

—Ի՞նչ, գոչեց նա ուրախութեամբ. միայն ա՞յդ է ձեր ուզածը. ուրախութեամբ, քոյրերս, ամենայն ուրախութեամբ... ձեր միւդիրը պաշտօնանկ է այս րոպէիս... դէ՛հ, ցրուեցէք և գնացէք ընտրէք մէկին, որ վաւերացնեմ. դէ՛հ, խելօք զաւակներս, ցրուեցէք...

—Մենք արդէն ընտրել ենք մեր նոր միւդիրին, բէյ, կանչեց գնչուհին. Սարօենց Խեչօին կ'ուզենք...

—Այո՛, այո, ձայնեց ամբոխը։

Բայց յանկարծ, երբ մի ակնթարթ լռութիւն էր տիրում, ետևի կողմից մի ձայն բարձրացաւ, որ ասում էր։

—Ո՛չ, ո՛չ. Կարապետին, Մարկոսենց Կարապետին կ'ուզենք։

—Այո՛, այո, արձագանք տուին մի քանի տասնեակ ձայներ—Կարապետին կ'ուզենք։

Գնչուհիներն ու առաջ կանգնած ըոշանները ապշած՝ դարձան և զարմացան թէ որտեղի՞ց էր դոյացել այդ կուսակցութիւնը, որ կամենում էր Կարապետի պէս մի թոյլ, գրեթէ հիւանդ անձի միւդիր ընտրել։

—Ի՞նչ էք ասում, ծօ՛, ոռնաց մի ըոշա՝ այդ նոր կուսակցութեան. խեւցա՞ք...

—Խեւը դո՛ւք էք, ձայնեց ետևից մէկը. մենք Կարապետը կ'ուզենք։

—Այ չոռ ու ցաւ ուզէք, ախմախնե՛ր...

—Չոռ ու ցաւը դուք ուզէք...

Եւ կռիւն ու վէճը սկսեց. մի խառն, զզուելի աղմուկ լցրեց հրապարակը։ Բոշաները սկսեցին խմբերի բաժանուել, վիճել, մինչև անդամ իրարու ծեծել և հուսկ ուրեմն բոլորովին ցրուել։

Կայմակամն էլ էր ապշել և պատչգամի վրայ կանգնած՝ դիտում էր այդ տեսարանը։ Քեաթիբը ըմբռնեց բանը ինչում լինելը և ուրախութիւնից սկսեց ձեռները շփել ու դուրս եկաւ թագաստոցից։

—Այժմ վտանգն անցաւ բոլորովին, ասաց նա. այդ գեաւուրները մեր ձեռքն են։

—Միւդիրը ո՞վ է սակայն, հարցրեց կայմակամը. որի՞ն ընտրեցին։

—Ոչ ոքի. Արթէնը նոյն պաշտօնի մէջ կը մնայ, իսկ դրանց այժը այժմ մեր ձեռքումն է...

Կայմակամը յոգնած՝ ներս քաշուեց և երբ քեաթիբը մենակ մնաց, կանչեց զափթիէների սպային պատչգամը, ձեռքով ցոյց տուաւ հեռացող բոշաներին և ասաց.

—Դու տեսա՞ր թէ ո՛վքեր էին խօսող կանանց գլխաւորները, երեք կին, մի տղամարդ։

—Այո, էֆէնդի։

—Գիշեր, չեղած, կ'ուզեմ որ կանչէք իմ հարեմը մտնեն ձեռքերն ու ոտները կապած, իսկ տղամարդին՝ բանտ...

Սպան հաւաքեց մի քանի զափթիէներ և գնաց բոշաների ետևից։

Բոշաները վիճելով, կռուելով հասան իրանց թաղերը։ Այնտեղ միայն գլխի ընկան, որ այդ երկպառակութիւնը Արթէնի պատրաստածն էր. իսկ երբ մի քանի ժամ յետոյ լուր տարածուեց, որ երեք կանանց տարել են, յուզումը աւելի սաստկացաւ բոշաների թաղերում։

Այս անդամ ժողովները վճռեցին Արթէնին սպա-

նել և նրա տունը տակն ու վրայ անել, բայց Արթէնը զգոյշ էր. կէսօր չեղած, մի խումբ զինուորներ բերեց և բանակել տուաւ իւր դռան առաջ, ինքն էլ միշտ երկու զինուած զափթիէների հետ էր ման գալիս։

Բոշաները սկսեցին յուսահատուել։

Գործերը ահա այդպիսի դրութեան մէջ էին, երբ երեկոյեան դէմ բոշաների թաղը մտաւ մի սեւադէմ, ցեխաթաթաւ կին և բաղխեց աթոռակալ Մովսէսի դուռը։

Մեծ որդին բաց արաւ։

—Որի՞ն ես ուզում, կի՞ն։

—Աթոռակալ Մովսէսին։

—Հայրս է և հիւանդ... մտի՛ր, դու ո՞վ ես։

—Ճանապարհ տուր մտնեմ և կը տեսնես։

Ու կինը համարձակ ներս մտաւ, անցաւ սենեակը և երբ ճրագի մօտ էր հասել, ասաց։

—Ճանաչեցի՞ք։

—Մարդո՛... ձայնեցին բոլորը։

Զարմանքը ընդհանուր էր։ Ամիսներից ի վեր կորսուած, մեռած համարուածը այժմ յայտնվում էր և կանգնած էր իւրայիններին մէջ. այժմ ոչ առաջուայ պէս թարմ ու գեղեցիկ, այլ յոգնած, պառաւած, կնճիռներով լի և սևացած, թախծալից դէմքով։

VII

Որքան որ զինուորներ էին պահպանում տունը, այնուամենայնիւ Արթէնը խիստ անհանգիստ էր թէ դրսում և թէ մանաւանդ ներսում—գիշերը։ Մի փոքրիկ ձայն նրան կարծել էր տալիս, թէ տանիքի վրայ

մարդ կայ, թէ պատն են ծակում և կամ թէ խմբովին յարձակուել են լուսամուտի կողմից։

Գրեթէ չէր քնում, առաւօտ շուտով ելնում էր և պահապան զինուորների մօտ գնում։ Բարկանում էր մանաւանդ, երբ տեսնում էր, որ իւր թիւրք կինը կամ զինուորները հանգիստ քնած էին։

Մի քանի դառն, անքուն օրեր անցնելուց յետոյ, քիչ հանդստացել էր. բայց զգուշաւոր լինելով, հակոզութիւնը աւելի շատացրեց, առատ նուէրներ տուեց զինուորներին և պատուէր տուաւ ոչ ոքի իւր մօտ չը թողնել։

Բայց մի երեկոյ, երբ փողոց ելաւ, տեսաւ որ երկու զինուորներ փակել էին մի կնոջ դիմաց, չէին թողնում առաջանալու, իսկ ինքը գոռում էր.

—Բաց թողէք, ես միւդիրի կինն եմ։

Այդ ձայնը և խօսքերը սարսափեցրին Արթէնին։ Մարգօն էր, կորուած և մեռած կարծուած Մարգօն։

Մարգօն տեսաւ նրան։

—Մարգո՛, այդ դո՞ւ ես, կանչեց Արթէնը։

—Ես եմ, Արթէ՛ն, ասա որ թողնեն։

Արթէնը հրամայեց զինուորներին կնոջ իւր մօտ թողնել և Մարգօն մօտեցաւ ամուսնուն։

—Բարև, Արթէ՛ն, ասաց նա ծիծաղելով. տունդ այնքա՞ն անապահով է, որ պատներով ես պահպանում...

Ու այր և կին դրանից յետոյ, լռելեայն քայլեցին մինչև տուն։

—Լսել եմ, շարունակեց Մարգօն, որ մի պատ կին ես ներ բերել... Դու անպատուեցիր հօրս օջախը և իմ օջախը։ Պէտք է մաքրել այդ. այո՛, երկուսն էլ պէտք է մաքրել... նե՛ր մտիր։

—Ինչպէս, Մարգո, զարմացաւ Արթէնը. ուզում ես մտնե՞լ։

—Այո՛... բայց առաջ դու մտիր և այդ պատ կնոջը դուրս շպրտի՛ր... առաջ գնա՛, շուտ։

Եւ այնպէս հրամայական ու սպառնալից էր ձայնը, որ Արթէնը ակամայից հնազանդուեց, տուն մտաւ և կնոջը հօր տուն ուղարկեց։

Մարգօն արհամարհանօք ու զզուանօք նայեց չէմքից դուրս եկող թիւրք կնոջ, յետոյ յաղթական՝ ներս մտաւ և մօտեցաւ թոնիրին։

Այնտեղ արդէն խիստ կրակ էր վառուած և բոցը բարձրանում էր մինչև բերանը։

—Պղծուած է, ասաց նա Արթէնին դառնալով. ես պիտի մաքրեմ։

Յետոյ յանկարծ անկիւնը դրեց մահակը, մօտ գնաց ամուսնուն, բռնեց նրա ուսերից, թոթուեց և ասաց.

—Այժմ ճիշտ ասա ինձ, Արթէ՛ն, էլ թագցնել մի՛ մտածիլ և ո՛չ էլ ստել. ասա՛, պատ՞ւ ես դարձել։

—Սխալ է այդ, Մարգո, ասաց Արթէնը։

—Ապա ինչո՞ւ ես միւդիր եղել հակառակ լոմերի ցանկութեան, ինչո՞ւ թիւրք կինը մեր օջախի մէջ, ինչո՞ւ բոլոր լոմերը կատաղել են քո դէմ։

—Թշնամութիւն է բոլորը. դու գիտես, որ ես թշնամիներ չատ ունիմ... Դրանք թող, Մարգո՛, ուրախ եմ, որ եկել ես. ասա՛, ո՞րտեղ էիր մինչև այժմ։

Մարգօն չպատասխանեց, թողեց ամուսնուն, պարտեց սենեակի շուրջը, ոտքով դէս ու դէն շպրտեց հանդիպած կարասիքը, յետոյ նոր բերած իրեղէնները գցեց արհամարհութեամբ և ասաց.

—Ուրեմն այստե՞ղ է, հա՞, այս օջախի չո՞ւրջը՝ որ պատները բերում են լոմ կանանց անպատուելու. այստե՞ղ, ուր դուք բոլորդ լիրը քէֆեր էք անում և լոմերին նեղացնելու հնարքներ մտածում... Վա՛յ, քեզ,

Արթէն, երկու օջախ է քո դէմ վրէժ դառում, վա՛յ քեզ...

Ցեռոյ դարձաւ թոնրի շուրջը և մօտեցաւ ամուսնուն:

—Հա՛, ասաց նա. ուզում էիր իմանալ թէ ո՞րտեղ էի մինչև այժմ... լա՛ւ, կ'ասեմ:

—Ասա՛:

—Ստամբոլ էի... Ձե՞ս հաւատում, զարմանո՞ւմ ես. ի՞նչ կայ զարմանալու: Ստամբոլ էի, փնտռեցի այդ Արիֆ կոչուող պուլն, բայց չգտայ. նրան ուղարկել են Երզնկա... Եկել եմ որդիներս տեսնեմ և ապա գնամ դէպի Երզնկա... Դու գիտես որ ուխտել եմ նրա արիւնը թափել և հօրս անպատուած օջախը սրբել... Այո՛, անպատուած օջախը արիւնով միայն կարելի է մաքրել. այդպէս է մտածում լոմը, այդպէս մտածում եմ՝ և ես... Դու ի՞նչ կ'ասես դրան:

—Այդպէս է... կմկմաց Արթէնը անհանգստութեամբ. բայց ինչ որ յիմար բաներ ես խօսում... Ես գործ ունիմ, ուզում եմ դուրս գնալ. ասա՛, մտադի՞ր ես մնալ, թէ ոչ...

—Ասացի որ գնալու եմ, բայց այսօր դեռ հիւր եմ քեզ:

—Եթէ այդպէս է, ինչո՞ւ եկար, կարօտցե՞լ էիր ինձ. չէ՞ որ դու ինձ երբէք չես սիրել:

—Ճիշտ է այդ, դու սիրելու մարդ չես եղել երբէք: Դու պուս ես, եղբայրներիդ մատնող... Ես զիւղերումն էի, լսեցի որ լոմերը քեզ չեն ուզում, որ քեզ դէմ են և որ դու յամառում ես մնալու միդիրութեան մէջ և այժ ես բանեցնում եղբայրներիդ դէմ... Մտածեցի որ Արթէնը իւր կնոջ աղաչանք կը լսէ և խելքի կը դայ...

—Շա՛տ ի զուր ես եկել, ծիծաղեց Արթէնը հեգնօրէն. ե՞ս միդիրութիւնս թողնեմ. այսքա՞ն թանգ գնով ձեռք բերուած պաշտօնը թողնել!...

—Այո՛, այդքան ցածութիւններով ձեռք բերած պաշտօնդ... Լսի՛ր, Արթէն, մի՞թէ խակապէս չ'զզուեցիր արածներիդդ, մի՞թէ չձանձրացար այդ ստոր, լղոզ դիրքիդդ... Թո՛ղ, եկ՝ գնանք ինձ հետ. ես քեզ կը ներեմ, կը մուրամ, կը թափառեմ՝ քեզ կը պահեմ, քեզ կը սիրեմ, որդիներդ մօտներս կ'առնենք, կ'երթանք հեռու մի տեղ ապրելու և այնտեղ արածներդ կը քաւես... Լսի՛ր, Արթէն, ես դեռ չեմ պառաւել բոլորովին, դեռ իմ մէջ կեանք կայ, թիւրք կնոջից աւելի կեանք. այդ բոլորը քեզ կը նուիրեմ, քեզ համար կը գործեմ, միայն քեզ համար կը մտածեմ. գնանք, Արթէն, գնանք զաւակներդ առնենք և ձեռք ձեռքի տուած՝ հեռանանք այս երկրից հեռո՛ւ, սարեր ու ծովեր հեռու...

Եւ Մարգօն այդ ասելով, յուզուած մօտ էր գնացել ամուսնուն ու մի ձեռով գրկել էր վիզը:

Արթէնը դէմքը կնճռած, լսեց մինչև վերջ, յետոյ ցնցուեց, ազատուեց կնոջ գրկից և գոչեց.

—Գնա բանիդ, տխմար, եկել ես ինձ խարեցո՞ւ, իմ փառաւոր կեանքը թողնեմ և գնամ բոչայի կեանք վարեմ... Գնա՛, գնա որտեղից եկել ես, ես լոմ չեմ այլ ես...

—Լոմ չե՞ս, գոռաց Մարգօն. լոմ չե՞ս, ուրեմն պո՞ւ եղար բոլորովին և արածներիդ վրայ էլ չե՞ս զզջում...

Ցեռոյ մի ակնթարթ կծկուած, կատաղի աչքերով նայեց ամուսնուն և երբ սա վախեցած ուզում էր ետ քաշուել, վազրի պէս ոստնեց նրա վրայ, փռեց գետին, չոքեց կրծքին և հագուստի տակից հանած դաշոյնը խրեց կուրծքը...

Լսուեց մի խռոց, մի աղաղակ: Արթէնը բուռն

ճիգով ուզեց շարժուել, բայց գնչուհին, որ կատաղի էր դարձել, մի մեծ ճիգով հրեց նրան և նետեց թոնիրի բոցերի մէջ։ Յետոյ վեր թռաւ և դուրս սրացաւ անից...

Զինուորները ապշած նայեցին այդ հերարձակ, արիւնոտ ու փոշոտ կնոջ, որ գոռալով անցաւ նրանց առջևից և վազն ի վազ անհետացաւ։

—Միւդիրի կինն է. երևի մի լաւ ծեծ է կերել ամուսնուց... ծիծաղեցին նրանք։

Բայց քիչ յետոյ քթին հասնող կծու հոտը ստիպեց նրանց տուն մտնել և տեսնել թոնիրի բոցերի մէջ այրուող միւդիրի մարմինը...

Իսկ Մարգօն վազում էր, վազում փողոցներով առանց կանգ առնելու և գոռում էր անընդհատ ու խռպոտ.

—Մաքրո՛ւեց, մաքրուեց!...

Կէս գիշերին նորից բաղխուեց Զիլէ աւանի քոչա Թորոսի տան դուռը։

Ծերունին ճրագը ձեռքին՝ դուրս եկաւ։ Դռան վրայ կանգնած էր Մարգօն։

—Այդ դո՞ւ ես, Մարգո՛։

—Ես եմ, հա՛յր. իմ օջախը, որդիներիս օջախը մաքրուեց. պսու դարձած, իւր եղբայրներին դաւող ու մատնող ամուսնուս սպանեցի... Լաւ չարի՞, բա՛ր...

Ծերունին ցնցուեց և յուզուած ձայնով ասաց.

—Աստուած թող ներէ քեզ, աղջիկս... լաւ արիր...

Ու նստեց։

—Սպասիր, հա՛յր, ես դեռ ներս չեմ մտնիլ. քո օջախը պղծողը դեռ կենդանի է, ես գնում եմ դէպի նա. լաւ չե՞մ անում, բա՛ր...

Ծերունին գլուխը բարձրացրեց և ասաց.

—Լաւ ես անում, աղջի՛կս, Աստուած քեզ հետ, գնա՛...

Յետոյ եկաւ, գրկեց աղջկան, համբուրեց ու հարցրեց.

—Ձե՞ս ուզում որդիներիդ տեսնել։

—Դեռ ոչ, բա՛ր, ցնցեց գլուխը Մարգօն. երբ այս տան օջախի պատիւը վերականգնեմ, այն ժամանակ կը գամ, կը մտնեմ այստեղ և որդիներիս մօտ կը մնամ հանգիստ։

—Քեզ կը սպասեմ որ օրհնեմ, ասաց հայրը և ձեռքերը դրաւ աղջկայ գլխին։

Այն ժամանակ գնչուհին չոքեց պահ մի, համբուրեց հօր ոտները, եկաւ, առաւ հօր ցուսը, մի անգամ էլ ներսում վառուող ճրագի լոյսով տան օջախին, նրա կողքին քնող որդիներին նայեց և արագութեամբ մտնելով մթութեան մէջ՝ անհետացաւ...

ՄԻ ՊԱՏԿԵՐ

I

Բասէնի բարձրավանդակ բլուրների վրայ դեռ գարնանային եղանակ էր, չնայելով որ Յունիսեան շոգերն սկսել էին դաշտի մէջ։

Դեռ հեռաւոր գագաթների և սուերամած խորշերի յատակում սպիտակին էին տալիս ձիւնի շերտեր, բայց տեղերում, դորչ թացութեան մէջ՝ դարար կանաչութիւնը թաւշանման քնքշութեամբ գորգ էր կազմում, բծաւորւած և կոսոր կոսոր եղած բազմաթիւ վճիտ առուակներով և ջրակոյտերով։ Մանիշակագոյն ծաղիկներ, զանգակաձև լալան, չեփորաձև կակաչն ու փոքրիկ, գողտրիկ գիներբուկը՝ խմբերով պսակ էին կազմել վրանների շուրջը։ Այս-այն կողմ դեղին գարնանային ծաղիկները գլուխ էին դուրս պարզում քարոտ վայրերի և փոքրիկ խորշերի մէջից։ Հեռու, բաւական բարձրացած ցորենի և գարու կանաչ արտերի մէջ բարձրագլուխ՝ կապոյտ շերտեր էին դնում խիարուկները, և կապոյտ շուշանը ճախնուտ կողմերում բացել, իր մեծ նուրբ թերթերը ցնցում էր մեղմիկ զեփիւռի տակ։

Աջեն կանաչ բլրակներ հեռդհեռէ բարձր, գոյնզգոյն ծաղիկներով ու փոզփոզուն ջրերով շերտաւորւած

սարահարթեր, միմեանցից գեղաձիծաղ, միմեանցից կենսապարար՝ շրջապատում էին ա՛յն մենաւոր անկիւնը, ուր գարնան սկզբից իվեր բանակել-իջել էր հայ-բոչաների մի ցեղ, գորշ վրանների տակ, մեղմիկ ցած սահող ջրվէժի կողքին, փոքրիկ, բայց չքեղ հարթութեան վրայ։

Գիւղերը հեռու չէին, մի քանի բլուրներ, և ահա տարածւում էր Հասան-Ղէլայի դաշտը, կտրած մեծ, պղտոր Երասխով. ամէն կողմ գիւղեր, հեռւում հնացած, խարխուլ քաղաքն ու իր ապառաժուտ կողերով բերդը, դէպի ձախ՝ ողբապատոյտ՝ Ցէվէ-Պոյնուի կիրճը, դէպի աջ՝ Բասէնի չքեղ դաշտը, ապա, հորիզոնի մշուշի մէջ՝ լեռներ ու լեռներ, բարձր, դաժան շղթաներ...

Բոչաների բանակած տեղը թէ՛ գեղեցիկ էր և թէ՛ ապահով։ Մի քանի քայլից յետոյ, մի արահետ, քսան բոպէի վազքով՝ կը հասնէր Հերթև, ձիով երկու ժամ՝ դէպի բերդաքաղաք։ Բոչա կինն ուրեմն կարող էր առաւօտ չուտով ելնել, մտնել դաշտը, հինգ—վեց գիւղ թափառել և երեկոյեան-վերջալոյսին վրանները վերադառնալ։

Ցերեկները վրանների առաջ քիչ բազմութիւն կար և քիչ էր կենդանութիւնը։ Առագին գամփռները քնում էին արևի տակ. էշերը եթէ դաշտ չէին իջել՝ արածում էին բոչա մանուկների հսկողութեան տակ. մանուկները խոտերի մէջ՝ մէջքի վրայ տարածուած՝ երազում էին բայց երկնքի տակ կամ քնում, իսկ տղամարդիկ՝ վրանների հովանու ներքև՝ մաղ էին գործում կամ փսխաթ։ Մի քանի կանայք, դեռ ջահել հարսները, վրանի առաջ օջախ չինած, փշերից ու գիւղերից բերուած փայտերից կրակ կաղմել՝ կամ կերակուր էին եփում կամ լուացք անում և կամ, խումբ առ խումբ, քիչ հեռու, ծաղիկների և ջրվէժի կողքին, գուլպաները ձեռքերին, գործում էին և խօսակցում։

Գիշերն էր որ սկսում էր մի եռուն, զարթ կեանք վրանների առաջ։ Ամէնքը տուն մտած վերջալոյսին՝ տեղաւորում էին իրենց բերածը, ապա ճաշում, յետոյ, ախոռակալի, իրենց ցեղապետի վրանի առաջ մի մեծ խարոյկ վառում և երբ մութը իջնում էր բլուրների վրայ, երբ լուսինը կամենադոյն լոյսով ողողում էր այդ սքանչելի բարձրութիւնը, պպզացող խարոյկի շուրջն էին կիսաւում բոչաները, գալիս էր հովւական տիկը կամ ջութակը, և, օրուայ անցքերու մասին խօսելուց յետոյ, գիշերային լռութեան մէջ, շների ընդհատ ոռնոցների, մանուկների զարթ ճիչերի մէջ սկսում էր երաժշտութիւնը. բոչական տխուր, մելամաղձոտ նուագը, որ արձագանք տուելով՝ թրթռում էր ու իջնում ծործորների մէջ, կամ երերուն ու մեղմիկ՝ գնում մեռնելու դէպի բարձրութիւնները։

Նուագում էր տիկը միաձայն, մի տխուր խաղի երկար տևողութեան մէջից, մեղմաձայն արտայայտելով երգի թաղծոտ ելևէջները, որոնք եղնում էին, եղնում պղտուն ու ճնշող, ապա հանդարտ ու դեղգեղ՝ իջնում կորչում էին միաձայն խաղի դրկում...

Եւ տխուր խաղը մի վայրկեան հանդարտ օրօրելով, նորից բաժանում էր իրենից երգի ելևէջը և նորից նետում նրան դէպի տարածութիւնը։

Այդպէս ժամանակ շներն իսկ դադարում էին հաչելուց և խարոյկի տիւռած լոյսի հեռաւոր աղօտութեան մէջ, գլուխը թաթերի վրայ առած, անշարժ, ուշադիր, աչքերը երաժշտի վրայ, դէմքերնին կծկած՝ լսում էին։ Մանուկները՝ ծնկները բարձր, գլուխնին ծնկների վրայ, կուչ եկած կամ թաւալած խոտերի մէջ, ակնարկը հորիզոնին, աշխատում էին ո՛չ մի խաղ չկորցնել մելամաղձոտ երաժշտութիւնից։

Ամէ՛ն բոչա սիրում է երաժշտութիւնը. այնքա՛ն է

սիրում՝ որքան իր աղատութիւնը, որքան իր բաց երկինքը։ Ամէն բոչա մանուկ բանաստեղծ է, սիրահար երգի, սիրահար՝ լուսընկայ պայծառ երկնքի, պսպղուն կապոյտ երկնակամարի, դալար-ջրաչատ բարձրութիւնների և մեկամաղձոտ, երազել տուող երաժշտութեան։

Եւ ահա՛, նստել են բոչա աղամարդիկ չիբուխները ձեռքերին վառուող խարոյկի լոյսի մէջ, ու գլուխը կախ՝ լռում. բոչա կանայք անդադար գուլպա գործելով կամ բուրդ մանելով՝ խումբ առ խումբ տեղ են բռնել քիչ հեռու, և նուագողի դէմքն է միայն, որ ուռած, թշերով և մեծ տիկը բերնին դէմ առած, ոգևորուած ու կարմրատակած, աչքերը դէպի բարձր, լուսաւորում է կատարեալապէս։

Յետոյ յանկարծ, միաձայն խաղի մի բոպէի տեւողականութենէն վերջը, նուագողը շարժում է և սկսում մի պարերգ. մի կաքաւող, թռչկոտուն, զւարթ պարերգ, որ շարժում է ձգում մանուկների մէջ, շարժում է չներին իսկ։ Կանայք միմեանց երեսի են նայում, տղամարդիկ կանանց աչքերով պարի հրաւիրում, մանուկները սողալով՝ աւելի մօտ գալիս. յետոյ մէկէն, մի երիտասարդ ցատկում է մէջտեղ, ձեռքերը տարածում, մարմինը կարտում, նազանքներով սահում գետնի վրայ և իր վրայ պտոյտներ գործելով՝ շրջաններ է գծում խարոյկի շուրջը։

Ու բոչաները սկսում են մեղմիկ ծափահարել. մի քանիսը բթամատով և երրորդ մատով շրփացնում են, ուրիշները խուլ ձայնով շչշացնում, իսկ ցեղապետը սիրալիր ժպտում է և գոչում.

—Դէ՛հ, աղջիկնե՛ր, ձեզ տեսնե՛մ...

Բայց կանայք դեռ չեն շարժուում, դեռ նազ են անում, միմեանց առաջ մղում, միմեա՛նց հրաւիրում։

Ու մէկէ՛ն մի հարս, մի համարձակ կին ոտքի է

ելնում ու առաջ նետուում։ Երիտասարդը ետ է քաշուում ու նստում։ Այժմ կինն է պարողը։

Սրանում է կինը ձեռքերը շրփացնելով, մէջքն ու իրանը կատարելով։ Երբեմն այնպէս կանգնում է և շնորհալի՝ դէպի գետին հանում, որ կարծես մտադիր է պառկել. այդպէս կացած՝ նա սրանում է և յանկարծ զսպանակի պէս վեր նետուում և նորի՛ց մէկ այս մէկ այն կողմ ծռելով, ձեռքերն օրօրելով, կոնները պտտցնելով և գլուխն այս-այն կողմ, ժպիտը դէմքին՝ սահում է. կարծես ոտքը գետնին չէ կպչում...

Նրան քիչ յետոյ դէմ առ դէմ է գալիս մի ուրիշ կին և ահա սկսում է զոյգ պարը։ Երկու հանդիսակացները միևնոյն շարժումներով խաչաձև նախ կարում են իրար, միշտ խաչեր կազմում, կանոնաւոր խաչեր՝ կեղրոնը խարոյկը. և ո՛չ մէկի շարժումը միւսից չէ զանազանուում. ծռուում են միասին, նոյն նազանքներն անում, նոյն ամանակով մատները շրփացնում ու նոյն բոպէին խաչաձև գծերի ծայրերը հասած՝ միաժամանակ դառնում, դէպի կեղրոնն են սրանում ու կեղրոնից՝ դէպի խաչի թևերը սահում...

Այդ բոլորը կատարուում է այնքա՛ն արագ, այնքա՛ն ճշտութեամբ, որ սքանչելի մի տեսարան է պատկերանում՝ միաժամանակ միմեանց մէջք դարձնող կամ դէպի կեղրոնն եկող և ապա լայնութեան թևի երկու ճիւղերն գնացող զոյգից։

Տանանհինգ բոպէաչափ երկու կանայք պարելուց յետոյ, երկարութեան թևի ծայրերից դէպի կեղրոնն են գալիս, միմեանց կպցնում գլուխներն և պարն այդպիսով վերջանում է։

Այնուհետև երաժշտութիւնը լռում է և սկսում է մի խօսակցութիւն։ Ամէն ոք պատմում է իր տեսածն ու լսածը, դաշտից, դիւղերից բերած համբաւները։ Մա-

նուկները հեռում խաղում են և ախոռակալը մեռ կողմում՝ դատում է և խարհուրդներ տալիս. բոլորը պատկառանքով լսում են ծերունուն—այդ փորձած բոչային, որ գիտէ բոլորի ցաւերը, բոլորի ուրախութիւնները։

Յետոյ նուագողը նորից տիկը ձեռքն է առնում և ահա կանանց ու աղամարդկանց խումբը սկսում է երգել նախ մեղմ, ապա ուժգին և սարահարթը լցւում է մի անոյշ երաժշտութեամբ. մանուկներն իսկ ընկերանում են, խաղալիքը պպզում է, բոցեր արձակում, ճարճատում, չոզում...

Ահա այսպէս էր կեանք վարում Բասէնի այն թափառական հայ-բոչաների մի խումբը, որոնց մէջ էր նաև Մարգօն։

Այդ խումբը Փոքր-Ասիայից, Պոյազատի կողմերից էր եկել, փախներով հալածանքներից, թափառելով մտել էր Էրզրումի նահանգը և, ձմեռը քաղաքներում, իսկ այս ամառ, գարնանից ի վեր եկել էր Բասէնի դաշտը, մտադրելով մինչև ձիւնների իջնելը մնալ այնտեղ։

Մարգօն ամէնքը ճանաչում էին և ամէնքը յարգում այդտեղ։ Նա իր օջախը, իր վրանը չունէր. հիւր էր ազգակիցներից մէկի մօտ, բայց իր աշխատանքովն էր ապրում։ Ոչ ոք նրա պէս ճարպիկ, շատ հաւաքող և մեծ պաշար բերող չկար ամբողջ վրաններում։ Ոչ ոք նրա պէս երկիրներ տեսած, ամէն անկիւն, ամէն ճանապարհ ճանաչող չէր և ոչ ոք սակայն նրա պէս մռայլ ու տխուր, լռիկ ու մտախոհ չէր ամբողջ ցեղի մէջ։

Բոլորը գիտէին Մարգօի պատմութիւնը։ Գիտէին թէ նա վաղուց թափառում էր, պղծած օջախի պատիւը վերականգնելու համար։

Իր ծերունի հայրը չէր կարողացել սպասել. մի տարուց յետոյ մեռել էր։ Մարգօն ստիպւած էր եղել մի

առ ժամանակ ընդհատել հետախուզութիւնը, գալ որդիներին առնել և տանել Էրզրում, իր քրոջը մօտ։

Այդ օրից Պոյազատի բոչաները այլեւս չէին տեսել նրան, բայց գիտէին որ կենդանի է և վրէժխնդրութեան ոգու պէս քայլում է պաշտօնեաների մէջ, որոնցով իրեն անպատուողին ամէն տեղ։

Եւ ահա յանկարծ, երբ ընդհանուր աւերածութիւններից ստիպւած, բոչաների այդ ցեղը Էրզրում էր գաղթել և մի տարուց լեռներում վրաններ էր խփել, մի գիշեր յայտնւել էր Մարգօն մռայլ և տխուր։ Ոչ ոք նրան բան չէր հարցրել, ամէնքը նրան ընդունել էին մի առանձին խոնարհ յարգանքով և թողել որ նա իր ուզածն անէր։

Ու Մարգօն այժմ ահա, երբ երեկոյեան այդ լուսընկայնի պարում էին իր ցեղակից հարսները, նստած էր կանանց մէջ լուռ և խոհուն, գլուխը ծնկան և աչքերը կրակին։

Եւ անցնում էր նա իր հին յիշողութիւններին։ Յիշում էր թէ ինչպէ՞ս ինքն էլ մի ժամանակ պարում էր զարթութեամբ այդ պարը և ոչ ոք չէր կարողանում նրա նման հիացում ազդել. յիշում էր որ տղամարդկանց խելքերը գնում էին, երբ նա կարմրած ու բոցափայլ աչքերով, իր վայելուչ երկար ու ճկուն հասակը ոլորտելով, սեթևեթ և զրգռիչ շարժումներով սահում էր գետնի վրայով, նազանքներով աչքերը ոլորում, դիւթիչ ժպիտով շուրջը կախարդում և ապա հարբած՝ իր սիրած հիացումովը, գնում էր նստելու կանանց մէջ՝ տղամարդկանց աչքը մի՛չ իր վրայ։ Յիշում էր թէ ինչպէ՞ս բոլորը նախանձում էին Արթիէնին, որ այդպէս քաջ, գեղեցիկ և համեստ կին ունի...

Իսկ այժմ. ի՞նչ էր նա։ Գեղեցկութիւնից միայն աչքերն էին մնացել, որ այլեւս չէին բոցավառւում, այլ

լի էին մռայլ ու տխրութիւն տիրող խոհերով. հասակը նոյնն էր, բայց այլ ևս ո՛չ զողորիկ, ո՛չ այնքան վայելուչ և դէմքի վրայ կիզացած, այրած կաշին խորշոմել էր, կնճիռներ կազմել, աչքերը փոս ընկել, շրթունքները դառն արտայայտութիւն ստացել և սիրտը՝ մի ժամանակ այնքան զւարճութիւն, այնքան հրապոյր տիրող սիրտը—այժմ ճնշած, դառնութեամբ լի էր և վիրաւոր...

Օ՜հ, նա կը կենդանանար նորից, կը վերստանար իր գեղեցկութիւնը, իր հրապոյրը. հասակը անչա՛ւշտ կ՚ուղղուէր, դէմքը կը փափկանար, աչքերը կը բոցավառուէին նորից՝ եթէ միայն գտնէր իրեն այդ դրութեան մէջ ձգողին և վաղուցանից պատրաստած սուր դաշոյնը մխէր նրա կրծքում, տեսնէր նրա արիւնի հոսելը, տեսնէր նրա տանջելը իր ոտների տակ և այդ բոլորով սրբէր իր հօր օջախը, իր զաւակների անուան վրայ ծանրացող անպատուութիւնը: Ոչ ոք ի հարկէ, նրան անպատիւ, արատաւորած չէր համարում. ամէնքը գիտէին որ նա բռնութեան զոհ էր:

Բայց ինքը — ինքը ոչ: Ինքը՝ իրեն անպատուած էր զգում և անպատուողի արիւնը միայն կարող էր սրբել արատը, մաքրել, նորից կեանք տալ զոհին...

... Եւ երբ սկսեցին երգել, Մարգօն յիշեց որ ինքն էլ երգում էր այդ, մանակցում նրան. որ ինքն էլ իր քաղցրիկ ձայնով հրապուրում էր բոլորին, և վաղուց, չա՛տ վաղուց էր, որ մի խա՛զ չէր հանել կոկորդից. մոռացել էր խակ երգի խօսքերը... ու դառնացած սկսեց լսել:

Փիչ յեռոյ խմբական երգը կանգ առաւ: Այժմ մի տղամարդ, ձայնը բարձրացրեց և սկսեց մի հնամեայ երգ.

Թեեւ մութն իջաւ, երկինքը պատեց,
Թեեւ սառ եղաւ, երկիր պաղեցրեց,
Բայց մթան միջից լոմ աղջիկն եկաւ,
Ու սառի միջից՝ ջերմութիւն տիրեց...
Լոմ աղջի՛կ սիրուն, աչե՛րդ լոյս տին,
Լոմ աղջի՛կ սիրուն, սի՛rտդ ջերմ տիրեց...

Դրան որպէս պատասխան, կանանց խմբից լուեց մի սիրուն ձայն, որ երգում էր.

Թեեւ մութն ընկաւ, երկինքը պատեց,
Թեեւ սառ եղաւ, երկիր պաղեցրեց,
Բայց մթան միջից ե՛ս քեզ լոյս կը տամ,
Եթէ դու լինիս իմ տանը հսկան:
Եւ սառի միջից ե՛ս քեզ սիրs կը տամ,
Եթէ դու լինիս առիւծի նման:
Լո՛մ տղայ կsրին, աչերս քե՛զ կը տամ,
Լո՛մ տղայ կsրին, սիրsս քե՛զ կը տամ...

Այս ընդդիմախօսական երգը պարբերաբար շարունակուեց և ամէն անգամ երգում էին տարբեր կանայք: Եղանակը զողորիկ ու կայտառ, բայց միատեսակ էր և նմանում էր վիճաբանութեան: Մանուկները թողնում են ամէն բան և մօտենում. ախոռակալը ժպիտ երեսին՝ դիտում է վէճը. տղամարդիկ տաքանալով միմեանց են քաջալերում և կանայք միմեանց յորդորում՝ աւելի սուր պատասխաններ չարադրելու:

Եւ հովւական տիկը իր միաձայն խազովը ձայն է բռնում երգելիս, իսկ միջավայրերում մի թեթև նախերգանք հնչեցնում: Ըստ երեւութին, երգը մի հին, վաղաժամանակ երգ էր. բայց վարպետութիւնը նրանումն էր կայանում, որ երգողը պարտաւոր էր նոյն յանգերով

և նոյն եղանակին տակ ինքնուրոյն, նոր բան արտադրել։ Որքա՛ն սրամիտ էին առաջարկները կամ պատասխանները, այնքան գովասանք և հրճուանք էին տանում։

Ահա շարժեց մէկը, ձայնը բարձրացրեց և յանպարտասից սկսեց.

Թեեւ մութն ընկաւ, երկինքը պատեց
Թեեւ սառն եղաւ, երկիրը պաղեց,
Բայց խիստ խաւարում համբոյրը լոմ աղջկայ
Շրթունքիս դիպած՝ խոշոր լոյս կը տայ.
Եւ սառած երկիր՝ լոմ աղջկայ սիրով
Նորից շունչ կ'առնի, կանաչ կը դառնայ։
Լոմ աղջի՛կ սիրուն, համբոյրդ յոյս կը տայ.
Լոմ աղջի՛կ սիրուն, սերդ կեանք կը տայ...

—Էհէ՛, էհէ՛, վատ չէր, գոչեց ախոռակալը. ապա տեսնե՞նք, կանանց կողմից ի՞նչ պատասխան կը գայ։

Եւ մինչ տիկը նախերգանքն էր անում, կանայք իրար մէջ փսփսացին, յետոյ մէկը ժողովեց իրեն, ձայնը բարձրացրեց և պատասխանեց.

Է՛յ մթան միջից կանչող լոմ լախուզ (*)
Է՛յ սառի միջից աղաչող մանուս, (**)
Լոմ աղջիկն երբէ՛ք ֆեզ համբոյր չի տայ
Լոմ աղջկայ սիրտը ֆեզի չի դառնայ,
Եթէ ֆո ձեռքը երկաթ չը փշրի,
Եթէ ֆո արտից՝ սառը չը հալի։
Լոմ տղա՛յ ֆնած, լոմ աղջիկն երբէ՛ք
Ոչխար չի դառնայ որ գայ ու ֆեզ հեռ՝
Միշտ խոտ արածայ...

*) Բոշա տղաներդ.
**) Մարդ.

—Բա՛, բա՛, բա՛... կանչեց ախոռակալը. կերա՞ր, Գիյո՛ր, ա՛յս էլ քեզ պատասխան. մարեցի՞ր...

Ու բոշաները բոլորն էլ զարթ ծիծաղ արձակեցին։ Բայց հովւական տիկը չարունակում էր. կանայք սկսեցին աղամարդկանց ծաղրելով՝ գրգռել. սրանք էլ ամաչած՝ դրդում էին իրենց միջի երիտասարդներին՝ ամօթով չմնալ։

—Տօ ի՞նչ էք մնջկ, մարդի՛կ, կանչեց մի ծերունի. ո՞ւր է լեզուներդ... վա՛յ ես ձեզ ինչ ասեմ հա՛յ...

—Կնկայ խօսքի տակը մնա՞լ... ծօ չխօսի՞ք...

Վերջապէս մէկը հաղաց և սկսեց երգել.

Ե՛ս մթան միջից կանչող լոմ լախուզ,
Ես սառի միջից՝ աղաչող մանուս.
Ձեռքս երկաթ փշրի, ֆեզ կօշիկ շինի,
Սիրտս աշխարհ դիւթի, ոտիդ տա՛կ բերի...
Լոմ աղջի՛կ սիրուն, ասա՛, ի՞նչ կ'ուզես
Որ ինձ համբոյրիդ արժանի տեսնես...

Կանայք իրար անցան. այժմ ամէնքն էլն ուզում պատասխանել. ամէնքը բոբրոքեցին։

Բայց յանկարծ Մարգօն, որ լուռ խում էր, շարժեց, լուռն շարժմամբ դէն հրեց կանանց, և ի զարմանս բոլորի, խստոտ ու խուլ ձայնով երգեց.

Է՛յ դու մթան մէջ կուչ եկած լախուզ,
Սառուցների մէջ չորացած մանո՛ւս,
Ելի՛ր, մէյդա՛ն եկ, աղջիկս ֆե՛զ կը տամ,
Աշի արեւում մուրամ, բերեմ ֆեզ պսեմ,
Եթէ դաշոյն ձեռքիդ օջախս արբես,
Եթէ բշնամուս ոտիս տակ բերես...

Ասաց և հրաբորբոք աչքերով ոտքի կաց։

Բոլորը ապշել էին. տիկը լռեց և մի բոպէի խոր, անչշուկ լռութեան մէջ լսուեց նորից Մարգօի խրոխտ, դողդոջուն ձայնը, որ այս անգամ առանց երգելու՝ գոչում էր.

—Տեսնե՛նք, ո՞վ է այն կարիճ աղամարդը, որ աղջկանս և օջախս արատը մաքրելու համար ցուպը ձեռք կ՚առնի և կը գայ եռելոցս...

... Ու ճարճատում էր խարոյկը, լուռ էին բոշաները։ Եւ ընութեան անորոշ, գիշերային տխուր շըշուկն էր, որ սահելով լեռների կողերից՝ գալիս խառնւում էր ջրվէժի մեղմիկ շառաչներին։ Լուսընկայ տարածութիւնը մշուշի քողով ազօտացել էր շրջակայքում և խարոյկի արնեգոյն կիսալոյսի մէջ տեսնւում էին արեւակէզ, կնճռալից, բայց հրաբորբոք դէմքեր...

ԽԱԹ - ՍԱԲԱ

I

Զանգազ գիւղից մի քանի ժամ հեռաւորութեամբ, Զիւլֆի լեռների մէջ, գտնւում է մի հրաշալի սարահարթ, որին կարելով գալարւում է Զանգազի վտակը, ցատկռտում լերկ ժայռերի վրայից, սողում է ապառաժների բացւածքների միջից, փրփուրով ծածկում լեռնադաշտը պատող գիներբուկների շերտը և գնում-գահավիժում Զանգազի հովիտը, ուր նա ոռոգում է պարարտ, ծաղկալից դաշտեր։

Այնտեղ—բարձրում սարահարթը մի ծայրով միանում է բլրակների, որոնք ծածկւած են երիտներանդ ծաղիկներով և որոնք թիկն են տւել տւելի բարձր, լերկ ժայռերով, հարուստ և խոր ծործորներով ակօսւած լեռների։ Ներանց ետեւից, Զիւլֆի լեռնաշղթան, տեղ-տեղ դուրս է պարզում իր ձիւնապատ բարձր կատարները։

Սարահարթի միւս ծայրը գալիս յանգում է դէպի ձորակը և այդտեղ կազմում մի ահեղ դահաւանդ, որտեղից տեսնւում է դէպի ցած նետւող վտակի փրփուրը, իսկ հեռու, ցածում, արծաթափայլ օձապտոյտ գետակ-

ներ, որոնք միմեանց կորում սահումանրեիդ՝ տա կոյտ-կոյտ վրաններ և բլրակների միջով։

Սարահարթը մեծ չէ, բայց բնութիւնը իր բոլոր գեղեցկութիւններով զարդարել է նրան։

Այդտեղ կարելի է տեսնել ապառաժների վայրենի շեղջեր, միմեանց վրայ կարծես կուտեցրած հսկայական ժայռեր... մի կողմում ամպի պէս սիռուած են զանազան բարձրութեամբ բլրակներ, որոնք ալեձև գնում են դէպի խորը, բարձրանում դէպի լեռները, յետոյ նորից դէպի մի կողմ ծռւում և հետզհետէ մանրանալով՝ հաւասարւում դաշտի հետ։

Մի այլ կողմում երկու ջրվէժներ են, որոնք միացած՝ գոյացնում են ցատկտող ու շառաչող մի առուակ ու ոռոգելու գնում ծաղկալից դաշտեր։

Սարահարթը կոչւում է «Զիւնի տիւղ» —հարթավայր։

Շատ քիչ անգամ շրջակայ գիւղի կանայք համարձակւում էին սակայն մտնել այդ սիրուն լեռնադաշտը, առատօրէն բուսնող բանջարը ժողովելու։ Հովիւն իսկ դժւարութեամբ էր համաձայնւում նախիրն այն կողմը քաշել։

Զիւնի հարթավայրը բնակութիւնէ բաւական հեռու էր և շատ մատչելի աւազակ քիւրտերին։

Զնայելով դրան, ամառնամուտի մի գեղեցիկ երեկոյ դաշտից կարելի էր տեսնել սարահարթում բարձրացող ծխի սիւնակներ և փայփլող լոյսեր։

Այդ օր, հեռու տեղից գալով, մի թափառիկ խումբ իջևանել էր սարահարթի վրայ, կանգնեցրել քանի չափ վրան և աւելի քան յիսուն զանազան տաւարներ բաց թողել արածելու բլրակների կանաչներին։

Վրանները կառուցած էին միմեանց մօտ։ Նրանց առջևը, խոտերի մէջ թաւալում էին աղատ կիսամերկ

մանուկներ։ Մի այլ կողմում սև և ոգեղաղէմ կանայք կրակ վառել՝ կերակուր էին պատրաստում, իսկ նորածաղ լուսնի աղօտ լոյսի տակ, վառկի եղերքին թիկն տուել, մէջքի վրայ մեկնուել և կամ նստոտել էին 10—15 զանազան հասակի տղամարդիկ։

Ամենքն էլ հագնուած էին շատ աղքատ, գրեթէ ցնցոտիներով։ Դէմքերը սև, տաերը գրեթէ բորբիկ։ Ոչ մէկը առանց կարկատանի վերարկու, կանոնաւոր կօշիկ կամ գլխարկ չունէր։ Մազերնին էլ խռիւ՝ տեղացած գլխների վրայ, մօրուքները թանձր ու կոշտ և խանձուած մազի նման։ Նոյն իսկ կանայք հեռուում՝ բորբիկ էին, անլուայ, երկար մազերով և կիսամերկ։

Բոշաների մի խումբ էր այդ, որ Թորթումից եկած, ճանապարհորդութեան տասներորդ գիշերը անցկացնելու էր եկել Զիւնի հարթավայրի վրայ ու մի քանի օր էլ հանգիստ առնելու այնտեղ։

Խմբի բոլոր տղամարդիկ չկային այդ օր։ Կէսն չափ ետ էին մնացել զանազան կողմերում և կամ պահպանութեան եկել շրջակայքերում։

Այն ընդունելի էին տղամարդիկ—նայում էր դէպի դաշտը։ Վառկը գալիս չչափում էր նրա կողն ու լուսնի տակ փայփլում՝ ոստնում էր դէպի խորքերը։

Մի քանի քայլ հեռու, մի տղամարդ, հերթապահ հսկողը, յենուել էր հրացանին և լուռ՝ լսում։ Ոտների մօտ, թաթերի վրայ մուութը դրել, ականջները սրած ու պլչած աչքերով շուրջը դիտող-նստել էր մի անագին դամիր։

Միւս տղամարդիկ էլ ականջ էին դնում յաղթանդամ ու կոշտ գծագրութեամբ հասակաւոր պատմողին։

Ու պատմիչը ոգեորուած, ցուպովը օդն էր բաղ-

խում, ջուրը ճղփացնում և երբեմն էլ դէպի օդը թրռ-
ցնում արմատախիլ արած խոտերի փնջեր։

Մի զով քամի շարժում էր խոտերի և ծաղիկների
ծայրերը, օրօրում էր պատմողի թանձր մազերն ու գնում
էր ափուում դէպի լեռները։

II

Բոշան պատմում էր։

—Հեռո՛ւ, Արարների երկրում—ասում էր նա—
այնտեղ, ուր արևի մէջ հաւկիթն խակոյն եփւում է,
ուր մի ընդարձակ աւազի անապատ բռնել է երկրի կէսը,
ուր մարդիկ արևից սևացել են և ուր բուսնում է ար-
մատն ու ձիթենին—այնտեղ կայ մի քաղաք, որից շատ
մօտ է անապատը։

Այդ քաղաքում ապրում էր Շէյխ Սատոն, որին
ամէնքը ճանաչում էին։ Նրա պալատը ոսկու մէջ փայ-
փլում էր, հիւրերներն աւելի շատ և աւելի գեղեցիկ էին
նրա հարեմում, քան իրեն—արքայի մօտ. նրա պա-
լատը բռնում էր քաղաքի կէսը, պարտէզների նմանը
ո՛չ մի պարտէզ չկար և Շէյխը վայելում էր այս աշ-
խարհում ա՛յն բոլորը, ինչ խոստացել է մարգարէն միայն
միւս աշխարհում։

Փո՛ղ ունէր Շէյխը։ Եւ նրա զօրութեամբ կարող
էր անել ցանկացածը, վայելել հաճոյքներ, որոնցից
Սատուած զրկել է մեզ և չա՛տ շատերին։

Օրւայ ամէն ժամերին լսւում էին Շէյխի չքեղ
պալատի աշտարակներից նւագի ձայներ։ Երգում էին

ամենից լաւ երգիչները. նրա դռանն էր մօտենում ամէ-
նից առաջ դէրվիշը, նրա մո՛տ գնում իրենց գիտցածը
ցոյց տալու բանաստեղծներն ու նւագողները։

Շէյխին էին պատկանում նաև անապատի զաւակ-
ների գեղեցիկները, բոլոր մոլլաների և սէյիտների օրհ-
նութիւնները և երջանիկ կողմերի լաւ արտադրութիւն-
ները։

Ու վայելում էր Շէյխը անհոգ և զւարթ ամէն
ինչ. չգիտեր անգամ թէ իր ծառաները ինչպէ՛ս քեր-
թում էին խեղճ մարդկանց, կողոպտում նրանց, ծանր
հարկերի տակ ճնչում և բերում-լցնում դանձարանը։

Թող աշխարհ քանդւէր—միայն թէ Շէյխի դանձա-
բանին ոսկին չպակսէր, հարեմից կինը, մառանից՝
գինին, այլ և ճաշը զւարճալի դարձնող երաժիշտները...

Շէյխի եկամուտների աղբիւրը քաղաքից քիչ հեռու
գտնւող հինգ-վեց գիւղերն էին։

Այդ գիւղերը լիքն էին բազմաթիւ մերկ, կեղտոտ
և գժերի պէս գիւղացիներով, որոնք օրը մինչև երեկոյ՝
աշխատում էին։ Նրանց արտերը տալիս էին առա՛տ
ցորեն. գետը ողողում էր հողերը ու արմտիքը մէկին
100 էր բերում, սակայն գիւղացիք ուտում էին միայն
բանջարեղէն...

Շէյխի մարդիկը խլում էին արմտիքը նրանց ձեռ-
քից և թողնում էին կերակրւելու միա՛յն խոտով։

Լսո՞ւմ էք, լսմեր, երջանիկ այդ երկրում կա՛յին
գիւղեր, ուր մարդիկ միմիայն խոտ էին ուտում...

Եւ լցո՛ւմ էր Շէյխի դանձարանը ոսկիով, հարեմը՝
գեղեցիկներով։ Եւ հնչում էր երաժշտութիւնը պա-
լատի սրահների մէջ ու հոսում էր գինին, զւարճանում
Շէյխը իր չքեղութեան մէջ։

Բայց բաւակա՛ն է Շէյխի մասին։ Լսմը այդպէս
չէյխեր չա՛տ է տեսել։ Նա ինքն էլ խոտ է կերել և իր

քրտինքը ուել է աղանների։ Նա ինքն էլ ծնել է գեղեցիկներ ու յանձնել չէյխերի։ Նրան այդ ամէնը զարմացնել չի՛ կարող...

Եւ նստած էր մի օր Շէյխը իր պալատի աշտարակներից մէկում, ծխո՛ւմ էր նարգիլէն, իր սիրելի կանանցից մէկի նուագածութիւնը լսում ու զմայլման մէջ նայում էր հեռու անապատին...

Իսկ անապատո՛ւմ այդ օր, ծառախմբի տակ, իջեւանել էր մի խումբ։

Կարել էր խումբը ամբողջ երկիրը, իր անդամներից թողել էր բաւական մեռած աւանների վրայ, կոտրուել էր ծարաւից, ջարդուել՝ բէդուիններից և վերջապէս եկել մի կերպ հասել էր Բէն-էլ-Մաար օվասիսն ու հանգչում, չունէր էր առնում նրա արմաւենիների տակ։

Բայց այլեւ չէր մնացել ոչ ոքի մօտ մի բուռ ալիւր, մի հատիկ ցորեն, կամ մի կտոր հաց։

Պէտք էր հաց գտնել։ Սոսա՛ծ էին ամէնքը։

Եւ հրամայեց խմբապետը խմբի երգեցող կանանց՝ քաղաք իջնել, դռների առաջ հնչեցնել գնչուական երգեր, բաց կուրծքով պարել տալ երկրի միւսիրմանների պագչոտ աչքերի առջեւ և անել ամէն ինչ, միայն հաց բերել խմբին, որին անօթի մահ էր սպասում։

Եւ ահա օվասիսից երան չորս կանայք—Նազին, Գիւլին, Բահարն ու Օդիշուն։ Հագնուեցին, առին իրենց փոքրիկ, բոժոժաւոր թմբուկները, մատերին անցկացրին ծնծղաները և մտան քաղաք։

Նազին ու Գիւլին երգում էին, Օդիշուն պարում, իսկ Բահարը թմբկահարում էր և հաւաքում ընակիչների տուած հացն ու փողը։

Ամտաւոր եղնիկը, սուլթանի կաքաւողը, չէյխի պարոնները չունէին տաքերի այն պայծառ ոստումները, մարմնի այն հրապուրիչ նազանքը, աչքերի այն հալեցնող

պչրանքը և ձեռքերի այնքա՛ն գողտրիկ ծածանումներն, ինչ Օդիշուն ունէր։

Երբ պարում էր, սաւառնող հրեշտակի էր նման։ Երբ ժպտում էր, մարում էր ամէն ինչ և երբ խօսում էր, անապատի տապից յետոյ հանդիպած ջուրը չունէ՛ր նրա ձայնի հմայքը...

Գեղեցի՛կ է լուսինը իր ամբողջ փայլով, երբ լողում է երկնակամարի վրայ։ Հիանալի են աստղերը, պայծառ, շլացուցիչ է արեւը, բայց Օդիշուի աչքերը, դէմքն ու քնքուշ իրանը, վայելուչ հասակն ու գողտրիկ բերանը աւելի՛ հիանալի էին, աւելի պայծառ, աւելի այրող և աւելի հմայող...

Երգեցին, պարեցին և հաւաքեցին ամբողջ օրը։

Երեկոյեան դէմ կանգ առին նրանք Շէյխ Սաոսի պալատի առաջ։

—Օդիշո՛ւ, խօսեց Նազին, այս տան տէրը մեծահարուստ մարդ է երեւում։ Գործադրի՛ր բոլոր ճարպիկութիւնդ և արհեստդ։ Այնտեղ մերոնք հացի են սպասում։

Եւ երգեցին։

Օդիշուն մատերուն անցկացրեց ծնծղաները. Բահարը ցնցեց թմբուկը։

Լռեց այնուհետեւ Շէյխի կնոջ թասը։ Շէյխին ինքը շարժուեց, գլուխը լուսամուտից դուրս հանեց և երկա՛ր ականջ դրեց։

Լսում էին ամէնքը, ամբողջ թաղը։ Օդիշուն կարմրել էր նոր բացած չքեղ վարդի պէս։ Կոտրտում էր նա դիւթիչ նազանքներով, սահում գետնի վրայ, սաւառնում՝ թեւերը դարձրելով և Նազին ու Գիւլին երգում էին մեծ ոգեւորութեամբ։

Նրանք երգում էին լոմերի սիրած երգը.—

Անցի՛ր՝ գարուն, անցի՛ր լուսին.
Օգուս չունիք խեղն լոմին:
Լուսին լինի եւ կամ մթին,
Լոմը ե՞րբ է կեանք տեսել:
Անցի՛ր գարուն, անցիր լուսին:
Դաշտը իր տուն, լեռը՝ իր բուն,
Տանջւում է լոմն օրն ի բուն.
Փոքրիկ կարպետն է իր անկողին,
Մի կուց էլ ջուր չնչին բաժին...
Անցի՛ր գարուն, ծածկի՛ր լուսին,
Ինչ օգուս դուք խեղն լոմին...

Շեյխը մի ոսկի նետեց իր աշտարակից և բարեհաճեց հարցնել պարող գնչուհու անունը:

Ցետոյ, երկու ծառայ մօտեցան նրանց և յայտնեցին թէ «մեծանուն Շեյխը» կամենում էր որ Գնչուները պարան մանէին և աւելի մօտ ցոյց տային իրենց վարպետութիւնը:

Օղիչուն, Նաղին ու Գիւլին խնդրեցին Բահարին որ հաւաքածները տանէր Ովասիսում սպասող խմբին, իսկ իրենք, աւելի մեծ վարձատրութեան յոյսով՝ մտան պարան:

Միւս օրը միայն, Ովասիս վերադարձան Նաղին ու Գիւլին:

Օղիչուն չկար:

Շեյխը իր հարեմն էր դրել անապատի գեղեցիկ գնչուհուն:

Բոշաների խումբը յուզուեց, երդուեց չհեռանալ Ովասիսից: Օղիչուի հայրը գտաւ մի ատրճանակ, հագուստի մէջ թաղցրեց մի թունաւոր դաշոյն և քաղաք գնաց:

Անցան օրեր: Ո՛չ Օղիչուի մասին լուրեր եկան և ո՛չ էլ նրա հօր:

Վերջապէս մի գիշեր Ովասիս հասան երկուսն էլ: Օղիչուն յոգի և տանջուած, իսկ հայրը արիւնոտ:

Շեյխը սպանուած էր:

Մուսիրմանները շուտով գտան սպանողին. բռնեցին Օղիչուի հօրը և կախեցին քաղաքի դռան մօտ:

Բոշաների խումբը ժողովեց ունեցածը, նորից կարեց անապատը և գնաց մի նոր կայան որոնելու:

Եւ երբ հասել էին Իրանի երկիրը, Օղիչուն ծնեց մի արու զաւակ, որի անունը դրեց Հասան:

III

—«Այդ միջոցին, Սպահանում ապրում էր մի արաբ իշխան: Էլ-Մուին էր նրա անունը: Նրան պատուում ու սիրում էին ամէնքը: Վախճանն տարեկան էր նա, երեք կին ունէր, բայց ո՛չ մի որդի: Եղածները մեռել էին:

Ունէր ահագին հարստութիւն, շատ կալուած, հողեր ու պարտէզներ, բայց ապրում էր մենակ և տխուր:

Եւ երբ բոշաները յոգնած, տանջուած ու կէս եղած՝ Սպահանում կանգ առան հանգստանալու, մի օր Էլ-Մուինը պատահմամբ տեսաւ Օղիչուի փոքրիկ զաւակ Հասանին, գրաւեց նրանով և նրա մօր հետ առաւ իր մօտ:

Իսկ բոշաների խմբին նա հրամայեց պատսպարել, կերակրեց, վարձատրեց և թողեց որ գնան:

Օղիչուն մնաց Էլ-Մուինի մօտ և արաբ իշխանից հայրական սէր միայն տեսաւ: Հասանին էլ Էլ-Մուինը մեծացրեց իր թոռան պէս:

Մեծացաւ Հասանը, ուսաւ, կարդաց ամբողջ Ղուրանը, տեղեկացաւ իմաստունների գիտութեանը, կռիւ-

ների մէջ էլ մոռաւ ու թագաւորից բարձր աստիճաններ ասացաւ։

Եւ երբ Օղիչուն էլ մեռաւ, Հասանը ո՛չ միայն իրեն Պարսիկ էր կարծում, այլ և մտքի՛ցը չէր անցկացնում թէ ինքը լոմ է և լոմի զաւակ։

Այդ տարին չա՛ս վատ տարի եղաւ Իրանի լոմերի համար։ Ամէնքը նրանց նեղացնում էին, անպատիւ հալածում և նոյն իսկ սպանում։ Պատճառը այն էր, որ լոմերից մէկը սիրել էր մի մեծաւոր Պարսկի աղջկայ, փախցրել էր նրան, ի հարկէ աղջկայ համաձայնութիւնով և ահա այնուհետև ամէն Իրանցի իրաւունք էր համարում վրէժ հանել ամէն հանդիպած լոմից։

Լոմերը երկար դիմացան, բայց վերջապէս, երբ տեսան որ հալածանքն աւելի սաստկանում է, ժողովեցին, մի քանի մեծ խմբեր կազմեցին և վճռեցին գաղթել օսմանցոց երկիրը։

Գաղթելուց առաջ, սակայն, ուղարկեցին նրանք իրենց ծերերից երկուսին՝ Հասանի մօտ։

Հասանը չուզեց ընդունել նրանց. բայց խմաստուն Էլ-Մուինը յորդորեց երիտասարդին՝ լսել բոշա ծերունիներին։

Երկու իշխան-բոշաները սենեակ մտան և չոքեցին դռան մօտ։ Վերի կողմը նստել էր ալեւոր Էլ-Մուինը և նրանից քիչ ցած, Հասանը, որ զարմացած նայում էր հիւրերին և սպասում։

Բոշաները փոքր ինչ լռեցին։ Յետոյ, նրանցից մէկը շփեց մօրուքը և խուլ ձայնով ասաց երիտասարդին.

—Լո՛մ-Հասան, քո ցեղից ծերունիները քեզ մօտ են եկել ամբողջ ցեղից կողմից։ Ուզո՞ւմ ես ականջ դնել նրանց։

Հասանը ոչինչ չէր հասկանում։

—Ես Լոմ-Հասան չե՛մ կոչւում, ասաց նա. այլ Հասան Էլ-Մուինի։ Ինչի՞ մասին է՛ք խօսում դուք ինձ։

—Մենք, խօսեց երկրորդ ծերունին, բոշաների, այսինքն լոմերի երկու ամենածեր իշխաններն ենք և եկել ենք լոմ Օղիչուի որդի լոմ Հասանի մօտ։ Արդեօք Հասանը յիրաւի՞ չը գիտէ, որ նա լոմի զաւակ է... լոմերին Իրանում այլեւ օր չունեն, նրանց հանդիստ չեն թողնում։ Այլեւ հաց չկայ նրանց այս երկրում։ Պիտի գաղթեն նրանք. այդպէ՛ս է ցեղի միահամուռ վճիռը... Մեզ ցեղը ուղարկել է լոմ Հասանի մօտ ասելու, որ նա թող դայ և առաջնորդէ նրանց։ Հասանը երիտասարդ է, քաջ կռւող, գիտուն և իմաստուն։ Լոմերը ցանկանում են որ Հասանը օգնէ իր ցեղին իր գիտցածներով և դառնալով նրանց գլխաւորը, տանի մեզ աղատ և երջանիկ... Լոմ-Կադիրը ասաց՝ ինչ որ պատուիրել էր նրան իր ժողովուրդը։

Ու Լոմ-Կադիրը լռեց։

Հասանը խօսել չկարողացաւ։ Մէկ բոշաներին էր նայում և մէկ գունատ պապին։

Վերջապէս Էլ-Մուինը շարժուեց և խօսեց այսպէս.

—Լսի՛ր, ի՛մ Հասան, թէ ինչ կ'ասէ քո պապը—Էլ-Մուինը։ Ո՛չ մի անգամ նրա բերանը չէ ստել և, փառք Ալլահին, նրա գլուխը գիտէ դեռ լաւ մտածել։ Թող իմանայ Հասանը, որ Էլ-Մուինը իր կեանքը նուիրել է նրան ինչպէս և ունեցածը։ Բայց նա չի կարող ծածկել և չասել քեզ ճշմարտութիւնը։ Իրաւունք ունին այս ծերունիները։ Քո մայրը, Օղիչուն, բոշայի աղջիկ էր և դու բոշա ես, իմ որդեգիր թոռը... Այս ծերունիները քո ցեղիդ իշխաններն են։

Հասանը ամէն ինչ երբ հասկացաւ, գլուխը կախեց և սկսեց երկար մտածել։

Ամէնքը լուռ էին։ Ամէնքն էլ մտածում էին։

Եւ ահա լանկարծ խմաստութիւնը խօսեց Հասանի մէջ։

Նա տաքի եկաւ, մօտեցաւ ծերունիներին և ասաց.

—Իմ ազգը ինձ պէտք ունի երևի։ Գնա՛նք, ծերունիներ, ես պատրաստ եմ։

Ապա մօտ գնաց ծերունի Էլ-Մուինին և համբուրեց նրա ձեռքը։

Էլ-Մուինը յուզմամբ գրկեց երիտասարդին, օրհնեց և ասաց.

—Գնա՛, որդեակ, Էլ-Մուինը յանուն Աստծոյ օրհնում է քեզ, իր խմաստուն որդուն, և բաց է անում իր դանձը նրա առջև...

Այնուհետև լոմ-Հասանը եկաւ իր ցեղակիցների մօտ և երկու օրից յետոյ, բոշաները, նրա առաջնորդութեամբ անցնում էին օսմանցոց երկիրը...

Ու հրամայեց Հասանը, որ այնուհետև իրեն լոմ-Հասան միայն կոչեն։

Լոմ-Հասանը խմաստուն էր, բոլոր խմաստունների չափ քաջ էր՝ որպէս Ռուստէմզալը. ազնիւ, բարի և անվախ։

Օսմանցու հողի մէջ բոշաները հանդիպեցին իրենց ցեղակիցներին։ Լոմ-Հասանը բարեկամացաւ մի զօրեղ ցեղապետի և ամուսնացաւ նրա Սարա աղջկայ հետ։

Սարան նոյնքան քաջ էր, որքան իր ամուսինը. նա՛յնքան անվախ ու համարձակ, կրակոտ և վառվռուն։

Սարան իր ամուսնուն նեցուկն էր, նրա ընկերն ու օգնականը...

Լոմ-Հասանը սիրեց նրան, տուաւ նրան իր խմաստութիւնը և ուզեց որ իր մահուանից յետոյ նա՛ լինէր ցեղապետը։

Ու Սարան, որին ցեղը սկսեց Խաթ-Սարա (տիկին Սարա) կոչել, լոմ-Հասանից յետոյ»...

... Այստեղ յանկարծ պատմիչը կանգ առաւ, որովհետև խոտերը բուռն կերպով խշխշացին, գամփռը ոռնեց և լուեց մի խուլ, ահեղ ձայն որ ասում էր.

—Այդ ո՞վ է նորից, որ մարդուս անունը իր բերանն է առել...

IV

Բոշաները բոլորը վեր թռան. պատմութիւնը կիսատ մնաց, իսկ խոտերի միջից երևելով նրանց առաջ յայտնուեց մի երկարահասակ խոշոր կին, ձեռքին ահագին յուպ, մէջքին կապած դօտու մէջ էլ տարբեռնակներ ու դաշոյն։

Պառաւ, բայց խիստ առոյգ կազմուածքով և միականի կին էր այն։ Գեղեցիկ եղել էր և այժմ ագեղ չէր, միայն շատ արևակէզ, խորշոմուտ ճակատով և կոչտացած գծագրութիւնով։

Միակ մեծ աչքը այնպէ՛ս փայլում էր, որ նայողին դող էր ազդում։ Երկար հասակը քիչ ծռել էր։ Զայնը խուլ էր և առնական. սոխուած բազուկները ջլապինդ, ձեռքերը կոշտ ու սեղմ, լայն կուրծքը խոշոր, թիկունքը ջղուտ և ամրապինդ։

Մի քայլ առաջ եկաւ նա, գննեց բոշաներին, մեծ յուպը ուսի վրայ դրաւ, ոտովը դէն շպրտեց քծնող գամփռին և ասաց.

—Երևի Մուրատն էր նորից։ Սիրո՛ւմ է նա հին վէրքերը պորպրել, հին առիւծների պատկերները կենդանացնել։ Լաւ է այդ, շա՛տ լաւ է, բայց ամէն ինչ իր ժամանակն ունի։

Ասաց, նայեց պահ մի դէպի վրանները և քիչ լռելուց յետոյ շարունակեց.

—Դաչտիցն եմ գալիս։ Նոր լուրեր եմ բերում։

—Զգուշացի՛ր այս կողմերում, Խաթ-Սարա, խօսեց մի ծերունի. Զիւինի շուրջը լիքն են աւազակ Բիւրտերով։

—Թո՛ղ խրատդ, ծերունի, նեղացաւ պառաւը և նստեց մի քարի վրայ.—Խաթ-Սարային ոչ ոք չի դպչիլ։ Ցնցոտի՛ են նրա հագուստները, գրպան չունին, իսկ ինքն էլ չափազանց ծեր է և տգեղ։

—Ի՞նչ լուրեր են բերածներդ, հարցրեց մէկը։

Խաթ-Սարայի դէմքը մթագնեց։ Անհանգստութեամբ շուրջը նայեց և խուլ ձայնով ասաց.

—Դաչտը լիքն է զինուորներով։ Զանգազի մէջ վրան խփել-նստել են հարկահաններ։ Հասան-Ղալայի բէգը փողի պէտք ունի և աւարի է ուղարկել մի մեծ խումբ գիշատիչների... Օ՛հ, հաւաքում են նրանք հարկ և պիտի տեսնել թէ ինչպէ՞ս սուգն ու չիւանը բռնել է ամէն տեղ։ Գիւղացիները գիւղը թողել՝ սարերն են փախչում... Զինուորները ձեռքն ընկածը իւրացնում են կամ աւերում... Զանգազցի երեք իշխաններին բռնել՝ գիւղից 7—800 ռակի դրամ են պահանջում...

—Եօթ-ութ հարի՛ւր... գոչեցին ամէնքը սոսկումով։

—Այո՛։ Ողջ Բասէնը ծախու հանես այժմ—դրա կէսը աւող չի լինի... Մերոնցից էլ Սերգօին բռնել են ու տարել...

—Օ՛հ... լուեց ամէն բերնից։

—Ի՞նչ են ուզում մեզնից. կանչեց մի ծերունի՝ մռայլ դէմքով. բոչան ի՞նչ ունի, որ ի՞նչ տայ։ Ո՛չ հող ունի նա, ո՛չ տուն և ո՛չ կայք...

Խաթ-Սարան ցոպը ոտքերի մէջ առաւ, պահ մի

սրա-նրա երեսին նայեց, չոյեց իր կողքը բռնող դամփուին և դառն ժպիտը դէմքին՝ ասաց.

—Երևի մեր ցնցոտիներն էլ մի բան արժեն... Գուցէ մեր տաւարներին են աչք դրել... Հող չունինք, բայց ուտելու մի կտոր հաց կայ... Սերգօին բռնել են, ոտներն ու ձեռները կապել, մի խրճիթ են գցել ու Զանգազցոց հետ փակել այնտեղ... Մենք հեռանալ այստեղից չենք կարող, մինչև Սերգօին չազատենք... Մեր մնացող ընկերներն էլ չեն երևում։ Վախենում եմ որ նրանց էլ դաչտում բռնած լինեն։ Ես դաչտից եմ գալիս։ Որոնեցի և չգտայ... Ըստ երևութին լոմերը ստիպուած պիտի լինեն յիրաւի լոմ-Հասանի կուիները պատմել միմեանց ու նման կուիների պատրաստուել... Խաթ-Սարան մտադիր չէ որևէ տաւար կամ նոյն իսկ ցնցոտի տալ բէգին... Լոմ-Հասանը սովորեցրել է լոմերին, որ հողը Աստծունն է, նրա արդիւնքը՝ արդիւնաբերողին միայն. աշխատողի արդիւնքը նրա ձեռքից խլելու ո՛չ ոք իրաւունք չունի... Այս օրէնքը աստուածային է... եւ եթէ լոմը այժմ թափառական է, պատճառն այն է, որ նրան տոիպո՛ւմ են լինել այդպէս։ Լոմ-Հասանը սովորեցրել է մեզ երազել հող. հո՛ղ ունենալ, վարել, ցանել ու հնձել և ո՛չ թէ մուրալ... Լոմը դեռ ո՛չ տեղ ունի և ո՛չ հող։ Վա՛յ մեզ, վա՛յ։ Բայց և վա՛յ նրան, ով լոմի աշխատանքը կը խլի։ Խաթ-Սարան դեռ չի՛ մեռել...

—Մենք մենակ չե՛նք թողնի քեզ, Խա՛թ. ասացին մի քանիսը։

—Դիտե՛մ, աղերք. ո՞ր լոմը այնքան ստոր կը լինի, որ մէջքը իր ընկերոջ մէջքին չտայ և չօգնի նրան թշնամու դէմ...

Յետոյ ոտքի ելաւ, ցոպը ուսին դրեց ու աւելացրեց.

—Իսկ առ այժմ, ողո՛ր, դաշտից մեր վառած կրակները երևում են. արդէն գիտեն, որ այստեղ մարդիկ կան: Բէգի հարկահանները մարդ են փնտռում որ տուրք առնեն... Անչուշտ կը գան այստե՛ղ էլ... թո՛ղ ուրեմն մի քանի հոգի առնեն մեր տաւարներն ու լեռների խորքը տանեն... Առանց տաւարի եթէ մնացինք, գուցէ կարողանանք առանց կռիւ, խաղաղ կերպով համոզել այդ դայլերին, որ մեզնից առնելու ոչինչ չկայ...

Մի քանիսները կասկածանքով թափահարեցին իրենց գլուխները:

—Ի հարկէ, ասաց մի ծերունի. թող տաւարները հեռացնեն. դա խելօք բան է:

—Այո՛, կրկնեց Խաթ-Սարան. մի լաւ հեռաւոր ձոր գտէք և քաշէք այնտեղ: Երեք-չորս հոգի հերթք է տաւարների հետ: Մէկը թող գնայ ու դայ, որ տեղը իմանայ և մեզնից լուրեր տանի:

Ասաց, ոտքի եաւ, յանկարծ նայեց ամէնքին և կանչեց անձկութեամբ.

—Ո՞ւր է Հասանը. նա՞ էլ դաշտումն է...

—Ոչ, ասաց պատմիչը. դաշտի կողմում պահպանութիւն է անում:

—Հրացան ունի՞ հետը:

—Ունի:

Պառաւը լայն չունչ առաւ: Դաշտ մնացողների վիճակը գիտէր, պահ մի վախեցել էր, որ իր մօտը մնացած միակ և սիրելի որդին էլ բռնուել էր:

Միայն այդ, կրտսեր տղան էր, որ մնացել էր մօր մօտ: Անդրանիկը մեռել էր և թողել էր աղջիկ-զաւակ սիրուն Օղիշուին, իսկ պառաւի միջնակը՝ Մարտոսը, վաղուց հեռացել էր մօտից, հաստատուել էր Էրզրումում, ամուսնացել էր այնտեղ ու քարհատութեամբ էր զբաղւում:

Խաթ-Սարային, իր վառաւոր ամուսնու մահուանից յետոյ, մնացել էր Հասան որդին, որ անզաւակ էր և Օղիշու թոռը, որ անհայր էր:

Լոմ-Հասանը վաղուց էր, որ սպանուել էր մի փառաւոր կռիւի մէջ՝ Քիւրդերի դէմ: Ցեղակիցների մէջ հրաչքներ էր պատմւում նրա մահուան մասին անդամ: Նա, մինչև մեռնելը, շատ քիւրդի դիակներ էր փռել շուրջը:

Իսկը Խաթ-Սարան ոչինչ չէր պատմում ամուսնու մահուան մասին: Մինչև իսկ այնպէս էր խօսում, որ կարծես կենդանի էր նա:

Այդ էր պատճառը, որ շատ բոյներ հաւատում էին թէ Լոմ-Հասանը կենդանի է ու պիտի յանկարծ յայտնւի իր ցեղի ամենավատ բոպէին՝ նրան օգնելու համար:

Խաթ-Սարան էր ժառանգել իր ամուսնու ցեղապետական իրաւունքները:

Լոմ-Հասանի կամքն էր այդ, որ սիրո՛վ հաստատել էր ցեղի վճիռն ու յանկութիւնը ևս: Սարան ընտրուել էր ցեղապետուհի: Եւ բոյները հպարտանում էին իրենց քաջ, անվախ ու լաւ ցեղապետուհիով:

Խաթ-Սարան թէև խիստ էր, պահանջող, բայց իր ցեղի պահպանութեան, նրա իւրաքանչիւր անդամի կեանքի համար պատրաստ էր մինչև վերջին չունչը կռուելու: Վատնդաւոր բոպէներին նա ամէ՛ն տեղ էր, ամէնքի՛ն հասնում էր, ամէնքին սիրտ տալիս ու օգնում:

Ու սիրում էին Խաթ-Սարային ամէնքը. սիրում և պատկառում նրանից:

Ոչ ոք չմտացաւ թէ ինչպէս էր կորել նրա մի աչքը: Մի օր պառաւը ցուպը ուսին՝ անհետացել էր և երկու օր ոչ մի լուր չէր եղել նրանից: Երկու օրից յետոյ վերադարձել էր նա՝ ձախ աչքը կապած մի չորով:

Մի ամսից յետոյ շորը բացուել էր և նրա տակ երևան եկել կոյր աչք—մի սև փոս...

Երբ հարցրել էին, պառաւը ապառնալից նայել էր հարցնողին և գոռացել.

—Ձեզ ի՞նչ։ Միայն լոմ-Հասանը կարող էր Սարայից հաշիւ պահանջել և լոմ-Հասանը այժմ չկայ...

Ու ամէնքը ստիպուել էին լռել։

V

Էրզրումի Դաւաղի դուռ կոչուող թաղում, Հայոց Մայր Եկեղեցուց քիչ ցած, գտնուում են մի շարք տներ, որոնցից միայն մէկն էր երկյարկանի՝ սրանից տարբեր առաջ։

Երկյարկ այդ տունն իսկ այլանդակ բան էր։

Առաջին յարկի արտաքին պատերի վրայ դունդ-դունդ ծեփուած կային աթարի կտորներ. իսկ երկրորդ յարկի ա՛չ լուսամուտը փեղկ ունէր և ոչ էլ փողոցի վրայ նայող դուռը։

Երևում էր, որ տէրը կիսատ էր թողել։ Ունեցել էր միայն քար։ Փայտեայ մասը պակասում էր լիովին։

Բնակութիւն կար, հետևապէս, միայն ներքին յարկի մի միակ ընդարձակ սենեակում։

Միանգամայն ամէն ինչ էր այդ սենեակը,— մառան, թոնրատուն, ննջարան, ճաշարան և փայտանոց։ Մինչև իսկ մի անկիւնը ախոռ էր դարձրած և այնտեղից մէկ-մէկ հնչում էր էշի զիլ զռռոցը։

Սենեակի մէջտեղ թոնիրն էր. քիչ հեռու՝ բարձր թախտ, ապա՝ ալիւրի մեծ դարանը, աւելի հեռու—

կարասիներ, դիզած ցախ, միմեանց վրայ կիտած լաւաշ հաց։

Գետնի վրայ՝ մերկ մանուկներ, ջրաման, աւել։ Բոլորը խառնուել էին միմեանց։

Թոնիրը վառում էր կարմիր չալէ զոգնոց կապած մի կին, որ զոգնոցովը հովահարում էր դէպի թոնիրը, ապա անցուդարձ անում կահ-կարասիքի միջով, ձեռքերով ծխալից աչքերի արցունքը սրբում, կիսերով մանուկների ճիչերը լռեցնել մտածում ու բոչայիրէն հաւուստ հայհոյանքներով արտայայտում իր ջղայնութիւնը։

Մինչ այդ, թախտի վրայ մեկնուած տղամարդը սկի՛ էլ չէր շարժւում։

Ձիրուխը բերնին, փստացնում էր ու երազում։ Իսկ երբ մանուկները ճիչերը մեծացրին—նա էլ բուռն հայհոյանքների դիմեց և հրամայեց կնոջը՝ աղմուկը պակասեցնել։

—Ի՞նչ անեմ, կանչեց կինը. էս անիծած թոնիրն էլ չի վառւում. գոնէ քիչ փուչ բերէիր սարերից։

—Ժամանակ չկայ, կի՛ն. խօսեց տղամարդը. չա՛ւ արա, մի բան տուր ուտելու. պիտի այսօր չա՛տ քար կտրել. Գէորգ աղան պիտի գայ և գնի։

Յետոյ, երբ տեսաւ որ թոնրի ծուխը սատկանում էր, ձիրուխը բերնին իջաւ և քայլեց դէպի դուռը։

—Դուանը կը նստեմ, ասաց նա կնոջ, երբ կերակուրը կը լինի—կանչիր։ Շո՛ւտ արա։

Ու դուրս եկաւ, մտադրելով նստիլ իր չինած տան առջև դրուած մեծ քարի վրայ։

Եկաւ, նորից կանգ առաւ՝ տունը դիտեց և պատրաստուեց նստելու, երբ յանկարծ սառած ու ապշած նայեց դէպի քարակոյտը, որ հեռու չէր տան դռնից։

Այնտեղ, մէջքը քարերին տուած, նստել-կծկուել

էր մի պառաւ կին, ոտքերի մէջ առած երկար ցուպ, կողքին՝ մի մեծ դամփռ։

Խոշոր մարմնով, բայց ցնցոտի հագած կինը աչքերը փակել՝ կարծես ննջում էր։ Փոշոտ էր, դունատ և յոգնած։

Երբ լսեց ոտնաձայն, ցնցուեց, մի միակ աչքը բաց արաւ ու նայեց։

Երկուսի ակնարկները հանդիպեցին միմեանց։ Տղամարդը սոսկումով ետ քաշուեց, իսկ պառաւը ոտքի ելաւ։

—Խաթ-Սարա՛... գոչեց ալամարդը։

Խաթ-Սարան մի քայլ արաւ դէպի նա և ասաց.

—Երևի «մայր» բառը մոռացել ես... Ա՞յս է տունդ։

Ու քայլեց դէպի դուռը։

Տանտէրը ջանաց ամենատելի կերպով նրա դէմը կտրել ու ասաց.

—Այստե՞ղ... ո՛չ, այստեղ մի՛ մտնիլ։..

—Այդպէ՞ս, կանգնեց Խաթ-Սարան—ո՞րտեղ ուրեմն կ'ընդունես մօրդ, որ յոգնել է և մի բաժակ ջուր խմելու պէտք ունի։ Այնուհետև կ'ասի քեզ նա իր ասելիքը, որի համար կտրել է երկու օրուայ ճանապարհ և եկել է այստեղ։

Որդին չփոթուել էր։ Զգիտեր ինչ անել։

Այդ միջոցին տան դռան վրայ երևցած կինը, տեսաւ որ ամուսինը խօսում էր մի պառաւի հետ, նայեց քիչ ու գոչեց.

—Կարող ես ներս գալ, Մա՛ռոս. թոնիրը կպաւ և կերակուրը տաքացել է։

—Ա՜հ, դարձաւ Խաթ-Սարան իր որդուն. դու ինձ խաբում ես ուրեմն. սա՛ է տունդ... Առաջ անցիր և մի՛ վախենալ, մայրդ երկար չի՛ մնայ քեզ մօտ. կը տեսնի հարսին և թոռներին՝ եթէ կան, մի բաժակ ջուր կը խմի... և ահա բոլորը։

Այդ ասելով նա ուղղակի ներս մտաւ, դամփռին մօտ կանգնեց, նստեց թոնրի եզերքում փռուած փսխաթի վրայ, ցուպը ծնկերին առաւ ու տանտիկնոջ դառնալով՝ ասաց.

—Հա՛րս, թէ թան ունիս՝ քիչ թան տուր. թէ չունիս՝ ջուր մի տան։

Մանուկները, որոնք Խաթ-Սարայի խօսելու ժամանակ դիտում էին նրան, յանկարծ ձեռքերը իրար խփեցին և մօտենալով՝ կանչեցին.

—Վա՛յ, բոչա՛ է եղել։

—Մէ՛կ աչք ունի, ծիծաղեց երկրորդը։

Մարտոսը երկու ուժգին հարուածներով հրեց նրանց հեռու և լռեցրեց։

Սակայն Խաթ-Սարան լսել էր և մի կատաղի ակնարկ ձգեց որդու վրայ։

—Որդինե՞ր են։

Ապա ժպտաց ու աւելացրեց.

—Սովորցրո՛ւ նրանց որ իրենք էլ բոչա են և որ մի աչք ունենալը ամօթ չէ՛ բոլորովին։

—Իրա՞ւ, հարցրեց այդ միջոցին տանտիկինը, որ պառաւին էր մօտենում և պարզում նրան պղնձէ թասով թանը. իրա՞ւ, դու բոչա՞ ես։

Խաթ-Սարան առաւ թասը, զննեց հարսին ու հարցրեց խստութեամբ.

—Իսկ դո՞ւ, մարդդ ու որդիներդ, բոչաներ չէ՞ք։

—Մենք բոչա չե՛նք, պատասխանեց հարսը. շատ էլ իմ ծնողներս բոչաներ են եղել, բայց ես բոչա չեմ։

Ցեռոց ձեռքը պարզեց թասը ետ առնելու և աւելացրեց.

—Թասը ե՛տ տուր. չդնե՛ս տոպրակիդ մէջ։

—Կնի՛կ... կանչեց նրա վրայ Մարտոսը։

Խաթ-Սարան նախ ապշած՝ նայեց հարսին։ Պահ մի

չհասկացաւ վիրաւորանքը։ Յետոյ զայրոյթից կարմրեց և բուռն ուժով թասը նետեց հեռուն ու ինքն էլ ոտքի ելաւ։

Այնքա՛ն սատիկ էր նրա բարկութիւնը և չարժումները, որ դամփուը սկսեց մռմռալ, իսկ հարսը վախեցած մի ճիչ արձակեց ու ետ քաշուեց։

—Մա՛րդ, ասաց նա ամուսնուն—ինչո՞ւ ներս թողիր սրան. հիմա տղաներիս մէկը կը տանի կամ մի բան կը գողանայ։

—Կնի՛կ... որոտաց Մարտոսը սոսկումով, կորի՛ր ձայնդ։

—Ո՛չ, ինչո՞ւ. ասաց Խաթ-Սարան, որ արդէն զսպել էր իրեն և ցուպն կոթնած՝ դառն ժպիտ դէմքին ու գունատ՝ նայում էր հարսին.—Ո՛չ, թող որ բո՛լորը ասի... Սա՛, սիրուն հարսս, էլ ի՞նչ կարող ես ասել բոչաների մասին։

—Դո՛ւրս գնա, ճչաց հեռուից հարսը. մարդուս խելքին ասա, որ քեզ ներս թողեց։

—Այդ ոչինչ, հարս, ժպտաց Խաթ-Սարան. եթէ մեղքս միայն այն է, որ բոչա եմ, ուրեմն բոլորս էլ մեղաւոր ենք, որովհետև, ինչքան կամենաս չլինել, բայց դո՛ւ էլ բոչա ես, այս մարդդ էլ, որդիներդ էլ։ Ուրեմն, եթէ ես տղայ փախցնող ու գող եմ, դուք էլ նոյնն է.ք...

Յետոյ, լիովին հանդարտուած՝ նստեց դարձեալ և դարձաւ որդուն.

—Բայց, ասաց նա չափելով նրան ոտքից մինչև գլուխ, ասա տեսնե՛նք, տղա, դուցէ դո՛ւ էլ չես կամենում բոչա լինել, հը՞... դո՞ւ էլ այնպէս ասում ես ցեղակիցներիդ, ինչպէս կինդ ու որդիներդ...

—Ե՞ս... թոթովեց Մարտոսը, ինձ համար բոլորն էլ մէկ են. բոլորն էլ մարդիկ են...

Խաթ-Սարան հեզնութեամբ նայեց որդուն, ծիծաղեց նրա չփոթութեան վրայ, յետոյ մէկէն դարձաւ հարսին և ժպտուն՝ ասաց.

—Իրա՛ւ, հա՛րս, մոռացայ քեզ ասելու, որ ամուսինդ իմ որդին է, իմ հարազատ որդին. դու իմ հարսն ես և որդիներդ էլ թոռներս... Ամէնքդ էլ բոչաներ ու չա՛տ մաքուր բոչաներ...

Իրը պատասխան դրան, թոռներից, մէկը, որ պահուել էր մօր ետեւը, յանկարծ գլուխը դուրս հանեց նրա թեւի տակից, միջահատեց տատի խօսքը և գոռաց.

—Շո՛ւն բոչա!...

Խաթ-Սարան ցնցուեց և կծկուեց։ Կարծես մի մեծ քար էր գլխին ընկնողը։

Շշմելու վայրկեանը սոսկալի էր։ Յետոյ, երբ ընդհանուր քարացումն էր, ծանր, կքուած՝ ոտքի ելաւ նա, ինճուղից ու թախծոտ՝ առաւ ցուպը, մօտ գնաց որդուն ու ասաց խստութեամբ.

—Այդ դո՛ւ ես դրանց սովորեցրել այդպէս, չէ՞... դո՛ւ և կինդ...

—Փողոցից, փողոցից... կմկմաց որդին։

—Հա՛յրիկ, գոչեց այն կողմից երկրորդ որդին, ես էլ ասե՞մ «շո՛ւն բոչա»...

Խաթ-Սարան աւելի կքուեց կարծես ու դէպի մանուկը գնացող որդու թեւը բռնեց։

—Ո՛չ, մի՛ խիլ. ի՞նչ օգուտ ունի, ասաց նա. ոչինչ. ամէնքը հայհոյում են մեզ, այժմ թո՛ղ և մեր զաւակները կրկնեն այդ հայհոյանքները...

Ապա չունչ առաւ քիչ և աւելացրեց հանդարտ։

—Լսի՛ր որ ասեմ թէ ինչու եկայ... Մեր ցեղից, քո ազգականներից, կառավարութիւնը ի զուր տեղ բռնել է տասը մարդ և բանտ դրել։ Հասան-Ղալայի բէգն է սնօրինողը։ Ասացին որ դու մտերիմ ես նրան։

Զգիտեմ ինչպէս, ինչու, բայց մտերիմ ես մի այդ-պիսի գաղանի... Ասա՛, չե՞ս կարող ազատել մերոնց... Քեզ խօսք եմ տալիս, որ այնուհետև այլևս երբէ՛ք չես լսել իմ կամ մերոնց մասին։ Մենք Ռուսի հողը կը գնանք... Արա՛, եթէ կարող ես...

Մարտոսը պահ մի չպատասխանեց ու մտածեց։ Խաթ-Սարան անձկութեամբ նայում էր նրան և սպասում։

—Բարեկա՛մ եմ բէգի հետ, ասաց վերջապէս որ-դին, բայց չեմ կարող... փո՛ղ պէտք է դուրսի մէջ մոցնել. ուրիշ կերպ անկարելի է... չի՛ անիլ։

—Ուրիշ կերպ չի՞ լինիլ... Ասացին, որ կարող ես դու. բէգը քեզ չա՛տ բանով է պարտական... եկա-մուտի աղբիւրներ ես տալիս նրան...

—Սո՛ւտ է... ես ոչինչ չեմ կարող և փող էլ չունիմ։

Խաթ-Սարան գլուխը կրծքին խոնարհեցրեց պահ մի ու մնաց լուռ։

Քիչ յետոյ նա նայեց խստութեամբ որդուն ու ասաց բարկութեամբ.

—Զգում էի որ պիտի մերժէիր... Մնաս բարև ուրեմն. կայ և մի ուրիշ միջոց և դա գուցէ ամենա-լաւն է. լսմերը կը դիմեն ա՛յդ միջոցին... բայց, սկսած քո մօրից մինչև յետին լսմը անիծում է քեզ՝ լինի նա ազատ թէ դերի։ Վախեցի՛ր այդ անէծքից, որովհետև մօրդ անէ՛ծքն էլ կայ նրանց հետ խառն...

Ասաց, գլուխը խոնարհեցրեց և արագ քայլերով դուրս գնաց։

Գամիրը նայեց Մարտոսին, աչքերը ցոյց տուեց, մռմռաց և հեռացաւ տիրուհուն։

Ու Խաթ-Սարան գնաց առանց ետ նայելու և անհետացաւ փողոցների մէջ...

VI

Դաշտում ետ մնացող բոշաներին հարկահաններին խուզարկու զինուորները բռնել էին և բանտարկել Զանգազ։ Պատճառը յայտնի չէր։ Հրամայուած էր բանտարկել թափառիկ և կասկածելի անձերի և նրանց բանտարկել էին։

Միւս կողմում լեռներից դաշտ իջնել փորձող բոշաներին նոյնպէս բռնում էին։

Բոշաները ստիպուած էին բանջարներով կերակրուել, կրակ չվառել և դող ի դող, ամէն րոպէ սպասել փորձանքի։

Հեռանալ չէին ուզում. ընկերներին պէտք էր նախ ազատել։

Եւ երբ եղած պաշարը մէկտեղ բերին ու հասարակաց դարձրին, ծերունիները մի գիշեր ժողով կազմեցին և Խաթ-Սարայի վրանը մտան։

Խորհուրդը վերջացաւ նրանով, որ Խաթ-Սարան ցուպը ձեռքն առաւ, գամփռին սուլեց և ամենակարճ ճանապարհով գնաց Էրզրում։

Գիտէր որ մեծ որդին մտերիմ էր Հասան-Ղալայի բէգին։ Մտածեց իւրայիններին մի կերպ ազատել։

Խորհուրդը վճռել էր իւրայիններին բանտից մի կերպ հանել և խսկոյն, մի գիշերուայ մէջ՝ անցնել ռուսաց հողը։

Ուրիշ հնարք չկար։

Եւ երբ Խաթ-Սարան որդուն խնդրելու անօգուտ փորձի համար Էրզրում էր գնացել—Զիւմնի մէջ լցած զինուորներից մի խումբ, պատահմամբ Զիւմնի-տիւզը ելներով՝ բոշաների տեղը երևան հանեց։

Խումբը չրջապատեց բոչաներին և իրենցից մէկին ուղարկեց դաչտ, Զանդազուում նստած բէգին իմացնելու, որ տուրքի նոր աղբիւրներ էին գտնուած։

Միւս առաւօտեան Հասան-Ղալայի բէգը քսան գինուած ձիաւորներով Զիւլինի հարթավայրը եկաւ և իջաւ ամենապաշ վրանի տակ։

Բոչաները դողդողալով սպասում էին։ Կանայք չէին երևում, իսկ մանուկները խումբ առ խումբ թագնուած խոտերի մէջ և թփերի ետևը, դիտում էին լինելիքը։

Բէգը հրամայեց որ ցեղի ծերունիները իր մօտ գան։

—Ո՞վ է ձեր ցեղապետը, հարցրեց նա։

—Այստեղ չէ, խօսեց մէկը. նա Էրզրում է գնացել։

—Ի՞նչ է անունը։

—Խաթ-Սարա։

Բէգը նախ զարմացաւ, յետոյ մի մեծ քրքիջ արձակեց։ Գրագիրն ու հետը եկած հարկահաւաքն էլ պարտք համարեցին ծիծաղել։

—Այդ ի՞նչ այլանդակ անուն է, գոչեց բէգը։

—Զարմանալի անուն, վրայ տուաւ գրագիրը։

—Անասունի անուն է, աւելացրեց հարկահաւաքը. դրանց ցեղապետը կամ մի շուն կը լինի և կամ էշ... Սրանք հայ-բոչաներ են։

Ու բոչաները կանգնած խմբովին՝ խոնարհաբար լսում էին այդ ամէնը։

—Ապա՞... ծիծաղեց բէգը և ճաչակեց կարագը, որ մի զափթիէ, մարակի հարուածների շնորհիւ, գտել էր մի վրանից. ապա՞, ասէք տեսնենք, ձեր ցեղապետը ի՞նչ տեսակ ջանաւոր է։

—Կին է, ասաց ծերունին։

—Կի՞ն, գոչեց բէգը զարմացած։

—Կի՞ն, առանց բեխերի՞, չրջազգեստով կի՞ն. խօսեց գրագիրը և բերանը բաց մնաց։

—Հեռաքրքիր է, դիտեց հարկահաւաքը։

Ու լռեցին, որովհետև բէգն էլ լռել՝ կարագ էր ուտում ու մի կողմից գինում բոչաներին։

Զինուորներն այդ միջոցին ձիերից իջել, ոտները կապել ու արածելու էին թողել վրանների առաջ։ Իրենք վրանից վրան մտնում և ուտելու բան էին որոնում։

Եւ երբ չգտան, ստիպւած եղան իրենց պայուսակից հանել հաց ու պանիր և անօթի բոչաների առաջ նստել-ուտել։

Այդ միջոցին բէգը ամբողջովին զբաղուած էր կարագով։ Ուտում էր և ասում.

—Համով կարագ է... Սրանց տաւարները երևի շատ լաւ կաթ են ունենում։

—Ծաղի՛կ է կերածնին, էֆէնդի՛մ, նկատեց հարկահաւաքը։

—Երևի բաւակա՞ն տաւար կ'ունենան, մէջ մտաւ գրագիրը... Նախ կովեր ու ոչխարներ։ Սա ոչխարի կարագ է։ Յետոյ կ'ունենան ձի, էշ կամ ջորի, վրաններ ունին և անչա՛ւչա իրենք չեն այդքան բեռը տեղից-տեղ փոխադրողը...

Բէգը, կարծես զմայլմամբ, նայում էր իր գրագրին։

—Աֆֆէրի՛մ, սիրելի՛ս. գոչեց նա. յետո՞յ, յետո՞յ։

—Յետո՛յ, էֆէնդիմ, կ'ունենան նաև եղներ. ես այնտեղ, ցաժում 2—3 տայ տեսայ։

—Ապա՞, ի՞նչ կ'ասէք սրան, բոչա՞ներ. դարձաւ բէգը կանգնած ծերունիներին. աւելի լաւ է ճիշտը խոստովանեցէք, թէ չէ՝ գրագիրս մէկ-մէկ կը հաշուի ձեր բոլոր ունեցածը։

—Ճշմարիտ է, էֆէնդի՛, ասաց մի բոչա. ունէինք մօտ 20 ոչխար, 5—6 կով, 6—7 ձի, յետոյ՝ էշեր,

ելներ... բայց մեր ամբողջ նախիրը երկկ քշեցին տարան Բիւրդերը...

Բէգի աչքերը փայլեցին։ Նա հարկահաւաքին դարձաւ ու ասաց.

—Սա քեզ վերաբերեալ բան չէ կարծեմ. կառավարութիւն հաշուի մէջ չեն մտնում բոշաները...

Յետոյ գրագրին նայեց ու ժպտեց.—Իսկ դո՛ւ, սիրելիս, սա մեր անձնական հաշուի հարցը դարձրու... Գրիր այդ ամէնը... Ուրեմն, 20 ոչխար, 6 կով...

—Բայց բէգ, զոչեց բոշաներից մէկը. այժմ ոչինչ չունենք. բոլորը տարան...

—Աստծու բանն է այդ.. խօսեց բէգը. բայց ուներեցել էք մինչև երկկ և նրանք կառավարութեան հողի վրայ են արածել, ձեզ կերակրել են... Հաշուի՛ր, գրագի՛ր, 8 եզ...

—Ուրթ հատ չէին, բէ՛գ, ասաց նորից մի ծերունի բոշա—և յետոյ, երկրագործութեան անասուններից հարկ չեն վերցնում...

—Դու լո՛ւռ կաց, քաֆտա՛ռ, և ապասիր որ քեզ խօսեցնեն... Մենք յիմար չենք և գիտենք որ բոշաները չեն զբաղւում երկրագործութիւնով... Գրեցի՞ր, գրագի՛ր...

—Լա՛ւ, սկսեց քիչ-քիչ ոգևորուել բէգը և դարձաւ բոշաներին. ասացէք ճիշտը, անպիտաննե՛ր, քանի՞ անձ կայ վրաններում, կին, երեխայ և տղամարդ... ճիշտ ասէք, եթէ չէք ուզում որ զինուորներիս ձեր վրանների վրայ բաց թողնեմ...

—Տանեւութ տղամարդ ենք, բէ՛գ, պատասխանեց ծերունին. բայց 30ից աւելի էլենք. մեզնից տասը հոգու ձեր հրամանով բռնել են դաշտում, իսկ երկուսին Բիւրդերը սպանեցին։

—Ուրեմն 35 տղամարդ. իսկ կանա՞յք։

—Մօտ 20։

—Սո՛ւտ է, անիծեալ. 35 տղամարդ ունեցող խումբը 40ից աւելի կանայք կ՚ունենայ...

Ասաց և տոքի եաւ։ Դէմքի վրայ խաղում էր ինչ որ չար ժպիտ։ Բէգը երևի, նոր բան էր մտածել։

—Ահմէդ էֆէնդի՛, դարձաւ նա գրագրին. մենք հրամայում ենք ձեզ՝ առնել ձեզ հետ 5—6 զինուոր և, այս ծայրից սկսած՝ մտնել բոլոր վրաններն ու ցուցագրել բոլոր անձերին, կանանց, աղջիկներին... իսկ առ այժմ, դարձաւ նա բոշաներին, կորի՛ք աչքիցս և ամէն մարդ թող իր ընտանիքի մօտ գնայ...

Բոշաները վրանի առջևից հեռացան։ Բէգը հրամայեց կանչել զինուորների յինսպեկտորին և մանրամասն պատուէրներ տուաւ նրան։

Յինսպեկտոր ծիծաղը դէմքին դուրս եկաւ վրանից և քիչ յետոյ զինուորները հրացան ի բռին՝ չղթայի նման շրջապատեցին վրաններն ու սկսեցին կամաց-կամաց չղթան սեղմել։

Եւ ահա ամէն ինչ խառնուեց միմեանց։ Այլևս յինսպեկտոր չկարողացաւ իր ճիչերովը կարգ ու կանոն պահպանել։ Թարանի տենչը զինուորներին մղեց դէպի վրանները։

Ու սկսեցին տակն ու վրայ անել նրանք ինչ որ դատն։ Ուղղակի մերկացնում էին տղամարդկանց, կանանց հագուստների մէջ էին սպրդեցնում իրենց կեղտոտ ձեռքերը և դարձելի ժպիտով ժպտում նրանց արձակած ճիչերի վրայ...

Հարկատուն էլ իր գործն էր տեսնում։ Արձանագրում էր, որ յետոյ կէսը պահանջի գոնէ։

Բոշաները սոսկումը կրծքերում փախչում էին այս այն կողմ, զինուորների հրացանների կոթերից մղած՝ նորից ետ գալիս, մանուկների վայնասունը կանանց ճի-

չերի հետ՝ սարահարթն էր բռնել, իսկ բէգը կանգնել վրանի առաջ՝ ծիծաղում էր։

Գրագիրը ո՛չ միայն արձանագրում էր անձերին, այլև հրամայում էր դասարկել վրանները։

Սկսեցին դէղեր կազմել կաթսաներ, կապերտներ, բարձեր... Զինուորները կոպտաբար բռնում էին աղջիկներին, պոկոտում նրանց վրայից որևէ զարդ, որևէ բան՝ շոր, կօշիկ, թաշկինակ...

Մի զզուելի խառնուրդ, մի սոսկալի ու վայրենի խառնուրդ էր այն։

Մինչ այդ, գրագիրը, որ ուշադրութեամբ գնում էր ամէն կնոջ դէմք, յանկարծ մօտ կանչեց երկու զինուորի, ցոյց տաւ վրաններից մէկից դուրս եկող մի աղջկայ և ասաց.

—Բռնէք դրան և բէգի վրանը տարէք...

Ու զինուորները վազեցին դէպի աղջիկը։

Բայց երևի նրանք բոչա կնոջ ինչ լինելը չգիտէին դեռ։ Ենթադրում էին, որ հեշտ էր բռնել աղջկան։

Յանկարծ աղջիկը գլխի վրայ պտտեցրեց ձեռքի ցուպը, ապա թռցրեց երկու անգամ և զինուորները օգնութեան աղաղակը բերաններին՝ փուեցին գետին։

Այդ անակնկալը այնպէս յանկարծակի բերաւ ամէնքին, որ մի բոպէ կանգ առին թալանն ու հետապնդումները։ Բոլոր զինուորները սառած մնացին, գրագիրը գունատուեց և բնազդաբար ետ-ետ քաշուեց։

Մինչ այդ, աղջիկը, որ մի գեղեցիկ մատաղաշ արաբած էր, ժողովից փէչերը, գունդ արաւ մէջքի շուրջը, թևերը սոթոեց և գոչեց վրանների առաջ կիսաւած բոչաներին.

—Էյ, լոմե՛ր, կատարէք դուք ու անիծէք ձեր ամբողջ սերունդով, որ ոչխարների նման թոյլ էք տա-

լիս մորթեն ձեզ այս անիրաւները... Իմ պապ Լոմ-Հասա՛նը վկայ, եթէ տատս այստեղ լինէր, առաջ ձե՛ր գլուխները կը ջարդէր. այդ խոնա՛րհ գլուխները...

Խօսում էր նա բոչայերէն։ Ո՛չ գրագիրը, ո՛չ բէգը և ոչ զինուորներն էին հասկանում, բայց ամէնքն էլ լուռ ու հմայւած էին կարծես աղջկայ բոցափայլ աչքերից։

Բէգը ուղղակի բերանը բաց՝ հիացած մնացել էր։ Եւ երբ յիսնապետը շարժում գործեց առաջ գնալու, բռնեց նրա թեւն ու ասաց.

—Ո՛չ, սպասի՛ր, թող ոչ ոք չդպչի դրան։ Նա իմն է. սարի այդ մարալը իմ որսն է և ուզում եմ դեռ որ խօսի...

—Կարի՛ր ձայնդ, լիրը քաֆտա՛ռ, դարձաւ նրան աղջիկը միշտ բոչայերէն. եթէ մերոնք մարդ լինէին, դու այժմ մեր կոխած տեղը պիտի համբուրէիր։

Բէգը մօտենում էր։

—Ո՞վ ես դու, սիրուն աղջիկ, ասաց նա քաղցրութեամբ. մի՛ բարկանալ, քեզ ոչ ոք վնաս չի հասցնիլ։

—Մեր ցեղապետի թոռն է, ասաց նրան աւելի մօտ կանգնած մի բոչա. նա թուրքերին չգիտէ։

—Ասա՛, նրան, բոչա՛, որ եթէ համաձայնի ինձ մօտ գալ, ես նրան թագուհու պէս կը պահեմ...

Եւ երբ բոչան թարգմանել էր այդ, աղջիկը մի քայլ մօտեցաւ դէպի բէգը և յանկարծ թքեց դէպի նա։

Բէգը ցնցուեց ու ձեռքով արաւ յիսնապետին։

Զինուորները մօտ գնացին։ Աղջիկը բարձրացրեց ցուպն ու ետ-ետ քաշուեց...

Սկսեց հետապնդում։ Աղջիկը մէջքը դարձրեց ու սկսեց փախչել. զինուորները ետևից ընկան։

Ու բոչաները որոնք ակամաւս էին այդ ամէնին, խմբւած՝ սկսեցին յուզմամբ խօսել միմեանց հետ։

Ցանկարծ սարահարթի վերի կողմից լուեց մի երկար աղաղակ և ժայռի մօտ յայտնուեց մի երկար հասակ։

Ամէնքը դէպի այն կողմը դարձան։

—Խաթ-Սարան... գոռացին բոչանները։

Կանայք անմիջապէս կորզեցին իրենց ցուպերը, աղամարդիկ վարկենապէս զինուեցին ինչով որ կարողացան...

Եւ վերջապէսի այդ պահուն, սարահարթի վրայ իջնող մթութեան մէջ, հրացաններով զինուած, բայց խակապէս իրենց կեանքի համար դողացող զինուորների դէմ, կարծես կախարդութեամբ՝ երևան եկաւ մի տարօրինակ կուռ խումբ։

Խումբի առջևը նախ կանգնած էր մի երկարահասակ միակնեայ պառաւ կին, կողքին հրաշալի գեղեցկութիւնով աղջիկ։

Երկուսի ձեռքին էլ սպառնալից ճօճում էին երկար, ամուր ցուպեր։

Նրանց ետևում չաբուած էին կատաղի դէմքերով, էգ առիւծներու նման պատրաստ ոստնելու՝ 30—40 կանայք, նոյնպէս զինուած մեծ, խոշոր, իւրաքանչիւր հարուածը մահաբեր դարձնող մահակներով։

Եւ վերջապէս, որպէս վերջապահներ երևում էին աղամարդիկ՝ որոնց ձեռքին փայլում էր և՛ բահ, և՛ լծակ և նոյն իսկ տապարներ։

Ու երբ մութը կոխում էր լեռներից, սև մշուշն իջնում էր սարահարթի կողերից ու ծածկում շրջակայքը, լուեց Խաթ-Սարայի խռպոտ ձայնը, որ ասում էր իւրայիններին.

—Միևնոյն է, լսմե՛ր. այլևս ո՛չ մի տեղից օգնութեան յոյս չկայ։ Թող մէկը գնայ մեր տաւարները պահողների մօտ և պաւիրի անցկացնելու նախիրը.

դէպի ռուսի հողը... Իսկ մե՛նք, ժողովենք մեր վերջին ճիգը, թողենք այս հողի վրայ մեր վրանները և աղատենք մեզ անպատուութիւնից, խայտառակութիւնից... Ով սիրում է իր պատիւը, թող մեռնել գիտենայ.....

... Սրանից տարիներ առաջ մի ճանապարհորդ, որ շրջում էր սահմանագլխի կողմերում, մի գիշեր հիւրընկալուեց մի բլրակի գլխին գտնուող հայ բոչանների վրաններում։

Որովհետև ամառ էր և ցաւում խոտը պակասել էր տաւարներին, հայ բոչանները եկել էին գիւղից և 30ի չափ վրաններ թողել սարի գլխին։

Ու այնտեղ ճանապարհորդին կերցրին, յետոյ, երբ մթնեց, հրաւիրեցին գիւղապետի վրանի առաջ, ուր սովորութիւն ունէին բոչանները ամէն երեկոյ հաւաքուել, նստել, պատմութիւն ու հէքեաթ պատմել և զարճանալ։

Այնտեղ շրջան էին կազմել արդէն ամէնքը և լսել էին պատրաստուում պատմչին։

Փչում էր մի զով քամի։ Երկինքը պարզ էր և լուսինը պայծառ լուսաւորում էր։ Հեռում, տաւարների պահապանները շչացնում էին երբեմն և շները մէկ-մէկ հաչոցներով խանգարում էին լեռնային չքնաղ լռութիւնը։

Պատմիչը հազաց, ծխեց վերջին անգամ չիբուխն ու սկսել կամեցաւ, բայց գիւղապետը ասաց.

—Մե՛կ, ինչ ես պատմելու այսօր։

—«Փիր»ի պատմութիւնը։

—Հա՞... լաւ էլ կ'անե՛ս։ Մարդ որքան լսում է, չի կշտանում։

Ու բոչան պատմում էր։

«—Այնտեղ, մեր եռեւի լեռներից հեռու, Զիւլինի լեռնաշղթայի վերջին գագաթի լանջին, կայ մի վայրենի վարդենու մեծ թուփ, որ տարին մի անգամ տալիս է բազմաթիւ սպիտակ անուշահոտ վարդեր, բայց ճիւղերը աւելի թանկագին և աւելի լա՛ւ վարդերով են զարդարուած...

Իւրաքանչիւր լոմ թփի մօտով անցնելիս՝ պահ մի նստում է նրա հովանու տակ, ապա, կտրում է իր հագուստից—իր սրտից ու զգացմունքներից մի կտոր, կապում թփի ճիւղերին, աղօթում է և հեռանում։

«Փիր»ի գերեզմանն է այդ. լոմերի սուրբի շիրիմը։

Այնտեղ է, որ թաղուել է մի կին, մի քաջ կին։ Եւ իւրաքանչիւր լոմ, երբ պատահում է նրա վրայ դիզած քարակոյտին և կամ հեռուից տեսնում է գերեզմանի վրայ բուսած թուփը—անչուշտ յիշում է լոմերի քաջ ցեղապետուհուն, անմահ Խաթ-Սարային։

... Հեռու, Իրանի հողից էր. եկել Լոմ-Հասանը։ Եկել ու իր կեանքը միացրել էր քաջ Խաթ-Սարային։ Ու երբ մեռել էր, կնոջն էր յանձնել Լոմերի կառավարութիւնը։

Եւ Խաթ-Սարան քսան անգամ ազատել էր իր ցեղը կորստից, քսան անգամ աշխատել էր հանել նրանց թափառականութիւնից ու քսան անգամ տուրծի նման՝ պաշտպանել էր իր կորիւնները...

Ու ճակատագիրը հանդիստ չթողեց լոմերին ո՛չ մի տարի և ո՛չ մի օր։

Խաթ-Սարան կորցրեց որդիներին, կորցրեց ամէն ինչ, բայց չկամեցաւ թողնել ոչնչանալու իր ցեղին, չկամեցաւ արատաւորելու թոյլ տալ լոմերի նամուսը։

... Մի վերջին անգամ նա գլուխ անցաւ մի բուռ քաջերի, կուելով աշխատեց հեռանալ դժբաղդ երկրից, լեռների այն կողմից և անցնել ու անցկացնել իւրայիններին այս կողմը։

Զօրքը, կողոպտող ու վատ բէգը ընկան նրա ետեւից։

Խաթ-Սարան կուելով բարձրացաւ լեռները։

Եւ երբ Զիւլինի գլուխը, վերջին գագաթին էր հասել, ճանապարհին թողել էր նա իր խումբից չատերին, սակայն և ջնջել էր հետապնդող զօրքից մեծ մասին։

Ու խումբը գիշերել էր Զիւլինի գլխին։

Խաթ-Սարան տխո՛ւր էր, տխուր. զգում էր որ դաշտն այլեւս չպիտի տեսնի։ Գիշերը երազ էր տեսել, որ Լոմ-Հասանը կանչում էր նրան։

Եւ զգաց որ մեռնելու էր։ Կանչեց թոռանը, բռնեց նրա ձեռքը, օրհնեց ու ասաց.

—Հո՛ղ ունենանք, որդիներս...

Կանչեց լոմերին, խրատեց նրանց ու ասաց.

—Հո՛ղ ունեցէք, զաւակներս. ձեր փրկութեան միակ միջոցը հողն է...

Գիշերը յանկարծ զօրքերը պաշարեցին յոգնած ու անօթի լոմերի խմբին։

Խաթ-Սարան առաւ իր ցուպը և մի վերջին անգամն ևս իր շուրջը դիակներ փռեց։

Ու երբ զօրքը փախչում էր, լոմերը անցնում էին սահմանը, Խաթ-Սարան վէրք ստացած կրծքից՝ մեռնում էր։

Կէս գիշերին Խաթ-Սարան նորի՛ց մօտ կանչեց բոլոր լոմերին, բարձրացաւ, օրհնեց ու ասաց կրկին.

—Հո՛ղ ունեցէք...

Եւ մեռաւ։

Լոմերը թաղեցին նրան այդտեղ ու վարդենու մի թուփ տնկեցին նրա քարակոյտի մօտ։

Ապա իրենց հագուստներից կարեցին, կապեցին լամերը վարդենու թիփին, լացին հերոսուհու վրայ և գնացին...

Անցան տարիներ։ Խաթ-Սարայի իւրաքանչիւր քաջուհիներն մի-մի հէքեաթ է լամերի համար։

Կը պատմի ձեզ նրանցից իմ որդին էլ, կը պատմի և թոռը. կը պատմի իւրաքանչիւր լամ։

Նրա գովեստը կ'երգեմ ես ձեզ, կ'երգի լամ մանուկը, կ'երգեն և քարերը։

Իսկ այժմ կ'երգի նրան Մարգօն, կը լսեն լամերը և կը պարծենան։

Կը լսեմ և ես, ձեր ծերունի պատմիչը. կը լսեմ և կ'ուրախանամ»...

... Ու երբ պատմիչը լռեց, Մարգօն, որ մի լաւ ձայն ունէր, կոկորդը մաքրեց։

Փչում էր զով քամին, փայլում էր լուսինը, հովիւը պպզացնում էր իր չիբուխի կրակը, հեռւում՝ խոխոջում էր գետակը։

Եւ երգում էր Մարգօն, երգում քաղցրաձայն.

Զիւինի թուփ, ղուրբա՛ն վարդիդ,
Ո՞վ կը հասնի քո փառիդ...

Ապա դէմքը դարձնում էր դէպի Զիւինի հեռաւոր գագաթներն ու աւելացնում ոգևորութեամբ.

Զիւինի թուփ, ղուրբա՛ն վարդիդ,
Ղուրբա՛ն Փիրին ծածկող հողիդ...

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUP ՀՍՍՀ
Հ. Հովհաննիսյանի անվան

ՀՀ Ազգային գրադարան
NL0666585
ՀՀ Ազգային գրադարան
NL0666584
ՀՀ Ազգային գրադարան
NL0666583
ՀՀ Ազգային գրադարան
NL0666582